

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Եվրոպական միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում

Միջնասնագիտական հետազոտություն

Սույն հրատարակումն իրականացվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հրատարակման բովանդակության համար պատասխանատու է միայն Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2009

ՀՏԴ 341
ԳՄԴ 67.91
Թ 988

Փորձագիտական խմբի ղեկավար և խմբագիր՝ **Արթուր Ղազինյան**, ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Փորձագիտական խմբի համակարգող՝ **Վլադիմիր Մարտիրոսյան**, ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի փոխտնօրեն, քաղաքական գիտությունների թեկնածու

Փորձագետներ՝

Նարեկ Գալստյան	(քաղաքագետ փորձագետ, քաղաքական գիտությունների թեկնածու)
Արման Սարգսյան	(իրավաբան փորձագետ)
Աննա Հակոբյան	(իրավաբան փորձագետ)
Լիլիթ Հակոբյան	(քաղաքագետ փորձագետ)

Տվյալ հետազոտական աշխատանքին մասնակցել են նաև Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի Եվրոպական ուսումնասիրություններ մագիստրոսական ծրագրի ուսանողուհիներ Մարինե Էջուրյանը և Ամալյա Հովսեփյանը:

Թ 988 Եվրոպական միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում: Միջմասնագիտ. հետազոտ.— Եր.: ԵՊՀ հրատ., 2009, 136 էջ:

Սույն միջմասնագիտական հետազոտությունը նվիրված է ԵՄ-ի անվտանգության ռազմավարության համատեքստում հարավկովկասյան քաղաքականությանը, դրա վրա ազդող հիմնական գործոններին և հեռանկարներին: Այն նախատեսված է ԵՄ-հարավկովկասյան երկրներ հարաբերությունների մեջ ներգրավված պետական և ոչ պետական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և պետական ծառայողների, ակադեմիական շրջանակների, ինչպես նաև մշված ոլորտում մասնագիտացած փորձագիտական և հետազոտական հաստատությունների համար:

ԳՄԴ 67.91

ISBN 978-5-8084-

© Եվրոպական իրավունքի և
ինտեգրման կենտրոն, 2009
© ԵՊՀ հրատ., 2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
ԳԼՈՒԽ 1. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	13
1.1 «Եվրոպական արտաքին քաղաքականության» ձևավորման նախապատմությունը	13
1.2 Եվրոպական Միության Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը	16
1.3 Եվրոպական ընկերակցության արտաքին իրավասությունը	26
1.4 Եվրոպական Միության առաջին և երկրորդ հենասյուների փոխկապակցությունն արտաքին քաղաքականության ոլորտում	41
ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓԵՐԸ	45
2.1 Հարավկովկասյան երկրների հետ Եվրոպական ընկերակցության համագործակցության իրավական պլատֆորմը	45
2.2 Եվրոպական Հարևանության Քաղաքականությունը	49
2.3 Արևելյան գործընկերություն	53
ԳԼՈՒԽ 3. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՍԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	65
3.1 Հարավային Կովկասի ռազմավարական նշանակությունը ԵՄ-ի անվտանգության քաղաքականության համատեքստում	65
3.2 Եվրոպական Միության շահերը Հարավային Կովկասում և տարածաշրջանային հիմնական դերակատարների վերաբերմունքը	76
3.3 Հարավային Կովկասը Եվրոպական էներգետիկ և հաղորդակցային անվտանգության քաղաքականության համատեքստում	90
3.4 Եվրոպական Միությունը և հարավկովկասյան հակամարտությունների Եվրոպականացման հիմնախնդիրը	109
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	130

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ

ԱԱԵՌԻ	Արագ արձագանքման եվրոպական ուժեր	ERRF	European Rapid Response Force
ԱԳ	Արևելյան գործընկերություն	EP	Eastern Partnership
ԱԵՄ	Արևմտաեվրոպական միություն	WEU	Western European Union
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	USA	The United States of America
ԱՊԵԸ	Ածխի և պողպատի եվրոպական ընկերակցություն	ECSC	European Coal and Steel Community
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն	CIS	The Commonwealth of Independent States
Բենիլուքս	Բելգիա, Նիդերլանդներ, Լյուքսեմբուրգ	Benelux	Belgium, The Netherlands, Luxembourg
ԲԹՋ	Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ	BTJ	Baku-Tbilisi-Jeihan
ԳԾ	Գործողությունների ծրագիր	AP	The Action Plan
ԳՀՀ	Գործընկերության և համագործակցության համաձայնագիր	PCA	The Partnership and Cooperation Agreement
ԵԱՀԿ (ՄԽ)	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (Մինսկի խումբ)	(MG) OSCE	(The Minsk Group of) The Organization for Security and Co-operation in Europe
ԵԱՌ	Եվրոպական անվտանգության ռազմավարություն	ESS	European Security Strategy
ԵԸ	Եվրոպական ընկերակցություն	EC	European Community

ԵՆ (ԽՎ)	Եվրոպայի Խորհուրդ (Խորհրդարանական վեհաժողով)	(PA) CE	(Parliamentary Assembly) of Council of Europe
ԵՀԳԳ	Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք	ENPI	European Neighbourhood and Partnership Instrument
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն	ENP	European Neighbourhood Policy
ԵՄ	Եվրոպական Միություն	EU	European Union
ԵՄՀՆ	ԵՄ-ի Հատուկ ներկայացուցիչ	EUSR	The EU Special Representative
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ	EIB	The European Investment Bank
ԵՊԸ	Եվրոպական պաշտպանական ընկերակցություն	EDC	European Defence Community
ԵՏԸ	Եվրոպական տնտեսական ընկերակցություն	EEC	European Economic Community
ԵՔԸ	Եվրոպական քաղաքական ընկերակցություն	EPC	European Political Community
ԵՔՀ	Եվրոպական քաղաքական համագործակցություն	EPC	European political cooperation
ԶՈԶ	Զանգվածային ոչնչացման զինատեսակ	WMD	Weapons for Mass Destruction
ԸԱԱՔ	Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն	CFSP	Common Foreign and Security Policy

Ը(Ե)ԱՊՔ	Ընդհանուր (Եվրոպական) անվտանգության և պաշտպանության քաղաքականություն	C(E)SDP	Common (European) Security and Defence Policy
ԹԱՅԵՔՍ	Տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման գործիք	TAIEX	The Technical Assistance and Information Exchange
ԻԻՀ	Իրանի Իսլամական Հանրապետություն	IRI	The Islamic Republic of Iran
ԻՆՕԳԵՅԹ	Նավթի և գազի միջպետական տեղափոխում Եվրոպա	INOGATE	Interstate Oil and Gas Transport to Europe
ԼՂ(Հ)	Լեռնային Ղարաբաղի (Հանրապետություն)	NK(R)	The Nagorno-Karabakh Republic
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն	USSR	The Union of the Soviet Socialist Republics
ԿԱԵ	Կենտրոնական և Արևելյան Եվրոպա	CEA	Central and Eastern Europe
ՀԱԷԿ	Հայաստանի ատոմային էլեկտրակայան	AAPS	Armenian Atomic Power Station
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն	CSTO	The Collective Security Treaty Organization
ՄԱԿ (ԳԱ)	Միավորված ազգերի կազմակերպություն (Գլխավոր ասամբլեա)	(GA) UNO	The General Assembly of the United Nations Organization
ՄՃԽ	Միջազգային ձգնաժամային խումբ	ICG	The International Crisis Group

ՄՆԿ	Մշտական ներկայացուցիչների կոմիտե	COREPE R	Committee of Permanent Representative
ՆԱՏՕ	Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպություն	NATO	The North-Atlantic Treaty Organization
ՈԴՄՀ	Ոստիկանական և դատական մարմինների համագործակցություն	PJC	Police and judicial cooperation in criminal matters
ՌԴ	Ռուսաստանի դաշնություն	RF	Russian Federation
ՍԾՏՀԿ	Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն	OBSEC	The Organization of the Black Sea Economic Cooperation
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	EBRD	The European Bank for Reconstruction and Development
ՏԱՍԻՍ	Տեխնիկական աջակցություն ԱՊՀ երկրներին	TACIS	Technical Assistance for the Commonwealth of Independent States
ՏՐԱՍԵԿԱ	Տրանսպորտային միջանցք Եվրոպա-Կովկաս-Ասիա	TRACEC A	Transport Corridor Europe-Caucasus-Asia
ՔԱԿ	Քաղաքական և անվտանգության հարցերով կոմիտե	PSC	Political and security committee

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին, հատկապես, ԵԱՌ-ի ներդրումից հետո ԵՄ-ի ակտիվությունը Հարավային Կովկասում նկատելիորեն աճել է: Չնայած իր ծայրամասային տեղադրությանը, Հարավային Կովկասը, որպես Սև-Ծովյան-Կասպյան էներգետիկ տարածաշրջանի բաղադրիչ և Կենտրոնական Ասիայի հետ կապող բնական միջանցք, ԵՄ-ի համար աստիճանաբար ձեռք է բերում ռազմավարական նշանակություն: Այս հանգամանքը, բնականաբար, մեծացնում է ԵՄ-ի ուշադրությունը տարածաշրջանային այնպիսի խնդիրների նկատմամբ, ինչպիսիք են հակամարտությունները, տնտեսական զարգացումն ու քաղաքական համակարգերի արդիականացումը, տարածաշրջանային և միջտարածաշրջանային համագործակցության ծրագրերի խթանումը և այլն: Հանգուցայինն այս համատեքստում ԵՄ-ի անվտանգության շահերի շրջանակներում Հարավային Կովկասի ունեցած իրական նշանակությունն է, ինչի բացահայտումն էլ հանդիսացել է սույն միջգիտակարգային ուսումնասիրության գլխավոր նպատակը:

Հաշվի առնելով ԵՄ-ի արտաքին քաղաքականության մշակման և իրականացման առանձնահատկությունները, ուսումնասիրությունն սկսել ենք ԵՄ-ի ԸԱԱԲ-ի և ԵԸ-ի արտաքին քաղաքականության յուրահատկությունների, ինչպես նաև դրանց փոխկապակցությունների վերհանումից: Խնդիրը նրանում է, որ ԵՄ-ի կառուցվածքային և գործառութային յուրահատկությունները, դրանում վերպետական և միջպետական տարրերի զուգորդումը լավագույնս արտահայտվում են հենց արտաքին քաղաքականության ոլորտում: Հիմնահարցը համակողմանի ներկայացնելու նպատակով՝ ուսումնասիրության մեջ ներկայացվել և վերլուծվել են ինչպես «Եվրոպական արտաքին քաղաքականության» ձևավորման նախապատմությունը, այնպես էլ ԵՄ-ի առաջին և երկրորդ հենքերի շրջանակներում արտաքին քաղաքականության մշակման և իրականացման սկզբունքները, գործիքները, հիմնական տարբերություններն ու փոխկապակցությունները:

Երկրորդ կարևոր խնդիրը Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի քաղաքականության առաջնահերթությունների վերհանումն է: Այս համատեքստում մեր ուշադրությունը կենտրոնացրել ենք այն խնդիրների և դրանց լուծման մեխանիզմների վրա, որոնք ԵԱՌ-ում սահմանված են որպես ԵՄ-ի անվտանգության սպառնալիքներ: Հատկանշական է, որ չնայած Ռազմավարության մեջ Հարավային Կովկասին հատկացված է մի

փոքր հատված, սակայն դրանում տեղ գտած բոլոր հարցադրումները՝ ԵՄ-ի հարևանությամբ հակամարտությունների և անկայունությունների կանխարգելումը, արդյունավետ կառավարվող և բարեկեցիկ երկրների կառուցումը, ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, զենքի և թմրանյութերի ապօրինի շրջանառության, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը, ինչպես նաև ԵՄ-ի էներգետիկ անվտանգության ապահովման խնդիրներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են այդ տարածաշրջանին:

Քանզի ԵՄ-ի կախվածությունը մերձավորարևելյան նավթի և ռուսական գազի ներկրումներից դեռ պահպանվում է, Հյուսիսային ծովում արդյունահանման ծավալների նվազմանը զուգահեռ մեծ կարևորություն է ստանում Կասպյան ավազանից Սևծովյան տարածաշրջանի միջոցով Եվրոպա էներգակիրների անվտանգ և անխափան տեղափոխման հարցը: Դա էլ, իր հերթին, ստիպում է ԵՄ-ին էլ ավելի ներգրավվել տարածաշրջանային անկայունությունների և միջպետական հարաբերությունների կարգավորման գործերում:

2009թ. տարեսկզբի ռուս-ուկրաինական «գազային հակադրությունն» ակնհայտ դարձրեց ԵՄ-ի էներգետիկ անվտանգության խոցելիությունը և ռուսական էներգակիրների ներկրումից չափազանց կախվածությունը: Դրանից հետո «Նաբուկո» նախագծի վերակենդանացման շուրջ քննարկումները ԵՄ-ի ներսում և դրանից դուրս ակնհայտ դարձրին նաև այն հանգամանքը, որ մոտ ապագայում ԵՄ-ի էներգետիկ քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը լինելու է Կասպյան ավազանը և Կենտրոնական Ասիան: Սակայն անգամ այստեղ ԵՄ-ը ստիպված է լինելու բանակցել ՌԴ-ի հետ, որն էներգետիկ համագործակցություն է հաստատել այդ էներգապաշաները տնօրինող երկրների հետ: Այս համատեքստում ևս էապես աճում է Հարավային Կովկասի՝ որպես Եվրոպա այդ ածխաջրածնային պաշաների տարանցման միակ օպտիմալ տարածքի նշանակությունը: Այս հանգամանքը, իր հերթին, պայմանավորում է ԵՄ-ի շահագրգռվածությունը հակամարտությունների խաղաղ կարգավորման, տարածաշրջանային կայունության և խաղաղության՝ որպես տարանցիկ ուղիների, խողովակաշարերի անվտանգության միակ երաշխիքի մեջ:

Բայց Հարավային Կովկասն աչքի է ընկնում արտաքին դերակատարների առատությամբ, որոնք այստեղ հետապնդում են տարբեր, հաճախ՝ հակադիր շահեր: Այնպիսի համաշխարհային դերակատարներ,

ինչպիսիք են ԱՄՆ-ը և ՌԴ-ը, և տարածաշրջանային ուժային կենտրոններ, ինչպիսիք են Թուրքիան և Իրանը, այս տարածաշրջանում ունեն կարևոր դերակատարում: Նրանց մրցակցությունը տարածաշրջանի հաղորդակցային հնարավորությունների և էներգապաշարների նկատմամբ ռազմավարական հսկողության համար մեծապես ազդում է ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության մշակման և իրականացման վրա: Անհնար է անտեսել նաև ԵՄ-ի առաջատար երկրների շահերը տարածաշրջանում, որոնք ևս ոչ միշտ են համընկնող: Սա, իր հերթին, առաջին պլանի վրա է մղում Հարավային Կովկասի նկատմամբ միասնական ռազմավարություն որդեգրելու և ԵՄ-ի մրցունակությունը բարձրացնելու անհրաժեշտությունը:

Այս համատեքստում, բնականաբար, հանգուցային խնդիրներից մեկը կապված է ԵՄ-ի առաջատար երկրների և տարածաշրջանում գործող այլ դերակատարների շահերի համադրման կամ մրցակցության հետ: Այս առումով, ակնհայտ է նաև Հարավային Կովկասում ԵՄ-ի ռազմավարական ներկայության ապահովման անհրաժեշտությունը, մասնավորապես, ՌԴ-ի և ԱՄՆ-ի կողքին ինքնուրույն անվտանգության քաղաքականություն իրականացնելու նպատակով: Խնդիրը կայանում է նրանում, որ ՌԴ-ի և ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական մրցապայքարի պայմաններում ԵՄ-ի համար խիստ դժվար է ամրապնդել իր դիրքերը համաաշխարհային մասշտաբով, այդ թվում նաև Հարավային Կովկասում: Դրա համար ԵՄ-ն անհրաժեշտաբար պետք է որդեգրի միասնական դիրքորոշում, որն ուղենիշ կհանդիսանա նաև առանձին անդամ-երկրների հարավկովկասյան քաղաքականության համար: Ակնհայտ է նաև, որ Կովկասի հարավային հատվածը բնաշխարհագրական և աշխարհաքաղաքական տեսանկյուններից չի կարող դիտարկվել հյուսիսային հատվածից անկախ, ինչն ստիպում է հաշվի առնել նաև տարածաշրջանային գործընթացների վրա ՌԴ-ի ազդեցության հանգամանքը: ԵՄ-ը պետք է խրախուսի և աջակցի նաև տարածաշրջանային ուղղվածություն ունեցող և տեղի բոլոր երկրները ներառող ծրագրերի և կառույցների գործունեությունը՝ այդպես ապահովելով այդ երկրների փոխկապվածությունն ու փոխկախվածությունը:

Այդուհանդերձ, Հարավային Կովկասի մյուս դերակատարներից ԵՄ-ը տարբերվում է նրանով, որ, չնայած տարածաշրջանի նկատմամբ միասնական ռազմավարության բացակայությանը, նա իր քաղաքականությունն իրականացնում է հստակ մշակված ծրագրերի միջոցով՝ հենվելով, հիմնականում, իր «փափուկ ուժի» և հարավկովկասյան երկրներում ունեցած

«ազնիվ միջնորդի» համբավի վրա: Այս տեսանկյունից ուշադրության և գնահատման արժանի են հատկապես ԵՀԲ-ը, «Արևելյան գործընկերություն», ՏՐԱՍԵԿԱ, ԻՆՕՉԵՅԹ, ինչպես նաև աջակցության և համագործակցության մյուս ծրագրերը:

Շնորհիվ իր «փափուկ ուժի» համբավի և ազդեցության համալիր ու զարգացած զինանոցի՝ ԵՄ-ը դիտարկվում է որպես առավել արդյունավետ ուժային կենտրոն, որն ունի մեխանիզմներ և հնարավորություններ խթանելու տարածաշրջանայնացման գործընթացները Հարավային Կովկասում՝ այդպես էլ նպաստելով առկա տարածայնությունների կարգավորմանը: Սակայն հաճախ շահերի համադրման դժվարությունը կամ անհնարինությունը խոչընդոտում է Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի արդյունավետ քաղաքականություն մշակելուն և իրականացնելուն: Ընդհանրապես, ԵՄ-ը բազմիցս քննադատության է արժանացել այս տարածությունում պասիվ դերակատարման, տեղի ունեցող գործընթացներին հաճախ ոչ օպերատիվ արձագանքելու համար: Այդուհանդերձ, ԵԱՌ ներդրումից և ԵԱՊԲ-ի ներուժի զարգացումից հետո ԵՄ-ը դանդաղորեն, բայց հաստատուն քայլերով հաղթահարում է իր իրական ներուժի և արտաքին գործառնության միջև եղած անհամաչափությունը: Կոնկրետ Հարավային Կովկասի առումով դրա արտահայտություններ կարելի է դիտարկել թե՛ տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման նկատմամբ նրա ուշադրության աճը, թե՛ տեղի երկրների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցության խորացումը, նոր ձևաչափերի մշակումը:

Բացի այդ, տեղի երկրներից ոչ մեկը մինչ այժմ չի կարողացել կառուցել արդյունավետ, կայուն զրագացող պետություն, և նրանք բոլորն ունեն բազմաթիվ չլուծված ներպետական, միջպետական և ընդհանուր տարածաշրջանային խնդիրներ: Հենց դրանց լուծումն էլ պետք է հանդիսանա ԵՄ-ի ուշադրության առարկան: ԵՄ-ի հարևանությամբ «ժողովրդավարական կայունության և բարեկեցության» գոտու ստեղծման հիմքում ընկած է հարևան երկրներում արդյունավետ կառավարման, ժողովրդավարության, իրավական պետության կայացմանն աջակցության գաղափարը:

Փոխկապակցված խնդիրների այս համալիրն էլ հանդիսանում է այս միջգիտակարգային ուսումնասիրության առարկան, որի շրջանակներում փորձ է արվել Հարավային Կովկասում ԵՄ-ի արտաքին և անվտանգության քաղաքականության խնդիրներին, իրականացման ձևաչափերին և զարգացման հիմնական միտումներին համակողմանի՝ կիրառելով քաղաքագիտական և իրավագիտական մոտեցումներ, ինչպես նաև քննարկվող

հարցերը դիտարկելով լայն համատեքստում: Վերջինս ներառում է այն-
պիսի խնդիրներ, ինչպիսիք են Հարավային Կովկասի էներգետիկ և տա-
րանցիկ նշանակությունը ԵՄ-ի համար, այլ դերակատարների, ինչպես
նաև տարածաշրջանային հակամարտությունների առկա և հնարավոր
ազդեցությունը ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության վրա:
Դրանց պետք է հավելել նաև հարավկովկասյան երկրներում արդյունա-
վետ կառավարման և տնտեսական զարգացմանն աջակցությունը՝ որ-
պես տարածաշրջանային կայունության և հակամարտությունների եվրո-
պականացման գրավական:

ԳԼՈՒԽ 1. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 «Եվրոպական արտաքին քաղաքականության» ձևավորման նախապատմությունը

ԵՄ-ի արտաքին և անվտանգության քաղաքականությունն ունի մոտ երկու տասնամյակի պատմություն, որի ընթացքում ԵՄ-ին ի վերջո հաջողվեց հաղթահարել «տնտեսական հսկա, քաղաքական թզուկ» բնորոշումը և վերածվել համաշխարհային քաղաքականության առանցքային կենտրոններից մեկի: Ըստ էության, ԵՄ-ի ԸԱԱՔ մեկնարկը տրվեց 1993թ. ԵՄ-ի հիմնադրման մասին (Մասստրիխտի) պայմանագրով, որն էլ հենց ուղենշեց այդ քաղաքականության հիմնական նպատակներն ու ուղղությունները: ԵՄ-ի ԸԱԱՔ իրավական և քաղաքական կարգավորման բազան հարստացվել է նաև հաջորդած պայմանագրերով ու հայտարարություններով, իսկ 1998թ. Սեն Մալոյում ֆրանս-բրիտանական հանդիպման արդյունքում հրապարակված հայտարարությամբ ԵՄ ԸԱԱՔ-ն ստացավ օպերատիվ բաղկացուցիչ՝ Ը(Ե)ԱՊՔ:

Մինչ Մասստրիխտի պայմանագրի կնքումը ԵՄ-ին նախորդած ընակերակցություններն իրենցից ներկայացնում էին գերազանցապես տնտեսական ինտեգրման խնդիրներում մասնագիտացած կազմակերպություններ: Եվ չնայած միջազգային քաղաքականության ոլորտում համագործակցության գաղափարը մշտապես եղել է եվրոպական օրակարգում, այն՝ որպես «ընհանուր արտաքին քաղաքականություն», տեղ չի գտել հիմնական պայմանագրերում:

Արևմտաեվրոպական երկրների համագործակցությունն արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում սկիզբ է առել Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո: Դեռևս ԵՄ ԸԱԱՔ նախորդը համարվող ԵԶՀ-ի ձևավորումից առաջ, 1947թ. Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջև կնքվեց Դյունքերքի պայմանագիրը, որն ուղղված էր Գերմանիայի կողմից նոր ագրեսիան կանխելուն և դրան հակազդելուն: 1948թ. Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Բենիլուքսի երկրներն ստորագրեցին Բրյուսելի պայմանագիրը, որի հիման վրա ձևավորվեց Արևմտյան միությունը՝ ուղղված Եվրոպայում ցանկացած նոր ռազմական ագրեսիա կանխելուն (ներառյալ, Գերմանիայի և ԽՍՀՄ-ի կողմից): 1954թ. Փարիզյան համաձայագրերով պայմանագիրը վերանայվեց, դրան մասնակից

դարձան նաև Արևմտյան Գերմանիան և Իտալիան: Արդյունքում հիմնադրվեց Արևմտաեվրոպական Միությունը¹:

Նույն ժամանակ, Դանիան, Նորվեգիան և Շվեդիան սկսեցին քննարկել Սկանդինավյան պաշտպանական միության ձևավորման գաղափարը, որը ևս պետք է ուղղված լիներ ԽՍՀՄ-ի կողմից հնարավոր ագրեսիայի դեմ, և ենթադրում էր ամերիկյան ռազմատեխնիկական աջակցություն հարձակումը կանխելու գործում: Սակայն այս նախագիծը տապալվեց 1949թ., երբ ԱՄՆ-ը հրաժարվեցին աջակցել նման չեզոք դաշինքներին:

Ջուտ եվրոպական պաշտպանական նախաձեռնություններից էր նաև 1950թ. եվրոպական ինտեգրման «հայրերից» մեկը համարվող ֆրանսիացի հասարակական-պետական գործիչ Ժ. Մոնեն փորձը՝ գտնել եվրոպական պաշտպանության վերազգային հիմքով կազմակերպման բանալին: Այդ գաղափարը նա առաջարկեց Ֆրանսիայի վարչապետ Ռ. Պլեվենին: Ըստ այդմ, ԱՊԵԸ հիմնադրմանը պետք է հաջորդեր եվրոպական բանակի ստեղծումը, որը պետք է եվրոպական միասնական ղեկավարության հսկողության տակ դներ գերմանական զինված միավորումները: Չնայած 1952թ. այդ պայմանագիրն ստորագրվեց արևմտաեվրոպական երկրների մեծամասնության կողմից, այդուհանդերձ, Ֆրանսիայի Ազգային ժողովը, հիմք ընդունելով մի շարք ներքաղաքական և արտաքին քաղաքական հանգամանքներ, 1954թ. մերժեց ԵՊԸ և եվրոպական ռազմական ինտեգրման պլանները, որից հետո իր իմաստը կորցրեց նաև ԵԶԸ նախագիծը՝ ԵՊԸ-ի համարժեքն արտաքին քաղաքական գործունեության ուղղորդման ոլորտում²:

Այս անհաջողություններից հետո եվրոպական պաշտպանական նախաձեռնությունները գրեթե ամբողջությամբ կլանվեցին 1949թ. հյուսիսամերիկյան երկու և արևմտաեվրոպական տաս պետությունների կողմից հիմնադրված Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) կողմից, որին էլ հենց վերապահվեց «խորհրդային սպառնալիքից» արևմտաեվրոպական երկրների արտաքին անվտանգության ապահովման կենտրոնական դերը:

ԵՄ ԸԱԱԶ զարգացման պատմության մեջ ուրույն նշանակություն է ունեցել Եվրոպական քաղաքական համագործակցության հայեցակարգը,

¹ St' u Desmond D., *Origins and Evolution of the European Union*, New York, 2006, pp. 38-39, 48-49, 91.

² St' u Bache I., George S., *Politics in the European Union*, Second Edition, New York, 2006, pp. 108-111.

որը Եվրոպական օրակարգում է գտնվել 1960-ական թվականներից: Այդ ժամանակաշրջանում համաշխարհային տնտեսական և քաղաքական զարգացումներն անհրաժեշտություն առաջացրին էլ ավելի խորացնելու ԵԸ անդամ-պետությունների արտաքին քաղաքական համագործակցությունը: 1970թ. Լյուքսեմբուրգում հաստատվեց «Դավինիոնի զեկույցը» (Davignon Report), որն էլ դրեց արտաքին քաղաքականության ոլորտում անդամ-երկրների միջև քաղաքական փոխգործակցության հիմքերը: Հաջորդ կարևոր քայլը 1974թ. Փարիզի հանդիպումն էր, որի արդյունքում անդամ-երկրների ղեկավարները պայմանավորվեցին ամրապնդել իրենց համագործակցությունը և ուղղորդել իրենց դիվանագիտական գործողությունները ԵՏԸ-ի շահերին առնչվող բոլոր միջազգային հարցերում: 1976թ. հաստատվեց նաև «Տինդեմանի զեկույցը» (Tindemans Report) Եվրոպական Միության մասին և ամրագրվեց, որ ԵԶՀ-ը պետք է հանգեցնի մասնակիցների ընդհանուր արտաքին քաղաքականության ձևավորմանը: 1981թ. Լոնդոնում կայացած հանդիպմանը Մեծ Բրիտանիայի արտաքին հարցերով քարտուղար և ՆԱՏՕ-ի ապագա գլխավոր քարտուղար լորդ Քերինգթոնի (Lord Carrington) ներկայացրած զեկույցում վերահաստատվեց անդամ-երկրների ցանկությունը՝ որդեգրելու միջազգային և անվտանգության խնդիրներում հետևողական և համաձայնեցված մոտեցումներ: Զեկույցը վերահաստատեց քաղաքական խորհրդակցությունների առկա մեխանիզմը և նախատեսեց անդամ-երկրների դեսպանատների միջև առավել սերտ համագործակցություն:

1981թ. Գերմանիայի դաշնային արտգործնախարար Հանս-Դիտրիխ Գենշերի (Hans-Dietrich Genscher) և նրա իտալացի գործընկեր Էմիլիո Կոլոմբոյի (Emilio Colombo) ելույթները մտան Եվրոպական ակտի նախագծի տեքստում, որը նախատեսում էր էլ ավելի խորացնել ԵՏԸ-ի անդամ-երկրների փոխգործակցությունն արտաքին քաղաքականության ոլորտում: Այն ներմուծեց ԵԶՀ-ի պատասխանատվությունն Արտգործնախարարների խորհրդի առջև և նախատեսեց ստեղծել ԵԶՀ քարտուղարություն: Արդեն 1983թ. ընդունված Շտուտտգարտի հռչակագիրը ճանաչեց Եվրոպական խորհրդի գերակա դերակատարությունը, և նախատեսեց անդամ-երկրների ընդհանուր դիրքորոշումների ընդունումը միջազգային համաժողովներում և միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Այդուհանդերձ, այդ հռչակագրի իրագործման մեխանիզմների հարցը դեռևս մնում էր անորոշ: Այդ բացը որոշակիորեն լրացվեց 1986թ. Եվրոպական միասնական ակտով, որը կանոնակարգեց ԵԶՀ-ի

պրակտիկան և ներմուծեց դրա մշտապես գործող քարտուղարությունը: Այդ փաստաթուղթը սահմանեց եվրոպական արտաքին քաղաքականությունը՝ անվտանգության խնդիրների ներառման հեռանկարով: ԵԶՀ-ի խնդիրներ սահմանվեցին Եվրոպայի անկախությունը և ժողովրդավարական սկզբունքների ու մարդու իրավունքների պաշտպանությունը: Այդուհետ ԵԸ 12 անդամ-պետությունները պետք է խորհրդակցեին միմյանց հետ ընդհանուր քաղաքական դիրքորոշումներ ընդունելուց առաջ:³

Այդուհանդերձ, միայն Մասստրիխտի պայմանագրում ամրագրվեց «ընդհանուր արտաքին քաղաքականության» ձևաչափը՝ նպատակ ունենալով էլ ավելի լսելի և ազդեցիկ դարձնել ԵՄ-ի ձայնը համաշխարհային քաղաքականության մեջ, ամրապնդել նրա ունակությունները խաղաղության և անվտանգության ապահովման, հակամարտությունների կարգավորման, մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության ամրապնդման, ինչպես նաև մի շարք այլ հարցերում: Այս խնդիրների իրականացումը պետք է հիմնված լինի ԵՄ-ի հիմնարար սկզբունքների և ընդհանուր արժեքների վրա:

1.2 Եվրոպական Միության Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը

Մասստրիխտյան պայմանագիրը ներմուծեց ժամանակակից Եվրոպական Միության եռասյուն համակարգը, որի երկրորդ սյունն էլ ստացավ «Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն» անվանումը: Այն ներառում է նաև Ընդհանուր անվտանգության և պաշտպանական քաղաքականությունը, ինչպես նաև բոլոր այն ոլորտները, որոնք դուրս են ԵԸ արտաքին քաղաքականության շրջանակներից: Պայմանագիրը նախատեսում է, որ ԸԱԱԲ-ը հետագայում կարող է հանգեցնել պաշտպանության ոլորտում ընդհանուր քաղաքականության, եթե Եվրոպական խորհուրդը կայացնի համապատասխան որոշում:

Մասստրիխտյան պայմանագիրն ապահովում է հավասարակշռություն անդամ-պետությունների միջև, որոնց մի մասն իր դժգոհությունն է արտահայտում արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում եվրոպական ինքնուրույնության պակասի կապակցությամբ, իսկ մյուս մասը չի ցանկանում, որպեսզի այդպիսի ինքնուրույնության արտահայտումը վտանգի տակ դնի Ատլանտյան դաշինքի միասնությունը: Այս

³ St'au Bache I., George S., Ibid, pp. 142-143, 161.

առունով, պայմանագիրը վերապահում է կատարում մի շարք անդամների անվտանգության և պաշտպանական քաղաքականության համար՝ հղում կատարելով, մասնավորապես, Հյուսիսատլանտյան պայմանագրի հիմնասկզբունքներին (Հոդված 17(1)): Ըստ այդմ, ԸԱԱԲ-ը հետագայում կարող է հանգեցնել պաշտպանության ոլորտում ընդհանուր քաղաքականության, եթե Եվրոպական խորհուրդը կայացնի համապատասխան որոշում:

Ի տարբերություն առաջին սյան՝ Եվրոպական ընկերակցության շրջանակներում տնտեսական ինտեգրման, ԸԱԱԲ-ը միջկառավարական համագործակցության հարթություն է, որտեղ առայժմ ինտեգրացիոն վերագգային ինստիտուտների դերը բավական սահմանափակ է: Իսկ հանգուցային դերակատարներ մնում են հենց անդամ-պետությունները, որոնք շարունակում են պահպանել վետոյի իրավունքը կարևորագույն հարցերի քննարկման ժամանակ:

Պայմանագիրը (հոդված 11) սահմանում է նաև ԵՄ-ի ԸԱԱԲ նպատակները, ինչպիսիք են ընհանուր արժեքների, հիմնարար շահերի, ԵՄ-ի անկախության և ամբողջականության պաշտպանությունը, նրա անվտանգության ապահովումը բոլոր միջոցներով, խաղաղության պահպանումն ու միջազգային անվտանգության ամրապնդումը, ինչպես նաև ժողովրդավարության, իրավունքի գերակայության զարգացումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը:⁴

Որպես այդ նպատակների իրագործման միջոցներ՝ Պայմանագիրն առանձնացնում է Եվրոպական խորհրդի կողմից ԸԱԱԲ ընդհանուր ուղենիշների և սկզբունքների սահմանումը, ընդհանուր ռազմավարությունների ընդունումը⁵, համատեղ գործողությունների իրականացումը, ընդհանուր դիրքորոշումների ընդունումն Ընդհանուր գործերի խորհրդի կողմից, ինչպես նաև անդամների միջև արտաքին քաղաքականության ոլորտում համագործակցության խորացումը (հոդված 12): Այս գործիքները լրացվում են նաև ԵՄ-ի «եռյակի» հանդիպումներով, համաժողովներով, ինչպես նաև անկայուն կամ խնդրահարույց տարածաշրջաններում ԵՄ-ի հա-

⁴ Տե՛ս Եվրոպական Ընկերակցության հիմնադրման և Եվրոպական Միության մասին պայմանագրեր, Ղազինյան Ա. (գլխ. խմբագիր), Երևան, 2008, էջեր 13-14:

⁵ Այս գործիքը ներմուծվել է Ամստերդամի պայմանագրով և վերաբերում է առանձին երկրների: Մինչ այժմ Եվրոպական խորհուրդն ընդհանուր ռազմավարություններ ընդունել է ՌԴ-ի, Ուկրաինայի, Միջերկրծովյան տարածաշրջանի և մերձավորարևելյան խաղաղության վերականգնման գործընթացի նկատմամբ:

տուկ ներկայացուցիչների նշանակմամբ, ինչը հնարավորություն է տալիս ԵՄ-ին ապահովել իր քաղաքական ներկայությունն այս տարածքներում և հնարավորություն տալիս նրան ակտիվորեն ընդգրկվելու խնդիրների կարգավորման գործընթացին:

ԸԱԱՔ մշակմանն ու իրականացմանը տարբեր լիազորություններով մասնակցում են ԵՄ-ի մի շարք ինստիտուտներ և կառույցներ: Այսպես, *Եվրոպական խորհուրդը* սահմանում է ԸԱԱՔ առաջնահերթություններն ու հիմնասկզբունքները, հաստատում ընդհանուր ռազմավարությունները: *ԵՄ-ի նախարարների խորհուրդն* ընդունում է ԸԱԱՔ-ի ոլորտներին վերաբերող համատեղ գործողություններ և ընդհանուր դիրքորոշումներ, որոնց իրականացումը հանդիսանում է հիմնականում *Նախագահության* խնդիրը: Համատեղ գործողությունների ֆինանսավորումն ապահովում է *Եվրոպական հանձնաժողովը*: *Խորհրդի նախագահությունը* մեծ դեր է խաղում ԸԱԱՔ ոլորտում օրենսդրական և քաղաքական որոշումների ընդունման գործընթացներում՝ ինստիտուտների գործունեության կազմակերպման հարցում: Այս հարցերում նա ստանում է *Խորհրդի քարտուղարության և Խորհրդի քարտուղարի/ԸԱԱՔ հարցերով բարձրագույն ներկայացուցչի* աջակցությունը: *Եվրոպական խորհրդարանը* պարբերաբար տեղեկացվում է ԸԱԱՔ ոլորտում զարգացումների վերաբերյալ և իր կարծիքն արտահայտում հիմնական ուղղվածությունների ու հնարավորությունների վերաբերյալ:

Ամստերդամի պայմանագիրը ներմուծեց ևս երկու դերակատարներ: Ինչպես նշվեց, *ԸԱԱՔ հարցերով բարձրագույն ներկայացուցիչը*⁶ աջակցում է Խորհրդին ԸԱԱՔ-ին վերաբերող որոշումների ընդունման և իրականացման, երրորդ երկրների հետ երկխոսության կազմակերպման գործերում, ներկայացնում ԵՄ-ն միջազգային ասպարեզում: Իսկ *Քաղաքական պլանավորման և վաղ զգուշացման միավորի* մանդատը ներառում է միջազգային զարգացումների և իրադարձությունների մոնիտորինգը, վերլուծությունն ու գնահատումը՝ ներառյալ վաղ զգուշացումը հնարավոր ձգնաժամերի վերաբերյալ: Դրանց վերաբերյալ նա Խորհրդին է ներկայացնում է առաջարկություններ և ռազմավարություններ:

ԸԱԱՔ ոլորտում կարևոր դեր խաղացող կառույցներից է *Մշտական ներկայացուցիչների կոմիտեն* (“Coreper”), որը և նախապատրաստում է

⁶ 1999թ.-ից այս պաշտոնն զբաղեցնում է ՆԱՏՕ-ի նախկին գլխավոր քարտուղար Խ. Սոլանան: Տե՛ս

<http://www.consilium.europa.eu/App/Solana/default.aspx?id=246&lang=EN>

Խորհրդի հանդիպումներն ու որոշումները: *Քաղաքական և անվտանգության հարցերով կոմիտեն*⁷ հանդիսանում է ԸԱԱՔ/Ը(Ե)ԱՊՔ հենասյունը: Նիցցիայի պայմանագրով նա կենտրոնական դեր է խաղում ձգնաժամային իրավիճակներին ԵՄ-ի արձագանքման գործում, որին ամբողջությամբ մասնակցում է նաև *Հանձնաժողովն* իր սեփական ներկայացուցչի միջոցով: Հենց այս կառույցն է առաջարկություններ ներկայացնում Խորհրդին ձգնաժամային իրավիճակներին արձագանքելու կոնկրետ գործիքների և միջոցների ընտրության հարցում:

*Եվրոպական թղթակիցների ցանցը*⁸ (A network of European Correspondents) ԵՄ-ի երկրներում ուղղորդում է ԸԱԱՔ ամենօրյա աշխատանքները և նախապատրաստում ՔԱԿ-ի, Ընդհանուր հարցերով և Եվրոպական խորհուրդների հանդիպումներն ԸԱԱՔ հարցերով: *Արտաքին կապերի հարցերով խորհրդատուների խումբը* Եվրոպական հանձնաժողովի ակտիվ մասնակցությամբ քննում է ԸԱԱՔ շրջանակներում ինստիտուցիոնալ, իրավական և ֆինանսական ասպեկտներին վերաբերող առաջարկությունները, նախապատրաստում ՄՆԿ-ի աշխատանքները համատեղ գործողություններով և ապահովում միջհենքային կապերը: Իսկ ԵՄ-ի անդամ-երկրների ու Հանձնաժողովի փորձագետներից կազմված *ԸԱԱՔ Աշխատանքային խմբերը* հանդիպումներ են կազմակերպում աշխարհագրական և գործառության հարցերով, քննում ԸԱԱՔ-ին առնչվող քաղաքական փաստաթղթերը: Coreu-ն ԵՄ-ի անդամ-երկրների և Հանձնաժողովի միջև արտաքին քաղաքականության ոլորտում համագործակցության համար նախատեսված հաղորդակցման ցանց է, որն արտակարգ իրավիճակում թույլ է տալիս դյուրացնել և արագացնել որոշումների ընդունման գործընթացը:⁹

ԸԱԱՔ կիրառման նպատակով Խորհրդի որոշմամբ ստեղծվել են նաև նոր կոմիտեներ: *ԵՄ-ի Ռազմական կոմիտեն*¹⁰ ՔԱԿ-ին ապահովում է

⁷ St'u Political and Security Committee -

<http://europa.eu/scadplus/leg/en/lvb/r00005.htm>

⁸ St'u The network of European correspondents -

http://www.diplomatie.gouv.fr/en/european-union_157/eu-in-the-world_1491/common-foreign-and-security-policy_5463/operation-of-the-cfsp_5467/the-main-bodies-specific-to-the-cfsp_5472/cfsp-communication-networks_8757.html#sommaire_1

⁹ St'u COREU (CORespondance EUropéenne) -

http://europa.eu/scadplus/glossary/coreu_en.htm

¹⁰ St'u Military Committee of the European Union (EUMC) -

<http://europa.eu/scadplus/leg/en/lvb/r00007.htm>

ռազմական խորհրդատվությամբ ԵՄ-ի բոլոր ռազմական ձեռնարկումների վերաբերյալ, քննում ԵՄ-ի շրջանակներում ռազմական ոլորտին վերաբերող բոլոր գերատեսչությունների գործունեությունը: *ԵՄ-ի ռազմական շտաբն*¹¹ իրականացնում է ռազմական փորձաքննություններ և աջակցում ԸԱՊՔ-ին, ներառյալ՝ ԵՄ-ի հրամանատարության տակ անցկացվող ռազմական հակաձգնաժամային օպերացիաների ղեկավարումը, վաղ նախազգուշացման, իրավիճակի գնահատման, այսպես կոչված «պետերսպերգյան խնդիրների»¹² ռազմավարական պլանավորման և այլ խնդիրները: *Ռազմաքաղաքական խումբը* քննում է ԸԱԱՔ-ի շրջանակներում կատարված առաջարկների ռազմաքաղաքական ասպեկտները: *Ճգնաժամների կառավարման քաղաքացիական ասպեկտներով կոմիտեն* խորհրդատվություն է մատուցում ձգնաժամների կառավարման ոչ ռազմական ասպեկտների, հակամարտությունների կանխարգելման և այլ հարցերում:

Ամստերդամյան պայմանագրի կարևորագույն նորանվազություններից էր ԱԵՄ սերտաձուլումը ԵՄ հետ՝ նրանց փոխադարձ ինտեգրման հեռանկարով: Այս ասպեկտում Պայմանագրի բաղկացուցիչ մասը հանդիսանում են այսպես կոչված «պետերսպերգյան խնդիրները»:¹³ Եվրոպական խորհրդի դիրեկտիվ իրավասությունները տարածվում են նաև ԱԵՄ վրա: Ըստ այդմ, մասնավորապես, ԵՄ-ը կարող է դիմել ԱԵՄ-ին պաշտպանության ոլորտում ընդունված որոշումների և գործողությունների մշակման ու իրականացման համար:

Նշանակալի էր նաև ի հավելում կառուցողական ձեռնպահության ձայների որակյալ մեծամասնությամբ քվեակարգի կիրառման կանոնակարգումը: Չնայած ընդհանուր ռազմավարությունը Եվրոպական խորհուրդը հաստատում է միաձայն՝ դրանից բխող համատեղ գործողություններն ու ընդհանուր դիրքորոշումներն ընդունվում են ձայների որակյալ

¹¹ Տե՛ս Military Staff of the European Union (EUMS) -

<http://europa.eu/scadplus/leg/en/lvb/r00006.htm>

¹² Դրանք ներառում են մարդասիրական և փրկարարական, խաղաղապահ, ինչպես նաև ճգնաժամային կառավարման (ներառյալ՝ խաղաղաստեղծ) գործողությունները: Տե՛ս WEU Council of Ministers, Petersberg Declaration, Bonn, 19 Jun 1992.

¹³ Հարկ է նշել, որ այս որոշումների ընդունումը մեծամասամբ պայմանավորված էր կոսովյան իրադարձություններով, մասնավորապես այն հանգամանքով, որ դրանք ակնհայտ դարձրին ճգնաժամային իրավիճակներում Եվրոպական երկրների ունակությունների անարդյունավետությունը, ինչը նրանց էլ ավելի մեծ կախվածության մեջ է դնում ԱՄՆ-ի աջակցությունից:

մեծամասնությամբ: Կախված քննարկվող հարցի բնույթից՝ ԵՄ-ի Խորհրդում կիրառվում են քվեարկության երեք տեսակներ. պարզ մեծամասնությունը՝ ընթացակարգային հարցերի համար, որակյալ մեծամասնությունը, որը հիմնված է անդամ-երկրների բնակչության թվի վրա և կիրառվում է ներքին շուկային, տնտեսական և առևտրին վերաբերող քննարկումներում, և միաձայնությունը, որը կիրառվում է արտաքին քաղաքականությանը, պաշտպանությանը, դատական և ոստիականական մարմինների համագործակցությանը, ինչպես նաև հարկահանությանը: Դեպքերի մեծամասնությունում Խորհուրդը որոշումներ է ընդունում Հանձնաժողովի առաջարկությամբ և Եվրոպական խորհրդարանի հետ համագործակցությամբ՝ խորհրդակցությունների կամ համատեղ որոշման ընթացակարգերի միջոցով:¹⁴

Այսպիսով, ԸԱԱՔ վերաբերյալ որոշումները մեծամասամբ ընդունվում են միաձայնության սկզբունքով: Բացառություն կազմում են միայն Խորհրդի Գլխավոր քարտուղարի-ԸԱԱՔ հարցերով բարձրագույն ներկայացուցչի և ԵՄՀՆ-երի նշանակման հարցերը, որոնց դեպքում պահանջվում է ձայների որակյալ մեծամասնությունը: Գործնականում, ԸԱԱՔ ոլորտում որոշումներն ընդունվում են անդամ-երկրների փոխհամաձայնությամբ, իսկ քվեարկության անցկացումը համարվում է բացառություն:

Որպես կանոն, անդամ-երկրները խուսափում են կիրառել իրենց վետոյի իրավունքը: Դրա փոխարեն նրանք կարող են օգտվել «կառուցողական ձեռնպահության» մեխանիզմից: Այդ դեպքում նա չի ստանձնում ընդունված որոշումով նախատեսվող պարտավորությունները, բայց ընդունում է, որ այդ որոշումը պարտադիր է ԵՄ-ի համար: Համերաշխության ոգուն համապատասխան, նա պետք է հրաժարվի դիմել այնպիսի քայլերի, որոնք կարող են հակասել կամ խոչընդոտել ԵՄ-ի գործողություններին, որոնք բխում են այդ որոշումից (ԵՄ մասին պայմանագրի Հոդված 23):

Որակյալ մեծամասնությամբ քվեակարգի դեպքում պահանջվում է անդամ-երկրների երկու երրորդի ձայները (255 ձայն), որոնք, սակայն, պետք է ներկայացնեն ԵՄ-ի բնակչության առնվազն 62%-ը: Այսինքն, ներկայիս 27 անդամների առկայության դեպքում որոշման խափանման համար կպահանջվի 91 ձայն (տե՛ս նաև Աղյուսակ 1):

¹⁴ Տե՛ս The Council - <http://www.consilium.europa.eu/showPage.aspx?id=426&lang=en>

ԸԱԱՔ/ԸԱՊՔ զարգացման գործում մեծ նշանակություն ունեցավ նաև 1998թ. Սեն Մալոյում ընդունված ֆրանս-բրիտանական հայտարարությունը, որով, մասնավորապես, անհրաժեշտ էր համարվում զարգացնել ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու նպատակով ինքնավար ռազմական օպերացիներ իրականացնելու՝ ԵՄ-ի ունակությունները՝ ներառյալ, համապատասխան կառուցվածքների ստեղծումը: Միաժամանակ հստակ ընդգծվում էր այս ոլորտում ԱԵՄ-ի կարողությունները կրկնօրինակելու ոչ ցանկալիությունը:¹⁵

Աղյուսակ 1. Անդամ-երկրների ծայների բաշխումը ԵՄ-ի խորհրդում

Գերմանիա	29	Բուլղարիա	10
Սեծ Բրիտանիա	29	Ավստրիա	10
Ֆրանսիա	29	Սլովակիա	7
Իտալիա	29	Դանիա	7
Իսպանիա	27	Ֆինլանդիա	7
Լեհաստան	27	Իռլանդիա	7
Ռումինիա	14	Լիտվա	7
Նիդերլանդներ	13	Լատվիա	4
Հունաստան	12	Սլովենիա	4
Չեխիա	12	Էստոնիա	4
Բելգիա	12	Կիպրոս	4
Պորտուգալիա	12	Լուքսեմբուրգ	4
Հունգարիա	12	Մալթա	3
Շվեդիա	10	Ընդամենը	345

1999թ. հունիսին Քյոլնում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպմանը ԸԱՊՔ մասին ընդունված հիմնարար որոշումներով ԵՄ-ի համար բացվեց գործառնության նոր դաշտ: Այնուհետև, Հելսինկյան Եվրոպական

¹⁵ Տե՛ս Joint Declaration issued at the British-French Summit, Saint-Malo, France, 3-4 December 1998.

խորհրդում այդ նախադրյալների կոնկրետացման նպատակով ընդունվեցին բավական հավակնոտ որոշումներ (Headline Goal): Ըստ այդմ, մինչև 2003թ. ԵՄ-ը պետք է տիրապետեր 50-60000-ոց ձգնաժամերի արձագանքման ուժերի (Արագ Արձագանքման Եվրոպական Ուժեր), որոնք պետք է հնարավոր լիներ մոբիլիզացնել 60 օրվա ընթացքում է պահպանել մինչև 1 տարի ժամկետով:¹⁶ Քաղաքացիական ոլորտում ևս ԵՄ-ը մինչև 2003թ. պետք է կարողանար մոբիլիզացնել մինչև 5000 ոստիկանական ուժեր և մինչև 200 իրավունքի մասնագետներ:

Դրանից ելնելով՝ որոշվեցին հավաքական ունակությունների նպատակները (Collective Capability Goals) գինված ուժերի ղեկավարման, ռազմավարական հետախուզության և տրանսպորտի ոլորտներում: Այդ նպատակով ընդունվեց, այսպես կոչված, Հելսինկյան կատալոգը (Helsinki Headline Goal Catalogue), որը սահմանում է ռազմական միջոցների և միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ առավելագույն պահանջները՝ որպես ազգային ներդրումների հիմք: Դրանց մասին հայտարարվեց 2000թ. նոյեմբերի գազաթաժողովում (Capabilities Commitment Conference) և ամրագրվեցին Ուժերի հելսինկյան կատալոգում (Helsinki Force Catalogue): 2001թ. ընդունվեց նաև «Միջոցառումների պլանը» (European Capabilities Action Plan): Ընդունվեցին նաև պլանային խնդիրներ քաղաքացիական ուժերի համար:¹⁷

Էական առաջընթաց ձեռք բերվեց նաև 2001թ. Լակենի Եվրոպական խորհրդում ընդունված որոշումներով, ըստ որոնց ԸԱՊՔ հետագա զարգացման համար պետք է ներառվի նաև ահաբեկչության դեմ պայքարն իր համապատասխան մեխանիզմներով:

ԸԱՊՔ կարևորագույն հատկանիշը նրա քաղաքացիական և ռազմական ունակությունների զուգահեռ ու հավասարակշռված բնույթն է: Այն կոչված է նաև էլ ավելի ամրապնդելու անդրատլանտյան կապերը և հանդես է գալիս՝ որպես պատասխան միջազգային անվտանգության ապահովման գործում Եվրոպական չափաբաժինն ավելացնելու ամերիկյան պահանջներին:

¹⁶ Տե՛ս Helsinki European Council, 10 and 11 December 1999.

¹⁷ Տե՛ս The Capabilities Commitments Conference, 2000; Brussels, Capabilities Improvement Conference, Ministers of Defence Meeting – General Affairs Council, 19 November 2001; 2386th Council meeting, General Affairs, Brussels, 19-20 November 2001; Military Capability Commitment Conference, Brussels, 22 November 2004 etc.

ԵՄ-ն իր ԸԱՊՔ-ը կիրառելու է՝ համաձայն Միավորված ազգերի խարտիայի սկզբունքների, և պետք է ի վիճակի լինի պատասխանատու միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ) խնդրանքով առավել արդյունավետ արձագանքել ճգնաժամային իրավիճակներին: Չնայած ԸԱՊՔ-ը ներդրված է որպես ԸԱԱՔ բաղկացուցիչ մաս և որպես միջկառավարական երկրորդ հենքի նախագիծ, այն կոչված է նաև խթանել և խորացնել եվրոպական ինտեգրացիան: Այն պետք է ապահովի «պետերսբերգյան խնդիրների» իրականացումը և չպետք է փոխարինի ՆԱՏՕ-ին, այլ լրացնի ատլանտյան հարաբերությունները: Ըստ մտահղացման, ՆԱՏՕ-ն պետք է մնա միջազգային ճգնաժամային իրավիճակների կարգավորման կենտրոնական օղակը, իսկ ԵՄ-ն այս բնագավառում ինքնուրույն ռազմական միջոցառումներ է իրականացնելու միայն այն դեպքում, երբ ՆԱՏՕ-ն չի մասնակցի դրանց:

Ըստ նախագծի, ԸԱՊՔ-ը չպետք է փոխարինի ՆԱՏՕ-ին, այլ լրացնի այն ու նպաստի «ՆԱՏՕ-ի հետ ռազմավարական գործնկերությանը»: Այդպիսի գործընկերության հիմքեր ձեռք բերվեցին, մասնավորապես, այն հարցերում, երբ ԵՄ-ն կարող է ՆԱՏՕ-ի պաշարներին մուտքի իրավունք ունենալ և երբ ու ինչպես կարող են մասնակցել ԵԱՊՔ միջոցառումներին ՆԱՏՕ-ի անդամ, բայց ԵՄ անդամ չհանդիսացող երկրները: ԵՄ-ն առանձնահատուկ կարևորություն է տալիս ԵԱՊՔ մեջ ԵՄ ոչ անդամ/ ՆԱՏՕ-ի անդամ և ԵՄ թեկնածու եվրոպական երկրների նարգրավման հարցին: Այն պետությունները, որոնք նշանակալի ռազմական ներդրում են կատարում ԵՄ-ի միջոցառումների իրականացման գործում, ունեն նույն իրավունքներն, ինչ՝ ԵՄ-ի անդամները: Նույնը վերաբերում է նաև քաղաքացիական ասպեկտին:¹⁸ Այսինքն, սկզբունքորեն, երրորդ երկրներն իրավունք չունեն մասնակցելու ԵՄ-ի միջոցառումներին: Բացառությունը վերաբերում է միայն ԵՄ այն միջոցառումներին, որոնց ժամանակ ԵՄ-ն օգտագործում է ՆԱՏՕ-ի պաշարները, որի դեպքում ՆԱՏՕ-ի անդամ/ ԵՄ ոչ անդամ երկրներն իրենց ցանկությամբ կարող են մասնակցություն ունենալ:

Նիցցիայի պայմանագրով ևս նշանակալի փոփոխություններ իրականացվեցին: Մասնավորապես, դրանով ընդլայնվեց այն ոլորտների թիվը, որոնց վերաբերյալ պետք է կիրառվի որակյալ մեծամասնության քվեա-

¹⁸ St'u Presidency Conclusions, Cologne European Council, 3-4 June 1999.

կարգը, ինչպես նաև բարձրացվեց ձգնաժամային իրավիճակների կարվարման գործում ՔԱԿ-ի դերակատարությունը:

Հաջորդ` Լիսաբոնի պայմանագիրը բովանդակում է ԵՄ-ի արտաքին քաղաքականությանը վերաբերող մի շարք կարևոր նորամուծություններ. Եվրոպական խորհրդի նախագահի լիազորությունների ժամկետի երկարացումը (2,5 տարի), Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձրագույն ներկայացուցչի, Հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնի ներմուծումը, ով պետք է ապահովի արտաքին հարաբերությունների ոլորտում ԵՄ-ի գործունեության հետևողականությունը, նաև Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության ստեղծումը, միջազգային հարաբերություններում ԵՄ-ի ներքին և արտաքին միասնականությունն ապահովելու նպատակով ԸԱՊՔ շրջանակներում «համերաշխության» սկզբունքի ներմուծումը, ըստ որի, ԵՄ-ը և անդամ-պետությունները պետք է գործեն համատեղ, երբ անդամ-պետությունը ենթարկվել է ահաբեկչական հարձակման:¹⁹

ԸԱԱՔ/ԸԱՊՔ ոլորտում բացառիկ նշանակություն ունեցավ 2003թ. Եվրոպական անվտանգության ռազմավարության²⁰ ընդունումը, որը բովանդակում է ինչպես ԵՄ-ի անվտանգության հիմնական սպառնալիքների շարքը, այնպես էլ դրանց դիմակայելու համար անհրաժեշտ առաջնահերթ գործողությունները: Այսպես, ԵՄ-ի անվտանգության կարևորագույն սպառնալիքներ են դիտարկվում ահաբեկչությունը, ՋՈՋ տարածումը, տարածաշրջանային հակամարտությունները, հատկապես, ԵՄ-ի աշխարհագրական հարևանությամբ, չկայացած պետությունները, ինչպես նաև կազմակերպված հանցավորությունը:

Այդ մարտահրավերներին դիմակայելու, արդյունավետ հակազդելու նպատակով Ռազմավարությունն ամրագրում է ԵՄ-ի կողմից ՋՈՋ չտարածման քաղաքականության շարունակականությունը` ընդգծելով այն հանգամանքը, որ ԵՄ-ը պետք է պատրաստ լինի գործել մինչև ձգնաժամի ի հայտ գալը: Կարևոր տեղ է հատկացվում արդյունավետ բազմակողմանիության վրա հիմնված միջազգային կարգի զարգացմանը, որի բաղադրատարրերն են հանդիսանում կազմակերպված միջազգային հան-

¹⁹ St'u Treaty of Lisbon amending the Treaty on EU and the Treaty establishing the EC, Conference of the Representatives of the Governments of the Member States, Brussels, 3 December 2007.

²⁰ St'u A Secure Europe in a Better World, European Security Strategy, Brussels, 12 December 2003.

րությունը, արդյունավետ գործառնող միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև իրավունքի գերակայությունը միջազգային հարաբերություններում:

Հանգուցային նշանակություն Ռազմավարության մեջ տրվում է ԵՄ-ի անվտանգ հարևանության կառուցման խնդրին՝ ԵՄ-ի արևելյան և միջերկրծովյան հարևանությամբ արդյունավետ կառավարվող երկրներին աջակցության ցուցաբերումը, նրանց հետ սերտ և փոխշահավետ փոխգործակցությունը՝ տարածաշրջանային կայունության և անվտանգության ապահովման նպատակով:

Այս հիմնարար նպատակները և դրանց իրականացմանն ուղղված գործունեությունը, հատկապես, ԵՄ-ի մերձակա և ԵՄ-ի ծայրամասային տարածաշրջաններում բավական համահունչ են «Ժողովրդավարական խաղաղության» հայեցակարգին:²¹ Ակնհայտ է, որ սեփական անվտանգության շահերից ելնելով, ԵՄ-ը ձգտում է իր անմիջական հարևանությամբ ստեղծել կայունության և խաղաղության գոտի, որի համար օգտագործվում են երկկողմ և բազմակողմ համագործակցության տարատեսակ ծրագրեր:

1.3 Եվրոպական ընկերակցության արտաքին իրավասությունը

ԵՄ-ի կառուցվածքը դյուրըմբռնելի դարձնելու համար այն համեմատում են հռոմեական տաճարի հետ և ներկայացնում եռասյուն կառուցվածքի ձևով: Առաջին հենասյունը հանդիսանում է ԵԸ-ը, իսկ երկրորդը ու երրորդը համապատասխանաբար ԸԱԱՔ ոլորտում անդամ-պետությունների համագործակցությունը և նրանց ՈՂՄՀ-ը քրեաիրավական ոլորտում: Այս հենասյուններից յուրաքանչյուրի շրջանակներում հաստատված է ինքնատիպ իրավական ռեժիմ, ինչը էլ պայմանավորում է միջազգային ասպարզում ԵԸ-ի և ԵՄ-ի մասնակցության իրավական տարբեր ձևաչափերի առկայությունը: Այդ ռեժիմի տարբերությունն իր արտահայտությունն է ստանում իրավասուբյեկտության կատեգորիայի մեջ, քանի որ, ի տարբերություն ԵՄ-ի, ԵԸ-ն օժտված է իրավասուբյեկտությամբ: ԵԸ-ի այդ որակական առանձնահատկությունն ուղղակիորեն ամրագրված է ԵԸ-ի հիմնադրման մասին պայմանագրի 281-րդ հոդվածում:

²¹ Այս հայեցակարգի համաձայն, ժողովրդավարությունները միմյանց հետ չեն պատերազմում, նրանք պատերազմում են բռնապետությունների հետ: Բռնապետություններն էլ, իրենց հերթին, պատերազմում են միմյանց հետ:

Անհրաժեշտ է տարբերել ԵԸ-ի իրավասուբյեկտության ներքին և արտաքին կողմերը: Իրավասուբյեկտության ներքին կողմն արտահայտվում է Միավորման ներսում հանդես գալու՝ ԵԸ-ի ընդունակությամբ, իսկ արտաքին կողմը՝ երրորդ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում միջազգային համաձայնագրեր կնքելու, այդ համաձայնագրերից բխող իրավունքներ ու պարտականություններ ստանձնելու, դրանց կատարման համար պատասխանատվություն կրելու, միջազգային կազմակերպություններին անդամակցելու՝ ԵԸ-ի ունակությունն է: ԵԸ-ի իրավասուբյեկտության արտաքին կողմի կամ նրա միջազգային իրավասուբյեկտության առկայության մասին են վկայում Հիմնադիր պայմանագրերում առկա որոշ դրույթներ, որոնք իրավունք էին վերապահում ինտեգրացիոն կազմավորումներին կնքել միջազգային համաձայնագրեր: Մասնավորապես, միջազգային համաձայնագրերի կնքմանն էին վերաբերում Եվրոպական տնտեսական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի²² 113-րդ հոդվածը (ներկայումս ԵԸ-ի հիմնադրման մասին պայմանագրի (ԵԸ պայմանագիր) 133-րդ հոդված)²³, որը վերաբերում էր տարիֆային ու առևտրային համաձայնագրերին, 238-րդ հոդվածը (ներկայումս ԵԸ պայմանագրի 310-րդ հոդված), որը վերաբերում է փոխկապակցման համաձայնագրերին²⁴:

ԵԸ-ի միջազգային իրավասուբյեկտության մասին էր վկայում նաև ԵՏԸ-ի հիմնադրման մասին պայմանագրի 228-րդ հոդվածը (ներկայումս ԵԸ պայմանագրի 300-րդ հոդված), որը նվիրված էր միջազգային համաձայնագրերի կնքման գործընթացին:

Միջազգային համաձայնագրերը հանդիսանում են այն հիմնական միջոցը, որոնց օգնությամբ ԵԸ-ն իրացնում է իր միջազգային իրավասուբյեկտությունը: ԵԸ-ի կողմից երրորդ պետությունների հետ հարաբերություններում կնքվում են միջազգային համաձայնագրերի հետևյալ տեսակները՝

- առևտրային համաձայնագրեր,

²² Տե՛ս Treaty Establishing the European Economic Community, March 25, 1957, 298 U.N.T.S. 11:

²³ Տե՛ս Consolidated Version of the Treaty Establishing European Community, Dec. 24, 2002, 2002 O.J. (C 325):

²⁴ Տե՛ս Enzo Cannizzaro, The European Union as an Actor in International Relations: The decision-making process of the European Community in external relations, Development of the external power of the EC, 2002, Netherlands, page 4:

▪ համագործակցության կամ զարգացման համագործակցության համաձայնագրեր,

▪ փոխկապակցման համաձայնագրեր²⁵:

Այս համաձայնագրերը միմյանցից տարբերվում են ինչպես կնքման իրավական հիմքով, այնպես էլ իրենց բովանդակությամբ: *Առևտրային համաձայնագրերի* կնքման համար որպես իրավական հիմք է ծառայում ԵԸ-ի հիմնադրման մասին պայմանագրի 133-րդ հոդվածը, որը վերաբերում է ընդհանուր առևտրային քաղաքականությանը: Առևտրային համաձայնագրերով նախատեսվում են ԵԸ ներկրվող ապրանքների առևտրային սահմանափակումների վերացում, երբեմն, ոչ փոխադարձության սկզբունքի հիման վրա՝ ի շահ երրորդ պետության: 1994թ. առևտրային համաձայնագրեր են կնքվել Մերձբալթյան երկրների, Էստոնիայի, Լատվիայի ու Լիտվայի հետ: Այդուհանդերձ, ելնելով այդ համաձայնագրերի սահմանափակ կարգավորման առարկայից՝ դրանք ներկայումս շատ հազվադեպ են կնքվում:

Համաձայնագրերի երկրորդ խումբը կազմում են *համագործակցության համաձայնագրերը*: Դրանք իրենց մեջ պարունակում են տնտեսական ու առևտրային հարցերում համագործակցությանը, ինչպես նաև առևտրի ազատականացմանն ուղղված միջոցառումներ: Համագործակցության համաձայնագրերում երբեմն նախատեսվում են երրորդ պետության հետ երկխոսության մեխանիզմներ՝ ներառյալ ԸԱԱՔ և ՈՂՄՀ հարցերում: ԵԸ-ը 1994թ. համագործակցության նման համաձայնագրեր կնքել է Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի և այլ երկրների հետ:

Փոխկապակցման համաձայնագրերի կնքման համար որպես իրավական հիմք է ծառայում ԵԸ-ի հիմնադրման մասին պայմանագրի 310-րդ հոդվածը, համաձայն որի, ԵԸ-ը կարող է մեկ կամ ավելի պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ կնքել փոխկապակցման վերաբերյալ համաձայնագրեր, որոնցով նախատեսվում են փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ, ընդհանուր գործողություններ և հատուկ ընթացակարգեր:

Փոխկապակցման համաձայնագրերով սահմանվում են սերտ հարաբերություններ երրորդ պետության կամ պետությունների խմբի հետ: Բա-

²⁵ St' u Karen E. Smith, European Union Foreign Policy in the Changing World: The EU's Foreign Policy instruments, The European Community pillar: Agreements with third countries, 2003, Great Britain, էջ 53:

ցի առևտրային ոլորտից, դրանք նախատեսում են համագործակցություն նաև այլ ոլորտներում, և երբեմն ներառում են արձանագրություններ, որոնք նախատեսում են փոխկապակցված երկր(ներ)ին ԵԸ-ի կողմից ցուցադրվող աջակցության փաթեթի ու ԵՆԲ-ի կողմից վարկերի տրամադրում: Փոխկապակցման համաձայնագրերը կառող են նույնիսկ ուղղված լինել մաքսային միությունը (օրինակ՝ Թուրքիայի հետ կնքված փոխկապակցման համաձայնագիրը) կամ ներքին շուկան ընդարձակելուն (օրինակ՝ Իսլանդիայի, Լիխտենշտեյնի և Նորվեգիայի հետ կնքված Եվրոպական տնտեսական գոտի հիմնադրելու մասին փոխկապակցման համաձայնագիրը): Փոխկապակցման համաձայնագրերը, որպես կանոն, կնքվում են ԵՄ-ին նոր պետությունների անդամակցության գործընթացը կազմակերպելու համար և կարող են ունենալ տարբեր անվանումներ: Դրանք կարող են անվանվել Եվրոպական համաձայնագրեր (ինչպիսիք կնքվել են 1994թ. Բուլղարիայի, Չեխիայի հանրապետության, Էստոնիայի Լատվիայի, Լիտվիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Սլովակիայի, Սլովենիայի հետ), Եվրո-Միջերկրծովյան համաձայնագրեր (կնքվել են 1996 թվականին Իսրայելի, Հորդանանի, Մարոկկոյի, Պաղեստինի և Թունիսի հետ), Կոտոնու կոնվենցիա (կնքվել է մի շարք աֆրիկյան, կարիբյան ու խաղաղօվկիանոսյան երկրների հետ)²⁶ :

ԵԸ-ի անունից միջազգային համաձայնագրերի կնքումն իրականացվում է որոշակի ընթացակարգային կանոններով, որոնք ամբողջական տեսքով ամրագրված են ԵԸ-ի հիմնադրման մասին պայմանագրի 300 հոդվածում: Ըստ այդմ, ԵԸ-ի հենասյան շրջանակներում միջազգային համաձայնագիր կնքելու նախաձեռնության դրսևորումը վերապահված է Եվրոպական հանձնաժողովին: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն, Եվրոպական հանձնաժողովը ԵԸ-ի և մեկ կամ ավելի պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ միջազգային համաձայնագրերի կնքման անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում ԵՄ-ի խորհրդին, որն էլ, իր հերթին, լիազորում է վերջինիս սկսել համապատասխան բանակցություններ: Սակայն այդ բանակցությունները վարելիս Եվրոպական հանձնաժողովը լիարժեք ազատություն չունի և պետք է դրանք վարի ԵՄ-ի խորհրդի կողմից այդ նպատակի համար ստեղծված հատուկ կոմիտեների հետ խորհրդակցելով ու նրա ընդունված

²⁶ Տե՛ս Karen E. Smith, *European Union Foreign Policy in the Changing World: The EU's Foreign Policy instruments, The European Community pillar: Agreements with third countries*, 2003, Great Britain, էջեր 53-56:

դիրեկտիվների ոգուն համապատասխան: Բանակցությունները հաջող վարելուց հետո տեղի է ունենում համաձայնեցված միջազգային համաձայնագրի տեքստի կնքում, որն արդեն իրականացվում է ԵՄ-ի խորհրդի կողմից²⁷:

ԵԸ-ի արտաքին իրավասությունը միանգամից չի ձևավորվել և որպես այդպիսին հղկվել է ԵԸ-ների դատարանի նախադեպային իրավունքի ու հիմնադիր պայմանագրերի փոփոխության արդյունքում: Նախ նշենք, որ վերագրելիության սկզբունքի համաձայն, ԵԸ-ն իր արտաքին իրավասությունը կարող էր իրականացնել միայն այն ոլորտներում, որոնք հստակ կերպով նախատեսված էին Պայմանագրով: Ինչպես արդեն նշվեց վերը, ԵՏԸ հիմնադրման նասին պայմանագրում առկա էին միջազգային համաձայնագրերի կնքմանն ուղղված միայն մի քանի հոդվածներ, ինչը սահմանափակում էր ամենատարբեր ոլորտներում ԵՏԸ-ի կողմից միջազգային համաձայնագրերի կնքման հնարավորությունը: Այս բացը լրացվեց ԵԸ-ների դատարանի միջամտության շնորհիվ: ԵԸ-ների դատարանն արտաքին իրավասության ոլորտում հստակ Պայմանագրային իրավական հիմքերին զուգահեռ ստեղծեց ենթադրյալ արտաքին իրավասության դոկտրինան, որը գործում է այն ոլորտներում, որտեղ Պայմանագիրը հստակ կերպով չի նախատեսում արտաքին իրավասություն:

Ենթադրյալ արտաքին իրավասության դոկտրինան իր ծնունդն է ստացել ERTA-ի²⁸ գործում: ԵԸ-ների դատարանը այդ գործում սահմանեց, որ որոշակի կոնկրետ դեպքում Ընկերակցության միջազգային համաձայնագրեր կնքելու իրավասությունը պարզելու համար անհրաժեշտ է Պայմանագրի ամբողջ կառուցվածքը հաշվի առնել ոչ պակաս, քան նրա կոնկրետ դրույթները և ավելացրեց, որ այդպիսի իրավասությունը բխում է ոչ միայն Պայմանագրի հստակ սահմանումներից, ինչպես օրինակ՝ տարիֆային, առևտրային և փոխկապակցման համաձայնագրերի դեպքում, այնպես էլ կարող է հավասարապես բխել Պայմանագրի այլ դրույթներից ու համապատասխան դրույթների համակարգի շրջանակներում ԵԸ-ի ինստիտուտների կողմից ընդունված միջոցներից²⁹:

²⁷ St' u article 300 of the Consolidated version of the Treaty Establishing the European Community{2002} OJ C 325/33:

²⁸ St' u Commission v. Council (ERTA), Case22/70 [1971] ECR 263.

²⁹ St' u Piet Eeckhout, External Relations of the European Union, The doctrine of implied powers: The AETR case: implied v. conferred powers, Oxford, 2005, page 61:

ERTA-ի գործում ԵԸ-ների դատարանը ոչ միայն սահմանեց ենթադրյալ արտաքին իրավասության առկայության հնարավորությունը, այլև հաստատեց դրա բացառիկության կանխավարկածը նշելով, որ յուրաքանչյուր դեպքում, երբ ԵԸ-ը Պայմանագրով նախատեսված ընդհանուր քաղաքականություն իրականացնելու նպատակով ընդունում է ընդհանուր կանոններ, անդամ պետություններն այլևս իրավունք չունեն անահատական կամ կոլեկտիվ կերպով երրորդ պետությունների հանդեպ ստանձնել պարտականություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ կանոնների վրա:³⁰

Բացառիկ արտաքին իրավասությանը զուգահեռ տեսության մեջ տարբերակում են նաև համատեղ արտաքին իրավասությունը, որն առկա է այն դեպքում, երբ միջազգային համաձայնագիրը չի կարող կնքվել այն պատճառով, որ համաձայնագրի առարկան ամբողջությամբ չի մտնում ԵԸ-ի իրավասության մեջ, սակայն, մյուս կողմից էլ, այն հանդիսանում է անդամ-պետությունների իրավասության առարկա: Վերջիններս, դառնալով պայմանագրի կողմ, կարծես լրացնում են ԵԸ-ի ոչ բավարար պայմանագրային իրավունակությունը: Համատեղ իրավասությամբ կնքված միջազգային համաձայնագրերը անվանվում են խառը համաձայնագրեր:³¹

Որպես այդպիսին, կարող են վկայակոչվել գործընկերության և համագործակցության համաձայնագրերը (օրինակ՝ մի կողմից՝ ՀՀ-ի, և մյուս կողմից՝ ԵԸ-ի ու անդամ-պետությունների միջև 1996թ. կնքված ԳՀՀ-ը):

ԵԸ-ի արտաքին իրավասության իրականացումը ենթադրում է, առաջին հերթին, իր հարևան երկրների հետ հարաբերությունների հաստատում: Ղա գերակա ուղղություն դարձավ 1992թ. ԵՄ-ի երկրորդ հենասյունը հանդիսացող ԸԱԱՔ շրջանառության մեջ ներդնումից հետո: ԸԱԱՔ վերաբերյալ Եվրոպական խորհրդի կողմից ընդունված հաղորդագրության մեջ սահմանվեցին համատեղ գործողությունների իրականացման երկու տարածաշրջանային առաջնայնություններ՝ ԿԱԵ-ն և Միջերկրական ծո-

³⁰ Տե՛ս հղում²⁹:

³¹ Տե՛ս Panos Koutrakos, EU International Relations Law, Oxford and Portland, Oregon, 2006, էջ 137:

վր: Առաջինի մեջ մտնում էին նախկին ԽՍՀՄ-ի երկրները ու Բալկանները, իսկ երկրորդի մեջ՝ Մերձավոր Արևելքը:³²

Հարևանների հետ հարաբերությունների հաստատումը որպես ռազմավարական նպատակ սահմանվեց նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից 2000թ. փետրվարին, իսկ դրան առաջնահերթ տեղ հատկացվեց Եվրոպական խորհրդի կողմից 2003թ. ընդունված ԵԱՌ-ի մեջ, որում ասվում էր, որ հարևանների հետ հարաբերությունների կառուցումը հանդիսանում է ԵՄ-ի անվտանգության քաղաքականության երեք հիմնական նպատակներից մեկը:³³

Նշված նպատակների հասնելու շահագրգռվածությունից ելնելով էլ մշակվեց *Եվրոպական հարևանության քաղաքականությունը*, որը հանդիսանում է ԵԸ-ի արտաքին իրավասության բաղկացուցիչ մասը: Այն ստեղծվել է 2004 թվականին՝ նպատակ ունենալով կանխել ԵՄ-ի և նրա հարևանների միջև նոր բաժանարար գծերի առաջացումը և նպաստել նրանց զարգացմանը, կայունության և անվտանգության ամրապնդմանը: ԵՀՔ-ի մասին առաջին անգամ ակնարկվել է 2003թ. մարտին Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված Ընդլայնված Եվրոպայի մասին հաղորդագրության մեջ³⁴: Դրան հաջորդեց 2004թ. մայիսին ԵՀՔ մասին ռազմավարական փաստաթղթի ընդունումը³⁵՝ սահմանելով այն պայմանները, որոնցով ԵՄ-ն առաջարկում է համագործակցել իր հարևան երկրների հետ:

ԵՀՔ-ը կիրառվում է ԵՄ-ի անմիջական ցամաքային կամ ծովային հարևանների հետ հարաբերություններում, ինչպիսին են համարվում Ադրբեյջանը, Ալժիրը, Բելոռուսը, Եգիպտոսը, Թունիսը, Լիբանանը, Լիբիան, Հայաստանը, Հորդանանը, Մարոկկոն, Մոլդովան, Պաղեստինը, Սիրիան, Վրաստանը և Ուկրաինան: ԵՀՔ-ի շրջանակներում ԵՄ-ն առաջարկում է արտոնյալ հարաբերություններ՝ հիմնված ընդհանուր արժեքներից բխող (ժողովրդավարություն, իրավունքի գերակայություն, արդյունավետ վար-

³² St'u report by Marius Vahl, International agreements in EU neighbourhood policy, Stockholm: Means and objectives of EU neighbourhood policy: The aims of EU neighbourhood policy, 2006, էջ 14:

³³ St'u հղում ³²:

³⁴ St'u Communication from the Commission to the Council and the European Parliament on Wider Europe-Neighbourhood: A new framework for relation with our Eastern and Southern Neighbours, Brussels, 11.03.2003, COM (2003) 104 final: (http://ec.europa.eu/world/enp/pdf/com03_104_en.pdf):

³⁵ St'u Communication from the Commission on European Neighbourhood policy, Strategy Paper, Brussels, 12.05.2004 COM (2004) 373 final

չարարություն և այլն) փոխադարձ պարտավորությունների վրա: Ընդ որում, ԵՀԲ-ը կառուցվում է ԵՄ-ի ու հարևան երկրների միջև արդեն գոյություն ունեցող համաձայնագրերի հիման վրա (ինչպես օրինակ ԳՀՀ-երը, փոխկապակցման համաձայնագրերը):

ԵՀԲ-ի իրականացման հիմնական գործիքը հանդիսանում է երկկողմանի գործողությունների ծրագիրը, որը համաձայնեցվում է ԵՄ-ի և յուրաքանչյուր գործընկեր երկրի միջև: Դրանով սահմանվում է քաղաքական և տնտեսական բարեփոխումների իրականացման ժամանակացույցը՝ կարճաժամկետ և երկարաժամկետ առաջնայնություններով: Գործողությունների ծրագրի իմպլեմենտացիայի ընթացքը խթանվում և դիտարկվում է ենթակոմիտեների կողմից:

ԵԸ-ը երրորդ պետությունների հետ կնքված միջազգային համաձայնագրերի դրույթների պատշաճ իրագործումն ապահովելու նպատակով կիրառում է մի շարք գործիքներ, որոնք ուղղված են ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքում գործընկեր երկրներին աջակցություն ցուցաբերելուն: Այդպիսի գործիքներ են հանդիսանում ՏԱՄԻՍ-ը, ԵՀԳԳ-ը, ԹԱՅԵՔՍ-ը, ԹՎԻՆՆԻՆԳ-ը, ՏՐԱՍԵԿԱ-ն և ԻՆՕԳԵՅԹ-ը, որոնք, լայն առումով, իրենցից ներկայացնում են տարածաշրջանային համագործակցությունն ամրապնդող ծրագրեր:

Այսպես, **ՏԱՄԻՍ**³⁶ ծրագիրն այն հիմնական գործիքն է, որի օգնությամբ ԵԸ-ն օժանդակում է ԱՊՀ երկրների (Ադրբեջանի, Բելառուսի, Թուրքմենստանի, Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Մոնղոլիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի և Ուկրաինայի) հետ ԳՀՀ-երի իրականացմանը: Տրամադրվող օժանդակությունը տեխնիկական բնույթ է կրում և նպատակաողղված է գործընկերների կողմից շուկայական տնտեսության անցման խթանմանը, ինչպես նաև ժողովրդավարության ու իրավունքի գերակայության ամրապնդմանը³⁷:

³⁶Տեխնիկական աջակցություն ԱՊՀ երկրներին ծրագրի հապավումն է (Technical Assistance to the CIS):

³⁷ Տե՛ս Europe, Activities of the European Union: TACIS programme (2000-2006) (available at <http://europa.eu/scadplus/leg/en/lvb/r17003.htm>, visited in March, 2009)

Հաջորդ գործիքը ԵՀԲ-ի շրջանակներում 2006թ. ընդունված կանանակարգով³⁸ ստեղծված ԵՀԳԳ-ն է, որը փոխարինեց ՏԱՄԻՍ-ին: Այն լայն հնարավորություններ է բացում գործընկեր-երկրների համար, այդ թվում՝ առաջարկում է համագործակցության նոր ձևեր, որոնք հնարավորություն են տալիս վերջիններիս առավելագույնս մոտենալ Եվրոպական նորմերին ու ստանդարտներին բազմաթիվ բնագավառներում: ԵՀԳԳ-ը, մասնավորապես, նպատակ ունի խթանել ու աջակցել հետևյալ բնագավառներում հետագա առաջխաղացմանը.

- քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ,
- օրենսդրության մոտարկման գործընթաց,
- իրավունքի գերակայություն և վարչարարություն,
- կայուն զարգացում բոլոր ոլորտներում,
- շրջակա միջավայրի պաշտպանություն,
- աղքատության վերացման քաղաքականություն,
- սոցիալական զարգացման, սեռերի հավասարության և խտրականության բացառման քաղաքականություններ,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ներառյալ՝ կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն,
- ժողովրդավարացում և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության ակտիվացում,
- շուկայական տնտեսության զարգացում, այդ թվում՝ աջակցություն մասնավոր հատվածին, միջին ու մանր ձեռնարկությունների ուժեղացում³⁹:

Երրորդ պետությունների հետ հարաբերություններում ԵԸ-ի արտաքին իրավասության իրականացման համար առանցքային նշանակություն ունեցող հաջորդ գործիքը ԹԱՅԵՔՍ-ն է⁴⁰ է՝ Եվրոպական հանձնաժողովի Ընդլայնման գլխավոր տնօրինության տեխնիկական օժանդակության և տեղեկատվության փոխանակման գործիքը: Գործելով սկսած 1996թ.-ից՝ ԹԱՅԵՔՍ-ը տրամադրում է կարճաժամկետ տեխնիկական օժանդակություն ԵՄ-ի օրենսդրության մոտարկման և կիրարկման ապահովման ուղղությամբ: ԹԱՅԵՔՍ-ի գործողությունն ընդգրկում է այնպիսի ոլորտներ,

³⁸ St'e'u regulation (EC) No1638/2006 of the European Parliament and of the Council of 24 October 2006 laying down general provisions establishing a European Neighbourhood and Partnership instrument, OJ L310/1

³⁹ St'e'u Nicholas MOUSSIS; Access to European Union; 16th edition; European Study Service; 2007 չճ»հ 518-519

⁴⁰ Technical Assistance and Information Exchange Instrument:

ինչպիսիք են գյուղատնտեսությունը, անկախությունը, ազատությունը և անվտանգությունը, ԵՄ-ի ներքին շուկան, տրանսպորտը, էներգետիկան ու շրջակա միջավայրը⁴¹ :

ԹԱՅԵՔՍ-ի գործողության մեկնարկային կետը հանդիսանում է շահառու երկրի⁴² շահագրգռված կառույցի կողմից այդ մասին ներկայացվող դիմումը: Նախարարությունները, ծառայություններն ու գերատեսչություններն իրենք են գնահատում իրենց կարիքները և հանդես գալիս համապատասխան դիմումով: Դիմումի մեջ պետք է անպայմանորեն նշված լինեն այն ներկայացնելու պատճառները և նպատակները:⁴³

ԹԱՅԵՔՍ-ն արագ և ճկուն գործիքի համբավ ունի, քանի որ դիմումին պատասխանելը, որպես կանոն, տևում է 2-4 շաբաթ, իսկ պահանջվող օժանդակությունը կազմակերպելը՝ 5-10 շաբաթ:

ԹԱՅԵՔՍ-ի հիմնական խնդիրներն են.

- շահառու երկրներին տեխնիկական օժանդակության և խորհրդատվության տրամադրում՝ ազգային օրենսդրությունը ԵՄ-ի օրենսդրությանը ներդաշնակեցնելու, ԵՄ-ի օրենսդրության արդյունավետ կիրարկումն ապահովելու նպատակով,

- ԵՄ-ի նորանդամ 12 պետությունների պետական ծառայողների անհրաժեշտ մասնագիտական վերապատրաստման ապահովում,

- Արևմտյան Բալկանների երկրներին պլանավորված տեխնիկական օժանդակության տրամադրում,

- ԵՄ-ի օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և տարածման ապահովումը,

- օրենսդրությունների մոտարկման գործընթացի դիտարկման հեշտացման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև հետագա օժանդակություն:

⁴¹ St'u Председательство Европейской Комиссии в России, Программа сотрудничества ЕС-Россия (ТАСИС/ЕИСР), Инструмент TAIEХ (http://www.delrus.ec.europa.eu/ru/p_722.htm)

⁴² ԹԱՅԵՔՍ-ի օժանդակության շրջանակներում ներգրավված են հետևյալ շահառու երկրները. Կիպրոս, Չեխիա, Էստոնիա, Յունգարիա, Լատվիա, Լիտվա, Մալթա, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա, Բուլղարիա, Ռումինիա, Խորվաթիա, Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետությունը և Թուրքիա, Կիպրոսի թուրքական համայնքը, Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Սերբիա, Մոնտենեգրո և Կոսովո, Ալժիր, Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Եգիպտոս, Վրաստան, Իսրայել, Հորդանան, Լիբանան, Լիբիա, Մոլդովա, Մարոկկո, Պաղեստինյան Ինքնավարություն, Սիրիա, Ուկրաինա և Ռուսաստան:

⁴³ St'u հղում 41:

ԹԱՅԵՔՍ-ի կողմից տրամադրվում են նաև հետևյալն ընթացիկ ծառայությունները.

- փորձագետների գործուղում շահառու երկրներ՝ ԵՄ-ի օրենսդրության մեկնաբանման և ազգային օրենսդրության հետ դրա մոտարկման, ինչպես նաև նախատեսվող իրավական ակտերի կիրարկմանն ուղղված մասնագիտական օժանդակության տրամադրման նպատակով,

- ԵՄ-ի անդամ-պետություններ շահառու երկրների պետական ծառայողների ուսուցողական գործուղումների կազմակերպում՝ վերջիններիս ԵՄ-ում օրենսդրության իրագործման և արդյունավետ կիրարկման գործնական խնդիրներին ծանաթացմելու նպատակով,

- ԵՄ-ի օրենսդրությանը վերաբերող հիմնախնդիրների մեկնաբանման նպատակով լայն զանգվածների համար նախատեսված սեմինարների և գործնական քննարկումների կազմակերպում,

- վարչական կառույցներում աշխատակիցների մասնագիտական որակավորման մակարդակը բարձրացնելու նպատակով ուսուցողական դասընթացների կազմակերպումը,

- փորձագիտական գնահատականների միջոցով գործընթացի առաջընթացի դիտարկում և վերլուծությունը,

- ԵՄ-ի օրենսդրության վերաբերյալ տվյալների բազայի և տեղեկատվական փաթեթների տեսքով համապատասխան տեղեկատվության ստացում ու տրամադրում,

- ԵՄ-ի օրենսդրության թարգմանության կազմակերպման նպատակով խորհրդատվության տրամադրում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, թարգմանչության ապահովումը շահառու երկրների կամ Եվրոպական հանձնաժողովի համապատասխան հաստատությունների համար:⁴⁴

Ընհանուր առմամբ, ԹԱՅԵՔՍ-ի օժանդակությունն ուղղվում է այն ոլորտներին (ինչպես հանրային, այնպես էլ՝ մասնավոր), որոնք շահառու երկրներում դերակատարություն ունեն ազգային օրենսդրությունը եվրոպականին ներդաշնակեցնելու հարցում: Որպես այդպիսի թիրախային խմբեր հանդիսանում են հանրային կառավարման ոլորտում աշխատող քաղաքացիական ծառայողները, օրենսդիր, դատական և իրավապահ մարմինները, ինչպես նաև մասնագիտական և առևտրային ասոցիացիա-

⁴⁴ Տե՛ս official site of The Ministry of Economy of Republic of Armenia: Technical Assistance and Information Exchange Instrument (<http://www.mineconomy.am/en/60/>)

ները, արհմիությունները և առևտրային միություններն օրենսդրական փաստաթղթեր մեկնաբանողները, թարգմանիչներն ու խմբագրողները⁴⁵:

ԵՄ-ի արտաքին իրավասության իրականացման ծրագրային գործիքներից է նաև **ԹՎԻՆՆԻՆԳ**-ը, որը մշակվել է 1997թ. Եվրոպական հանձնաժողովի կողմից և մեկնարկել 1998թ.՝ նպատակ ունենալով օժանդակել ԵՄ-ի օրենսդրության իտեգրմանը շահառու երկրների օրենսդրության մեջ: Տվյալ ժամանակաշրջանում այդպիսի շահառու երկրներ հանդիսանում էին ԵՄ-ին անդամակցելուն հավակնող ԿԱԵ-ի երկրները, որտեղ ծրագիրը հայտնի էր PHARE անվանումով: ԹՎԻՆՆԻՆԳ ծրագրով ցուցադրվող աջակցությունն արտահայտվում է շահառու երկրներում համապատասխան կառուցվածքներով, մարդկային պաշարներով, կառավարչական հմտություններով զուգորդված ժամանակակից ու արդյունավետ վարչարարություն ներդնելու մեջ, որն անհրաժեշտ է *acquis communautaire*-ի պատշաճ մակարդակով իմպլեմենտացնելու համար:

ԹՎԻՆՆԻՆԳ-ի տարածքային գործողության շրջանակներն ստեղծումից հետո ընդարձակվել են՝ ընդգրկելով նոր տարածաշրջաններ: Ընդ որում, այդ տարածաշրջաններից յուրաքանչյուրում ԹՎԻՆՆԻՆԳ-ը կիրառվել է ԵՄ-ի տարբեր ծրագրերի շրջանակներում: Այդպիսի տարածաշրջաններ հանդիսացել են Արևմտյան Բալկանները (2002թ.-ից՝ CARDS ծրագրի շրջանակներում), Միջերկրածովյան երկրները (2004թ.-ից՝ MEDA ծրագրի շրջանակներում) և նոր անկախացած երկրները (2005թ.-ից՝ SUSA ծրագրի շրջանակներում)⁴⁶:

ԹՎԻՆՆԻՆԳ ծրագիրը համագործակցության ընդհանուր եզրեր է ստեղծում շահառու երկրի և ԵՄ-ի անդամ-պետություններից որևէ մեկի միջև՝ նպատակ ունենալով զարգացնել շահառու երկրի ինստիտուցիոնալ կարողություններն այնպես, որ նա կարողանա անդամ-պետությունների նման իմպլեմենտացնել ԵՄ-ի օրենսդրությունը պահանջվող չափորոշիչներին համապատասխան: ԹՎԻՆՆԻՆԳ ծրագրի իրականացման դեպքում շահառու երկիրն ազատ է ԵՄ-ի անդամ-պետության ընտրության հարցում, որի հետ ինքը ցանկանում է աշխատել⁴⁷: ԹՎԻՆՆԻՆԳ-ի ցանկացած ծրագրի առաջին քայլը շահառու երկրի կողմից սեփական կարիք-

⁴⁵ Տե՛ս TAIEX official site: About TAIEX, Introduction (<http://taiex.ec.europa.eu>)

⁴⁶ Տե՛ս Center for Adaptation of the Civil Servants to the Standards of the European Union's official site: Twinning, History (<http://www.center.gov.ua/en/210.htm>)

⁴⁷ Տե՛ս Twinning brochure: What is Twinning? էջ 8

(http://www.abgs.gov.tr/files/Eslestirme/twinning_brochure_2005_en.pdf):

ների գնահատումն է, որն էլ հիմք է ծառայում ԹՎԻՆՆԻՆԳ-ի ծրագրային առաջարկի համար: Հետևաբար անդամ-պետությանը առաջարկվում է ներկայացնել ԹՎԻՆՆԻՆԳ-ի ծրագիրը՝ մատնանշելով պետական համապատասխան բնագավառում պահանջվող օժանդակությունը: Այնուհետև ԹՎԻՆՆԻՆԳ-ի առաջարկն ուղարկվում է շահառու երկրին, և ընտրական հատուկ գործընթացից հետո շահառու երկրի հայեցողությանն է թողնվում սեփական կարիքները լավագույն կերպով արտացոլող ծրագրի ընտրության հնարավորությունը: Դրան հաջորդում է արդեն գործընկեր-երկրների միջև համագործակցության իրականացման վերաբերյալ աշխատանքային ծրագրի մշակումը:⁴⁸

ԹՎԻՆՆԻՆԳ ծրագրի հիմնական առանձնահատկությունն արտա-յատվում է նրանում, որ այն ենթադրում է ԵՄ-ի օրենսդրության իմպլեմենտացման փորձի ուղղակի փոխանակություն:⁴⁹ Բացի այդ, ի տարբերություն տեխնիկական աջակցության մյուս ծրագրերի, ԹՎԻՆՆԻՆԳ-ի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ոչ թե նպատակ է հետապնդում՝ նպաստել ընդհանուր համագործակցությանը, այլ միտված է որոշակի պարտադիր արդյունքի ձեռքբերմանը:⁵⁰ Այն ձեռք է բերվում համապատասխան մեխանիզմի կիրառման միջոցով: Նախ, ԹՎԻՆՆԻՆԳ-ի յուրաքանչյուր ծրագիր ենթադրում է հանրային ոլորտից կամ համապատասխան մարմնից առնվազն մեկ ԹՎԻՆՆԻՆԳ-ի ռեզիդենտ խորհրդատուի ու Ծրագրի ղեկավարի գործուղում շահառու երկիր: TWINNING-ի ռեզիդենտ խորհրդատուն անդամ-պետության կողմից ուղարկվում է գործընկեր-երկրի համապատասխան նախարարություն՝ նվազագույնը 12 ամիս ժամկետով աշխատելու և ծրագիրն իրագործելու համար, իսկ ծրագրի ղեկավարը պատասխանատվություն է կրում ամբողջական վստահության ապահովման ու ծրագրի համակարգման համար:⁵¹ Բացի այդ, Ծրագրի պատշաճ կենսագործումն ապահովելու նպատակով, վերը բերված ձեռնարկումները լրացվում են նաև ԵՄ-ի գործընկեր անդամ-պետության կողմից որոշակի ժամկետով համապատասխան փորձագետներ-

⁴⁸ Տե՛ս հղում 44:

⁴⁹ Տե՛ս Center for Adaptation of the Civil Servants to the Standarts of the European Union's official site: Definition of Twinning (<http://www.center.gov.ua/en/210.htm>)

⁵⁰ Տե՛ս Institution Building in the Framework of Euroean Union Policies, A Reference Manual on Twinning Projects adopted by European Commission: Section Two, Components of Twinning Project, may 2005, էջ 14 (http://ec.europa.eu/enlargement/pdf/financial_assistance/institution_building/manual_2005_en.pdf)

⁵¹ Տե՛ս հղում 47:

րից բաղկացած առաքելություններ ուղարկելով, ուսումնական միջոցառումներ կազմակերպելով, իրազեկությունը բարձրացնող այցերով և այլ օժանդակ միջոցներով:

Եվրոպական հանձնաժողովի հետ փոխգործակցության անհրաժեշտությունից ելնելով՝ ԹՎԻՆՆԻՆԳ-ի շրջանակներում շահառու պետության կողմից հիմնադրվում է Ազգային կոնտակտային մարմին: Վերջինս կոչված է կապող օղակ հանդիսանալ շահառու երկրի և Եվրոպական հանձնաժողովի, այլ շահառու երկրների ու անդամ-պետությունների Կոնտակտային մարմինների հետ հաղորդակցման միջև:⁵²

ԹՎԻՆՆԻՆԳ-ը շահառու երկրներին տրամադրում է ոչ միայն տեխնիկական և վարչական օժանդակություն, այլ նաև օգնում է երկարատև հարաբերություններ հաստատել ԵՄ-ի հին, նոր և ապագա անդամ երկրների հետ, և շահառու երկրների համար ավելի լայն հնարավորություններ է ստեղծում շփվելու ԵՄ-ում առկա վարչական փորձի հետ:

Հիմնադրման պահից ի վեր, իրականացվել են ավելի քան 1000 ԹՎԻՆՆԻՆԳ ծրագրեր, որոնք կարևոր դեր են խաղացել օրենսդրության մոտարկման ու հանրային կառավարման լավագույն պրակտիկան շահառու երկրներում ներդնելու հարցում: Դրանցից շատերը վերաբերել են ազատության ու անվտանգության, ներքին շուկայի հարցերին, գյուղատնտեսությանը, ձկնագործությանը, բնապահպանական, սոցիալական քաղաքականությանը և այլն:⁵³

ԵԸ-ի արտաքին քաղաքականության ծրագրային գործիք է հանդիսանում **ՏՐԱՍԵԿԱ**-ն, որն ստեղծվել է 1993թ. Բրյուսելում կայացած համաժողովի ժամանակ Թուրքմենստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ղազախստանի, Ռեպեկստանի, Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի միջև կնքված համաձայնագրի հիման վրա: 1996-1998թթ. ընթացքում ծրագրին միացան նաև Մոլդովան և Ուկրաինան, ապա՝ Բուլղարիան, Ռումինիան և Թուրքիան: ՏՐԱՍԵԿԱ-ն հանդիսանում է ՏԱՍԻՍ ծրագրի բաղկացուցիչ մասը և ֆինանսավորվում է դրա շրջանակներում: Դրա

⁵² Տե՛ս Institution Building in the Framework of European Union Policies, A Reference Manual on Twinning Projects adopted by European Commission: Section Two, Components of Twinning Project, may 2005, էջ 19: (http://ec.europa.eu/enlargement/pdf/financial_assistance/institution_building/manual_2005_en.pdf)

Տե՛ս հղում 50, էջ 19:

⁵³ Տե՛ս Twinning brochure: Introduction էջ 4 (http://www.abgs.gov.tr/files/Eslestirme/twinning_brochure_2005_en.pdf):

հիմնական նպատակներն են ստեղծել Եվրոպա-Ասիա-Կովկաս միջանցքի զարգացման համար ազդակներ՝ որպես Անդրսիբիրյան երթուղուն այլընտրանք, միացնել ՏՐԱՍԵԿԱ միջանցքը Եվրոպական տրանսպորտային ցանցերին, նպաստել ԱՊՀ-ի երկրների քաղաքական ու տնտեսական անկախությանը:⁵⁴

Ի զարգացում ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում համագործակցության, 1999թ. սեպտեմբերի 8-ին Բաքվում «Պատմական Մետաքսյա Ճանապարհը Վերականգնելու» խորագրով տեղի ունեցած համաժողովի ժամանակ համագործակցության մասնակիցներն ստորագրեցին «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացման միջազգային տրանսպորտի մասին» բազմակողմ համաձայնագիրը: Դրանով հռչակվող նպատակներն են հանդիսանում Եվրոպայի, Սև Ծովի, Կովկասի, Կասպից Ծովի ու Ասիայի միջև տնտեսական հարաբերությունների, առևտրի ու տրանսպորտային հաղորդակցության զարգացումը, ավտոմոբիլային, օդային և երկաթուղային տրանսպորտի, այդ թվում առևտրային նավագնացության միջազգային շուկայի մեջ ինտեգրվելուն նպաստելը, տեղաշարժման անվտանգության, ուղեբեռների ամբողջականության և շրջակա միջավայրի պաշտպանության ապահովումը, տրանսպորտային քաղաքականության ու տրանսպորտային իրավական դաշտի ներդաշնակեցումը և տրանսպորտի տարբեր տեսակների միջև մրցակցության հավասար պայմաններ ստեղծումը:

Հաջորդ ծրագրային գործիքը հանդիսանում է **ԻՆՕԳԵՅԹ**-ը⁵⁵: Ստեղծվելով 1995թ. ՏԱՍԻՍ ծրագրի շրջանակներում՝ այն ուղղված է ԵՄ-ի, Սև և Կասպից ծովերի ծովափնյա երկրների ու նրանց հարևանների էներգետիկ համագործակցության զարգացմանը⁵⁶: Համագործակցությունն ընդգրկում է նավթի, գազի ու էներգիայի ոլորտները: Համագործակցության նպատակներ են հռչակվել էներգետիկ շուկաների միավորումը, էներգետիկ անվտանգության խթանումը, կայուն էներգետիկ զարգացմանը նպաստելը և ներդրումային միջոցների ներգրավումը:

⁵⁴ Տե՛ս TRACECA ONLINE official site, (<http://www.mt.ro/traceca/english/indexen.html>)

⁵⁵ Interstate Oil and Gas Transportation to Europe – <http://www.inogate.org>

⁵⁶ ԻՆՕԳԵՅԹ ծրագրին մասնակցում են Թուրքմենստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Ղազախստանը, Ռեբեկստանը, Հայաստանը, Ադրբեյջանը, Վրաստանը, Բելառուսը, Մոլդովան, Ուկրաինան, Թուրքիան և Ռուսաստանը (վերջինս դիտորդի կարգավիճակով):

Այսպիսով, ԵԸ-ն ունի հստակ ձևավորված արտաքին իրավասություն, որը կայացել է ինտեգրացիայի խորացմանը զուգահեռ և աչքի է ընկնում իրականացման գործիքների բազմազանությամբ:

1.4 Եվրոպական Միության առաջին և երկրորդ հենասյուների փոխկապակցությունն արտաքին քաղաքականության ոլորտում

Ինչպես նշվեց վերևում, ԵՄ-ը հիմնված է երեք հենասյուների վրա: Դրանց տարանջատումն արդեն իսկ հուշում է նրանց միջև տարբերությունների առկայության մասին: Սակայն նախքան տարբերություններին անդրադառնալը փորձենք վերհանել, թե ինչպիսի ընդհանրությունն են առկա հենասյուների միջև:

Հենասյուներից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է համագործակցության ինքնուրույն մեխանիզ և հանդիսանում ԵՄ-ի քաղկացուցիչ մասը: Հենասյուների համար գործում է մեկ միասնական ինստիտուցիոնալ համակարգ, ինչն ավելի ցայտուն է արտահայտում հենասյուների միջև առկա կապը: Ավելին, հենասյուները չեն տարբերվում նաև համագործակցության մասնակիցների առումով, քանի որ դրան, թեկուզև որոշ վերապահումներով, մասնակցում են նույն անդամ-պետությունները: Հենասյուների միջև ընդհանրություն գոյություն ունի նաև իրենց առջև դրված նպատակների առումով: Մասնավորապես, ԵԸ-ի հիմնադրման մասին պայմանագրի 2-րդ հոդվածը, ինչպես և երկրորդ և երրորդ հենասյուների կարգավորմանը նվիրված ԵՄ-ի հիմնադրման մասին պայմանագիրն ի դեմս իր 2-րդ հոդվածի որպես նպատակ հռչակում են զբաղվածության խթանումը⁵⁷:

Այս ամենով հանդերձ, հենասյուների միջև առկա են խիստ բովանդակային տարբերություններ՝ պայմանավորված դրանց շրջանակներում հաստատված են տարբեր իրավական ռեժիմներով: Առաջին՝ ԵԸ-ի հենասյան շրջանակներում համագործակցությունը կառուցված է վերպետական համագործակցության սկզբունքի հիման վրա, ինչը նշանակում է, որ համապատասխան ոլորտներում անդամ-պետություններն իրենց ինքնիշխան իրավունքները փոխանցել են ինտեգրացիոն կազմավորմանը, որն էլ որոշում է քաղաքականության կանոններն այդ ոլորտներում: Այլ

⁵⁷ Տե՛ս article 2 of the Consolidated version of the Treaty Establishing the European Community {2002} OJ C 325/33 and article 2 of the Consolidated version of the Treaty on European Union {2002} OJ C 325/5:

կերպ ասած, ինտեգրացիոն կազմավորման մարմիններն օժտված են անդամ-պետությունների համար համարպարտադիր բնույթ կրող որոշումներ ընդունելու իրավասությամբ: Նույնը չենք կարող ասել երկրորդ և երրորդ հենասյունների մասին, որոնք քաղաքականության իրականացման ընտրված ձևաչափի առումով էապես տարբերվում են առաջինից այն պարզ պատճառով, որ համագործակցության հիմքում ընկած է ավադական միջազգային կազմակերպություններին (ԵԽ, ՄԱԿ և այլն) բնորոշ միջկառավարական սկզբունքը, ինչը ենթադրում է, որ համագործակցության մասնակից պետություններն իրենց ինքնիշխան իրավունքները համագործակցության ոլորտներում չեն փոխանցել ինտեգրացիոն կազմավորմանը: Իհարկե, սա բնական է, քանի որ ԸԱԱԲ-ը և ՈՂՄՀ-ը հանդիսանում են քաղականության շատ նուրբ սեզմենտներ, ազգային ինքնիշխանության կարևորագույն տարրեր, և այս պայմաններում ԵՄ-ի անդամ-պետությունները դժվար թե միանգամից համաձայնեին զիջել իրենց ինքնիշխանությունն այդչափ կարևոր ոլորտներում:

Հենասյուները միմյանցից տարբերվում են նաև քաղաքականության իրականացման միջոցներով: Առաջին հենասյան շրջանակներում քաղաքականության իրականացման հիմնական միջոցներ հանդիսանում են կանոնակարգերը, դիրեկտիվները և որոշումները, որոնք, ունենալով նորմատիվ բնույթ, իրավունքներ ու պարտականություններ են առաջացնում ոչ միայն անդամ-պետությունների, այլ նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար:

Երկրորդ հենասյան շրջանակներում, որպես քաղաքականության իրականացման հիմնական միջոցներ հանդես են գալիս ընդհանուր ռազմավարությունները, ընդհանուր դիրքորոշումները, համատեղ գործողությունները, իսկ երրորդ հենասյան շրջանակներում՝ ընդհանուր դիրքորոշումները, համատեղ գործողությունները, որոշումները, շրջանակային որոշումները և կոնվենցիաները: Վերջիններս միայն պարտադիր են անդամ պետությունների, բայց բնավ ոչ ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար, և նրանց համար իրավունքներ ու պարտականություններ ստեղծել չեն կարող, քանի որ ուղղակի գործողություն չունեն:

Հենասյուները միմյանցից տարբերվում են նաև դերակատարների առումով: Եթե առաջին հենասյան շրջանակներում քիչ, թե շատ ծանրակշիռ դերակատարություն ունեն բոլոր ինստիտուտները, ապա երկրորդ ու երրորդ հենասյուների շրջանակներում այդպիսիք հանդիսանում են միայն ԵՄ-ի խորհուրդը և Եվրոպական խորհուրդը: Եվրոպական հանձնաժողով-

վը և Եվրոպական խորհրդարանն այդ հենասյուների շրջանակներում քաղաքականության մշակմանը և իրականացմանը չեն մասնակցում, այլ բավարարվում են դրա վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելով և մշակվող ու իրականացվող քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն ստանալով:

Ինչ վերաբերում է ԵԸ-ների դատարանին, ապա ԵԸ-ի շրջանակներում նա լիարժեք վերահսկողություն է իրականացնում ընդունված ակտերի օրինականության նկատմամբ և մեկնաբանում է դրանք՝ անդամ-պետություններում ԵԸ-ի իրավունքի նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով:

Մոտեցումն այլ է երկրորդ ու երրորդ հենասյուների դեպքում: ԵԸ-ի դատարանը երկրորդ հենասյան շրջանակներում իրավասություն ունի այնքանով, որքանով դրա շրջանակներում ընդունված ակտերը կարող են խախտել ԵԸ-ի, այսինքն առաջին հենասյան իրավասությունը և անհրաժեշտություն կա անվավեր ճանաչել դրանք⁵⁸: Մնացած բոլոր դեպքերում ԵԸ-ի դատարանի իրավասություններն ԸԱԱԲ ոլորտում իսպառ բացակայում են:

Իրավիճակը քիչ այլ է երրորդ հենասյան դեպքում: Այստեղ ԵԸ-ի դատարանն օժտված է այդ հենասյան շրջանակներում ընդունված որոշումների և շրջանակային որոշումների օրինականությունն ու վավերականությունը վիճարկող հայցեր քննելու իրավասությամբ⁵⁹: Միևնույն ժամանակ, ԵԸ-ների դատարանը, թեև իրավունք ունի նախնական կարգավորման ընթացակազմով որոշումներ ընդունել երրորդ հենասյան շրջանակներում ընդունված որոշումների ու շրջանակային որոշումների վավերականության ու մեկնաբանման, ինչպես նաև կնքված կոնվենցիաների մեկնաբանման վերաբերյալ, այնուամենայնիվ, ինչպես բխում է ԵՄ-ի մասին պայմանագրի 35-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից, այդ որոշումները կարող են իրավաական ուժ ունենալ միայն այն պարագայում, եթե պետությունները համապատասխան հռչակագրով ճանաչել են նրա այդ իրավասությունը⁶⁰:

⁵⁸ Տե՛ս case C-170/96 Commission v. Council para. 16-17

⁵⁹ Տե՛ս article 35(6) of the Consolidated version of the Treaty on European Union 2002} OJ C 325/5:

⁶⁰ Տե՛ս article 35(1,2) of the Consolidated version of the Treaty on European Union {2002} OJ C 325/5:

Բացի դրանից, հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ արտաքին և սնվտանգության քաղաքականության ոլորտում ԵՄ-ն առաջնորդվում է միասնական նպատակներով ու մոտեցումներով: Այսինքն, ԵԱՌ-ի մեջ ամրագրված նպատակներն ու խնդիրները (կայունության և անվտանգության տարածումը ԵՄ-ի հարևանությամբ, պայքարն արդի անհամաչափ սպառնալիքների դեմ և այլն) հավասարապես վերաբերում են ԵՄ-ի բոլոր հենասյուներին: Սա, իր հերթին, ենթադրում է նաև, որ ԵԸ-ի կողմից իրականացվող ծրագրերը, ինչպիսիք են, օրինակ, ՏՐԱՍԵԿԱ-ն, ԻՆՕԳԵՅԹ-ը, ԵՀՔ-ը, ռազմավարական նշանակություն ունեն ողջ ԵՄ-ի, այլ ոչ թե նրա առանձին հենասյուների համար:

Այս ընդհանրություններով ու տարբերություններով հանդերձ, ԵԸ-ի և ԵՄ-ի միջև խիստ անջրպետ գոյություն չունի, քանի որ քաղաքականությունն իրականացվում է նույն ինստիտուտների կողմից և, անհրաժեշտության դեպքում, երրորդ պետությունների և ԵԸ-ի կամ ԵՄ-ի հետ հարաբերություններում տարածայնությունների առկայության դեպքում քաղաքականության ձևաչափն այդ պետության հանդեպ կարող է կտրուկ փոխվել ինչպես ԵԸ-ի, այնպես էլ ԵՄ-ի կողմից՝ դրանից բխող բոլոր սանկցիաներով և անբարենպաստ հետևանքներով: Չպետք է մոռանալ, որ դրանք իրենցից ներկայացնում մեկ միասնական միջազգային կազմակերպության ինքնուրույն բաղադրյալներ, որն իր ամբողջության մեջ կոչվում է ԵՄ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓԵՐԸ

2.1 Հարավկովկասյան երկրների հետ Եվրոպական ընկերակցության համագործակցության իրավական պլատֆորմը

Խորհրդայն Միության փլուզումը աշխարհի քաղաքական քարտեզի վրա մեծ փոփոխությունների հանգեցրեց, որի արդյունքում ձևավորվեցին նորանկախ պետություններ և այդ պետություններում առաջացավ քաղաքական, տնտեսական և սոցիալական վակուում: Արձագանքելով ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում առաջ եկած իրավիճակին՝ ԵՄ-ն սկսեց անմիջապես կառուցել երկկողմ հարաբերություններ ինչպես Հարավային Կովկասի պետությունների, այնպես էլ ԽՍՀՄ փլուզումից անկախացած մյուս հանրապետությունների հետ⁶¹: Այդ նպատակով նախ ընդունվեցին քաղաքական փաստաթղթեր. Եվրոպական Խորհրդի կողմից հաստատվեցին Եվրոպական Հանձնաժողովի ներկայացված քաղաքական հաղորդագրերը⁶², իսկ այնուհետև ստորագրվեցին միջազգային իրավական պայմանագրեր:

Ինչպես արդեն նշվեց վերևում, ԵԸ-ի իրավասուբյեկտության իրագործումն ապահովվում է միջազգային պայմանագրերի կնքմամբ: Սոցիալիստական բլոկի անկման արդյունքում ԵԸ-ն (անդամ պետությունների հետ համատեղ) ակտիվորեն իրագործեց իր իրավասությունը նորանկախ պետությունների հետ նոր տեսակի համաձայնագրեր կնքելու միջոցով: Այդ ժամանակաշրջանում Եվրոպան առավելապես հետաքրքրված էր

⁶¹ Եվրոպական ընկերակցությունները արդեն իսկ հաստատել էին պայմանագրային հարաբերություններ ԽՍՀՄ-ի հետ՝ 1989 թ.-ին վերջինիս հետ ստորագրելով Առևտրի և տնտեսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը: Համաձայնագիրը իր մեջ, ի տարբերություն նորանկախ պետությունների հետ կքված համաձայնագրերի, պարունակում էր սակավ քաղաքական պայմանականություն (conditionality) և կարգավորում էր հիմնականում առևտրային բնույթի հարցեր, ինչը բխում էր Եվրոպական ընկերակցության ժամանակի կառուցվածքից և բնույթից: Սակայն այս համաձայնագիրն իրականում ուներ քաղաքական նշանակություն, այն է՝ ԽՍՀՄ-ի և Եվրոպական ընկերակցությունների միջև հարաբերությունների բարելավումը: St'u Trade and Commercial and Economic Cooperation Agreement between the European Economic Community, the European Coal and Steel Community and the USSR, 15/03/1990, OJ L 068.

⁶² Commission Communication to the Council "Towards a European Union Strategy for Relations with the Transcaucasian Republics", 31.05.1995 COM (95) 205 final.

մերձեցնել իր հարաբերությունները արևելաեվրոպական պետությունների հետ, որոնց հետ ևս հաստատում էր պայմանագրային հարաբերություններ՝ կնքելով այսպես կոչված Եվրոպայի համաձայնագրեր (Europe Agreements): Վերջիններս ամրագրում էին պայմանավորող պետության նպատակը (և ոչ համաձայնագրի կողմերի ընդհանուր նպատակը) անդամակցելու ԵՄ-ին⁶³:

Ինչ վերաբերում է ԱՊՀ երկրների և ԵՄ-ի միջև նորաստեղծ գործընկերությանը, ապա այն ընդգրկեց իրենց նպատակի և ԵՄ-ի հետ մերձեցման տեսանկյունից ավելի մեղմ (նվազ հավակնոտ) հարաբերություններ, որոնք իրենց կարգավորումն ստացան Գործընկերության և համագործակցության համաձայնագրերում:

ԳՀՀ-երը, ինչպես և Եվրոպայի (փոխկապակցման/association/) համաձայնագրերը հանդիսանում են խառը պայմանագրեր⁶⁴: ԳՀՀ-երն իրենց առջև դրված նպատակով և իրավական հիմքով տարբերվում են արևելյան Եվրոպայի երկրների հետ կնքված փոխկապակցման պայմանագրերից: Երկու համաձայնագրերի տարբերությունը նախևառաջ կայանում է ԵՄ-ի հետ մերձեցման աստիճանի մեջ: Ինչպես արդեն նշվեց, Եվրոպայի համաձայնագրերի դեպքում անդամակցությունը ԵՄ-ին հանդիսանում է պայմանագրի կողմերից մեկի վերջնական նպատակը⁶⁵: Արդյունքում, էականորեն տարբեր են նաև չորս տնտեսական ազատությունների՝ ապրանքների, ծառայությունների, անձանց և կապիտալի ազատ շարժի վերաբերյալ համագործակցության դրույթների բովանդակությունը: Առավել հաճախ փոխկապակցման համաձայնագրերի կնքման դեպքում նախատեսվում է ազատ առևտրի ստեղծման ապագա հնարավորություն: Այդպիսին են օրինակ Հարավ-միջերկրածովյան տարածաշրջանի պետությունների հետ կնքված համաձայնագրերը:

⁶³ Օրինակ՝ Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Poland, of the other part [OJ 1993, L348/2].

⁶⁴ Խառը պայմանագրերի մասին առավել մանրամասն տես գլուխ առաջին, մաս երկրորդ.

⁶⁵ Ռուսաստանը և հատկապես Ուկրաինան ԳՀՀ-ների բանակցությունների ժամանակ փորձեր էին կատարում համաձայնագիրը որքան հնարավոր է մոտեցնել կենտրոնական և արևմտյան Եվրոպայի երկրների հետ կնքված համաձայնագրերին, այնուամենայնիվ ԳՀՀ-երը էականորեն տարբերվում են դրանցից, զուտ այն հանգամանքով, որ Միության անդամակցությանը ընդհանրապես չեն անդրադառնում:

Համաձայնագրերի նպատակների տարբերության հետևանքով ՉՀՀ-երը և Եվրոպայի համաձայնագրերը նաև կնքված են տարբեր իրավական հիմքերով, չնայած այն հանգամանքին, որ այս համաձայնագրերի կնքումը անցնում է միևնույն ընթացակարգերը⁶⁶: Ինչպես բոլոր փոխկապակցման համաձայնագրերը, Եվրոպայի համաձայնագրի համար իրավական հիմք է ծառայում Հռոմի պայամանագրի 310 հոդվածը, որը սահմանում է, որ՝ «Եվրոպական ընկերակցությունը կարող է մեկ կամ ավել պետությունների կամ կազմակերպությունների հետ կնքել համաձայնագրեր, որոնք հաստատում են փոխադարձ իրավունքներ և պարտականություններ, ընդհանուր գործողություն և հատուկ ընթացակարգ ստեղծող փոխկապակցում»:

Ընկերակցության արտաքին հարաբերությունների պրակտիկայում, փոխկապակցման համաձայնագրեր հաճախ կիրառվել են անդամակցության դեպքում, կամ օգտագործվել են որպես միջոց փոխկապակցվող երկրում գործընթացները զարգացնելու և արդեն իսկ ձևավորված հարաբերությունները պահպանելու համար. դրանք ԵՄ անդամ-պետությունների հետ հատուկ հարաբերություններ ունեցած երկներն են (հիմնականում նախկինում գաղութացված երկրները): Այս ավանդական մոտեցումը վերանայվեց 1990-ականների սկզբին, և մի շարք պետությունների համար փոխկապակցումը դարձավ անդամակցության այլընտրանք և ոչ թե միջոց, կան այն պատճառով, որ նրանք չէին ցանկանում միանալ ԵՄ-ին⁶⁷, կան հակառակը՝ դեռևս չէին բավարարում անդամակցության պահանջները⁶⁸:

Եվրոպական դատարանը իր Demirel գործում մեկնաբանել է Թուրքիայի հետ փոխկապակցման համաձայնագիրը՝ նշելով, որ այն «արտոնյալ կապ» է սահմանում ԵԸ-ի և փոխկապակցվող երկրի միջև: Նման արտոնյալ կապը հնարհավորություն է ստեղծում վերջինիս գոնե որոշ առումով մասնակցություն ունենալ ընկերակցության իրավական համակարգում⁶⁹: Նման «արտոնյալ կապը» բացակայում է ԵԸ-ի և նախկին ԽՍՀՄ երկրների միջև, հետևաբար նաև ՉՀՀ-ների շրջանակներում փոխադարձությունը բացակայում է, և համաձայնագրերն առավելապես արտացոլում են ԵՄ-ի կողմից առաջադրվող պայմանականությունը:

⁶⁶ Treaty of Rome, Articles 300(2) and (3) point 2.

⁶⁷ Եվրոպական տնտեսական գոտու երկրների հետ կնքված պայմանագիրը:

⁶⁸ Օր՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների դեպքում:

⁶⁹ Case 12/86 Demirel v Stadt Schwabisch Gmund, para. 9.

Բացի այդ, տարբերվում է նաև ՉՀՀ-երի շրջանակներում ստեղծված և Եվրոպայի (փոխկապակցման) համաձայնագրերով նախատեսված մարմինների կողմից ընդունվող որոշումների իրավական բնույթը: ՉՀՀ - մարմինների կողմից ընդունվում են խորհրդատվական բնույթի որոշումներ⁷⁰, մինչդեռ միջերկրյա ծովյան տարածաշրջանի պետությունների հետ համագործակցության (փոխկապակցման) դեպքում այդ մարմինների որոշումները կողմերի համար կրում են պարտադիր բնույթ⁷¹:

Նորանկախ պետությունների հետ կնքված ՉՀՀ-երը, իրենց հերթին, կարող են տարբերակման ենթարկվել ըստ ԵՄ-ի հետ հարաբերությունների մերձեցման աստիճանի: ՉՀՀ-երի կնքման սկզբնական շրջանում մասնագիտական գրականություն մեջ հանդիպում են այս համաձայնագրերի տարանջատման երկու խմբի՝ առաջին խմբին դասելով այն պայմանագրերը, որոնցով նախատեսվում է ԵՄ-ի և գործընկեր պետության միջև առավել սերտ հարաբերություններ և որոնք ավելի հավակնոտ են (օր՝ ՌԴ, Ուկրաինա, Մոլդովա), իսկ երկրորդ խմբին դասելով գործընկերների մերձեցման առումով նվազ պահանջկոտ հարաբերություններ կարգավորող համաձայնագրերը, որոնք զիջում են առաջիններիս ինչպես ծավալով, այնպես էլ բովանդակությամբ (օր՝ Ղրղզստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի հետ կնքված ՉՀՀ-երը)⁷²: Առաջին խմբի պայմանագրերում ընդհանուր դրույթների ներքո նախատեսվում է ապագայում ազատ առևտրի տարածք ստեղծելու հնարհարվորությունը⁷³: Իսկ երկրորդ խմբի պայմանագրերում առանցքային է ժողովրդավարական սկզբունքների և միջազգային իրավունքի նկատմամբ հարգանքը: Վերջիններս չեն սահմանում տնտեսական համագործակցության համար պայմանների առաջացման անհրաժեշտությունը որպես տնտեսական հարաբերությունների զարգացման նախապայման, այսինքն շուկայական տնտեսության անցման համար բարեփոխումների վերաբերյալ պայմանները բացակայում են:

⁷⁰ Article 78, Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Armenia of the other part 09.09.1999, [OJ L 239].

⁷¹ Article 80, Cooperation Agreement between the European Economic Community and the Kingdom of Morocco, 27/09/1978. [OJ L 264]

⁷² Տարբերակումը առաջադրում են Marsceau and Montaguti, 'The Relations between the European Union and Central and Eastern Europe: A Legal Appraisal' 1995 32 CMLRev, 1340.

⁷³ Տես օր՝ Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Russian Federation of the other part, 28/11/1997, OJ L 327.

Եվրոպական հանձնաժողովը իր՝ Խորհրդին ուղղված Հաղորդագրությունում առաջարկում է Հարավային Կովկասի երկրների հետ կնքել ԳՀՀ-եր, միևնույն ժամանակ առաջադրելով որոշ տարբերակներ այդ երկրների հետ նախանշվող հարաբերությունների և համագործակցության խորության վերաբերյալ⁷⁴: Արդյունքում, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ կնքվում են ԳՀՀ-եր, որոնք պարունակում են միանման դրույթներ: Այս պայմանագրերը Հայաստան-ԵՄ, Վրաստան-ԵՄ, Ադրբեջան-ԵՄ հարաբերությունների իրավական հիմքն են կազմում, որոնց հիման վրա է կառուցվել է հետագա համագործակցությունը: Ինչ վերաբերվում է դրանց զբաղեցրած տեղին ԳՀՀ-երի շարքում, ապա վստահորեն կարելի է ասել, որ դրանք գտնվում են վերը հիշատակված երկու խմբերի միջև, քանի որ դրանցում ամրագրված են տնտեսական հարաբերությունների խորացում նախատեսող դրույթներ, այսինքն՝ սահմանում են պայմաններ առևտրային համագործակցության զարգացման համար:

2.2 Եվրոպական Հարևանության Քաղաքականություն

ԱՊՀ երկրների հետ հարաբերությունները նոր շունչ ստացան 2004 թ. տեղի ունեցած ԵՄ-ի ամենամեծ ընդլայնումից հետո: Դրա հիմնական պատճառն այն է, որ ԵՄ-ը ձեռք բերեց նոր հարևաններ: Դեռևս նախքան ընդլայնումը ԵՄ-ը գիտակցում էր, որ ընդլայնումից հետո արտաքին սահմաններում կծագեն նոր խնդիրներ, և որ իր պարտականությունն է նպաստել Եվրոպական մայրցամաքի բարգավաճմանը և անվտանգության ապահովմանը, և այդ պարտականությունը ԵՄ-ը կրում է նաև իր ապագա հարևանների հանդեպ: Այս մասին է խոսում Խորհրդի առաջին քաղաքական փաստաթուղթը ԵՀՔ-ի վերաբերյալ⁷⁵: Հետագայում ԵՀՔ-ի Ռազմավարական փաստաթուղթը⁷⁶ սահմանում է այդ քաղաքականության հիմնական նպատակը, որն է՝ կիսել ընդլայնման առավելությունները, որպեսզի **բոլորի համար** (*ենթադրվում է և՛ ԵՄ-ի, և՛ հարևանների*) ամրապնդվի «կայունությունը, անվտանգությունը և բարեկեցությունը»: Այս արժեքների դիմաց, ԵՄ-ը պատրաստ է տրամադրել ԵՀՔ պետություններին մասնակ-

⁷⁴ Towards A European Union Strategy for Relations with the Transcaucasian Republics, 31.05.1995 COM (95)

⁷⁵ Wider Europe – Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours, 11.0.2003 COM (2003) 104 final

⁷⁶ Communication to the Commission, ENP Strategy Paper, Brussels, 12.5.2004 COM(2004) 373 final.

ցություն իր ներքին շուկայում: Այլ կերպ ասած, հարևան պետությունները և իրենց մասնավոր անձինք հնարավորություն կունենան լիարժեք մասնակցել ԵՄ-ի բոլոր չորս տնտեսական ազատություններին: Հնարավորության առկայության դեպքում, ինչպես նշում են ԵՄ-ի կառույցներն իրենց փաստաթղթերում և ներկայացուցիչներն իրենց ելույթների ընթացքում, ԵՀՔ-ը գործընկեր պետությունների հետ հարաբերություններին տալու է նոր ուժ, սակայն առաջարկվածն այլ է, քան Հռոմի պայմանագրի 49 հոդվածով նախատեսված՝ ԵՄ-ին անդամակցելու հնարավորությունը: Այսինքն, ԵՀՔ կողմից կատարվող առաջարկը չի ենթադրում ապագայում ԵՄ-ին անդամակցելու հնարավորություն: Մինևույն ժամանակ նշվում է, որ Կոպենհագենի չափանիշներին բավարարող եվրոպական պետության համար նման հնարավորությունը երբեք չի կարող բացառվել⁷⁷:

Հիմնվելով առկա համագործակցության վրա՝ ԵՀՔ-ը նպատակադրված չէ փոխարինելու ԳՀՀ-երի հիման վրա իրականացվող ներկայիս համագործակցությունը: Այս քաղաքականությունը առավելապես կկոնկրետացնի համագործակցությունը և կընդգրկի հարևան եկրկրների հետ համագործակցության առավել լայն ոլորտներ: Այդ մասին է վկայում նաև ԵՀՔ շրջանակներում կիրառվող համագործակցության հիմնական միջոցը՝ Գործողությունների ծրագիրը:

Գործողությունների ծրագրեր հաճախ են կիրառվում ԵՄ-ի արտաքին քաղաքականության մեջ և այդպիսիք կիրառվել են նաև ԵՄ-ին անդամակցելու գործընթացում: ԵՀՔ կողմից կիրառվող Գործողությունների ծրագիրը կարծես առանձնանում է մյուսներից նրանով, որ այս դեպքում ծրագրի կազմման գործընթացն իրականացվում է համատեղ, այսինքն, կողմերից յուրաքանչյուրը մասնակցում է բովանդակության և գործողությունների առաջնայության ընտրությանը, ինչի արդյունքում կողմերի համար առկա է գործընթացի նկատմամբ «փոխադարձ սեփականատիրական» զգացումը (joint ownership): Իհարկե գործողությունների կատարումը մեծապես կախված կլինի կողմերի քաղաքական կամքից:

Նորիհուրդը շեշտել է, որ Գործողությունների ծրագիրը կիրառվելու է ԵՄ-ի կողմից որպես քաղաքականության հիմնական մեխանիզմ՝ գործընկեր պետության հետ իր հարաբերությունները կարճ ժամանակահատվա-

⁷⁷ St'eu Speech by Romano Prodi, the Sixth ECSA-World Conference, held in Brussels, 5-6 December 2002; նաև Wider Europe – Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours, 11.0.2003 COM (2003)

ծում կարգավորելու նպատակով⁷⁸: Գործողությունների ծրագիրն ընդունվում է Խորհրդի որոշման տեսքով: Դրանք ուղղված են ԸԱԱՔ նպատակների իրականացմանը, սակայն նրանք լայնորեն անդրադառնում են նաև առևտրային հարաբերությունների մերձեցմանը: Խորհրդի որոշման մեջ հղումը ԵՄ պայամանագրի 15-րդ հոդվածին վկայում է այն մասին, որ Գործողությունների ծրագիրը ընդունվում է ընդհանուր դիրքորոշման տեսքով, այսինքն ԵՄ ԸԱԱՔ շրջանակներում ընդունվող ակտ է: Բացի նրանից, որ Գործողությունների ծրագիրը ընդունվում է Հանձնաժողովի առաջարկի հիման վրա, Խորհրդի որոշումը նաև հիմնվում է Համագործակցության խորհրդի⁷⁹ երաշխավորության վրա: Հետևաբար, որպես հիմք ընդունվում է նաև գործընկեր պետության հավանությունը: Հարևան պետությունների կողմից Գործողությունների ծրագրի իրականացման համար ազգային մակարդակով ընդունվում են համապատասխան մեխանիզմներ:

2006թ. նոյեմբերին հաստատվեցին Հարավային Կովկասի պետությունների Գործողությունների ծրագրերը: Ի տարբերություն նախկին ԽՍՀՄ այլ երկրների Գործողությունների ծրագրերի⁸⁰, որոնք նախատեսված են 3 տարվա ժամկետի համար, հարավկովկասյան երկրների Գործողությունների ծրագրերի տևողությունը 5 տարի է: Հայտնի է, որ Գործողությունների ծրագիրն ուղղված է նաև ԳՀՀ դրույթների սպառմանը, այսինքն, դրանց առավել կոնրետ և արագ իրականացման ապահովմանը: Հաշվի առնելով այդ հանգամանքը կարելի է եզրակացնել, որ Հարավային Կովկասի երկրների Համաձայնագրի իրականացման համար հարկավոր է ավելի երկար ժամանակ, քան մյուս հարևանների ԳՀՀ-ների դեպքում:

Դեռևս վաղ է դատել, թե արդյոք ընդունված փաստաթղթերը կհանդիսանան ԵՄ-ի հետ հարաբերությունների մերձեցման արդյունավետ մեխանիզմ: Որքան էլ ԵՄ-ը փորձեր կատարի ներմուծել տարբերակում իր գործընկերների հետ հարաբերությունների մերձեցման առումով, ամեն դեպքում հարաբերությունների առաջընթացը, ինչպես և նախկինում, կայսված է լինելու աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական

⁷⁸ GAER Council Conclusions 10370/03 (Presse 167) Doc. 10447/03

⁷⁹ Համագործակցության խորհուրդը ԳՀՀ-ի հիման վրա ստեղծված, եռաստիճան համակարգով գործող մարմին է, որն ընդգրկում է ԵԸ և գործընկեր-պետության ներկայացուցիչներ տարբեր քաղաքական մակարդակներում: Առավել մանրամասն տե՛ս օր` Բաժին 11, ԳՀՀ – Հայաստան:

⁸⁰ Տես օրինակ Ուկրաինայի Գործողությունների ծրագիրը

հանգամանքներից: Քննարկվող հրաբերություններում ակնկալվող առաջընթացն էապես պայմանավորված կլինի ՌԴ-ի և ԵՄ, ՌԴ-ի և հարավկովկասյան երկրների փոխհարաբերությունների դինամիկայով, ինչպես նաև Թուրքիայի և ԵՄ հարաբերությունների բնույթով:

Կարելի է ասել, որ բոլոր երեք փաստաթղթերն էլ, որքան էլ ուղղված լինեն տնտեսական հարաբերությունների մերձեցմանը, մեծապես հետապնդում են ԵՄ-ի անվտանգության և պաշտպանության ոլորտի նպատակներ, և ինչպես նշվեց վերևում, հանդիսանում են ԵՄ-ի ՈԱԱԲ միջոցներ, ուստի և ուղղված են վերջինիս նպատակների իրականացմանը: Հարևան պետություններին շահագրգռող հիմնական հանգամանքը ԵՄ-ի ներքին շուկայում հնարհավոր տեղ ունենալն է՝ մասնակցությունը չորս տնտեսական ազատություններում: Վերջինս մեծապես համընկնում է ԵԸ-ի հետ համագործակցության նպատակներին: Այսինքն, շահագրգռող հիմնական հանգամանքը և հարևան երկրից ակնկալվող կայունությունը, անվտանգությունը և բարեկեցությունը ԵՄ-ի նպատակների առումով տարբեր են և ոչ հստակ: Այդ իսկ պատճառով հաճախ ԵՀՔ քննադատվում է իր նպատակների անհստակության առումով:

Համաձայն ԵՀՔ փաստաթղթերի, յուրաքանչյուր գործընկեր պետության Գործողությունների ծրագրում ամրագրված կոնկրետ գործողությունների հաջող իրականացման դեպքում գործընկեր պետության հետ հարաբերությունները կանցնեն իրենց զարգացման հաջորդ փուլը: Այդ դեպքում արդեն իսկ սպառված կլինեն ԳՀՀ-երը, այսինքն, նրանցում ամրագրված նպատակներն իրականացված կլինեն, քանի որ, ինչպես արդեն նշվել է վերևում, Գործողությունների ծրագիրը ոչ թե փոխարինում է Համաձայնագրերին, այլ ծառայում է որպես խթան՝ վերջինիս դրույթների արագ և արդյունավետ իրականացման համար: Համաձայն ԵՀՔ Ռազմավարության, Գործողությունների ծրագիրն արդյունավետ իրականացնելու արդյունքում ԵՄ-ի և հարևան պետության միջև պետք է կնքվեն նոր համաձայնագրեր, որոնք կկոչվեն Հարևանության համաձայնագրեր:

Ամենայն հավանականությամբ այս համաձայնագրերը կհանդիսանան Հռոմի պայմանագրի 310 հոդվածի հիման վրա կնքված փոխկապակցման համաձայնագրեր: Հատկանշական է, որ ԵՄ-ի սահմանադրությունը հիմնադրող պայմանագրի⁸¹ ընդունման դեպքում այս համաձայնագրերը կունենային հատուկ իրավական հիմք, որը սահմանված է նշված պայմա-

⁸¹ Treaty Establishing Constitution for Europe

նագրի հոդված I-57-ում⁸²: Այս հոդվածի բովանդակությունը որոշ առումով հիշեցնում է Հռոմի պայմանագրի 310 հոդվածը, որը որոշակի խմբագրական փոփոխություններից հետո ամրագրվել է նաև Սահմանադրական պայմանագրում (հոդված III-325): Այնուամենայնիվ, հարևանության և փոխկապակցման համաձայնագրերի միջև տարբերությունները ակնհայտ են դառնում, երբ հղում է կատարվում Սահմանադրական պայմանագրում դրանք կարգավորող երկու տարբեր դրույթներին: Առաջինը՝ հարևանության համաձայնագիրը, արտահայտելու է ԵՀԲ մեթոդաբանությունը՝ ղեկավարվելով պայմանականությամբ: Իսկ «փոխադարձ մերձեցման» հնարավորությունները նախատեսված են, սակայն հավանական են և ոչ երաշխավորված, քանի որ յուրաքանչյուր պետության դեպքում կիրառվելու են մերձեցման ուրույն աստիճաններ: Կարելի է ասել, որ այս հոդվածը արդա-հայտում է ԵՀԲ-ում լայնորեն կիրառվող «տարբերակված մոտեցումը»:

Իրենցից մեծ հետաքրքրություն կներկայացնեն այդ համաձայնագրերի բովանդակությունը, հատկապես Հարավային Կովկասի երկրների դեպքում: Հետաքրքիր կլինի տեսնել արդյո՞ք երեք համաձայնագրերը կլինեն նույնական, ինչպես ԳՀՀ-երի դեպքում, թե՞ կհետևեն ԵՀԲ-ը բնորոշ «տարբերակված մոտեցման» մեթոդաբանությանը և յուրաքանչյուրի դեպքում կհամապատասխանեն հարևան պետության կողմից կատարած առաջընթացին: Հավանաբար հիմնական նպատակի և մերձեցման աստիճանի տեսանկյունից հարավկովկասյան երկրների հետ կնքվելիք հարևանության համաձայնագրերը միմյանցից էապես չեն տարբերվի, քանի որ ԵՄ-ն այս երկրների նկատմամբ հիմնականում ցուցաբերում է տարածաշրջանային մոտեցում⁸³, ինչը ընդհանրապես հանդիսանում է ԵՄ-ի արտաքին քաղաքականությունը բնութագրող առանձնահատկություններից մեկը:

2.3 Արևելյան գործընկերություն

ԵՄ-ի «Արևելյան գործընկերություն» ծրագրի պաշտոնական մեկնարկը տրվեց 2009թ. մայիսի 7-ին Պրահայում կայացած գագաթնաժողովում:

⁸² Treaty Establishing Constitution for Europe, Article I-57.

⁸³ Չարկ է նշել, որ ֆորմալ առումով փաստաթղթերից որևէ մեկում տարածաշրջանային մոտեցումը չի արտահայտվում որպես Չարավային Կովկասի նկատմամբ քաղաքականությունը բնութագրող առանձնահատկություն: Կատարվում են որոշ փորձեր տարածաշրջանային ինտեգրում ապահովելու համար, սակայն Եվրոպան տարածաշրջանի երկրների հետ համագործակցում է երկկողմ:

Դրա նպատակն է՝ օժանդակել ԵՄ-ի արևելյան հարևաններին ժողովրդավարական բարեփոխումների և շուկայական տնտեսության զարգացմանը, այդպես, փաստորեն, նպաստելով նրանց քաղաքական և տնտեսական կայունությանը: 2010-2013թթ. ընթացքում ծրագրի շրջանակներում ֆինանսական հատկացումների չափը նախատեսվում է 600 մլն. եվրո:⁸⁴ Այն նախատեսված է Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի, Ադրբեջանի, Մոլդովայի և Ուկրաինայի համար:⁸⁵ Ինչպես և համագործակցության մյուս ծրագրերը, ԱԳ-ին մասնակցելն ամենևին չի ենթադրում ԵՄ-ին անդամկցության հեռանկարներ:

Արևելյան Գործընկերությունն սկսելու գաղափարը լեհ-շվեդական նախաձեռնության արդյունք է:

Այսօրինակ ծրագիր իրականացնելու ԵՄ-ի որոշումը հիմնված է մի քանի պատճառների վրա: Առաջինը՝ Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում տեղի ունեցող իրադարձություններն ու դեպքերը իրենց ազդեցություն են թողնում ԵՄ-ի վրա: Երկրորդը՝ ԵՄ-ի ընդլայնման հետևանքով մի շարք երկրներ դարձան նրան սահմանակից. հետևաբար նրանց անվտանգությունը, կայությունը և բարգավաճումը մեծ նշանակություն ունի ԵՄ-ի համար: Բացի այդ, ներկայումս բոլոր մասնակից երկրները տարբեր չափերով իրականացնում են քաղաքական, սոցիալական և տնտեսական բարեփոխումներ և հայտնել են իրենց ցանկությունն առավել շատ մերձենալ և խորացնել հարաբերությունները ԵՄ-ի հետ:

Նոր նախաձեռնությունը սկսելու անհրաժեշտությունը ծագեց նաև այն պատճառով, որ ԵՀԲ ծավալումից հետո Եվրամիության ներսում հետազոտողների կողմից չէին դադարում բանավեճերն այն հարցի շուրջ՝ արդյոք Արևելքը և Հարավը պետք է դիտարկվեն որպես մեկ մեծ ընդհանուր տարածաշրջան, թե ոչ: Եվ երկրորդ խնդիրը՝ կարող է արդյոք եվրոպականացումը գործել Արևելյան Եվրոպայում առանց անդամակցության հեռանկարի: 2008թ.-ի հունիսին Լեհաստանի արտաքին գործերի նախա-

⁸⁴ Barber T., Why eastern diplomacy requires a careful tailor, May 4 2009, The Financial Times - http://www.ft.com/cms/s/0/7daee772-3843-11de-9211-00144feabdc0.html?nclick_check=1

⁸⁵ Ի սկզբանե Բելառուսի մասնակցությունը, այդ երկրում ժողովրդավարության պակասի պատճառաբանությամբ, կասկածի տակ էր: Այդուհանդերձ, հիմք ընդունելով այդ երկրում բարեփոխումներ անցկացնելու՝ իշխանությունների պատրաստականությունը, 2009թ. փետրվարին Բելառուսը պաշտոնապես հրավիրվեց մասնակցելու ԱԳ-ին: Ծրագրին դիտորդի կարգավիճակով մասնակցելու հրավեր են ստացել նաև ՌԴ-ը և Թուրքիան:

րար Սիկորսկին մեկնաբանել է, որ ԱԳ պաշտոնական կապ չունի ընդլայնման քաղաքականության հետ, բայց երբ որ անցնի ընդլայնման հոգնածությունը, ապագա անդամակցությունը կդառնա բնական: Մտադրությունը ոչ միայն ԵՄ արևելյան հարևանների հետ հարաբերությունները սերտացնելն է հատուկ գործընկերության ձևով, այլև արտացոլում է ապագա անդամակցության պրոպագանդան⁸⁶:

Սիկորսկին նաև հայտարարել է. «Մենք Լեհաստանում տարբերակում ենք ԵՀԲ-ի հարավային և արևելյան չափումները. հարավում մենք ունենք Եվրոպայի հարևաններ, իսկ արևելքում մենք ունենք եվրոպական հարևաններ: Նրանք բոլորը իրավունք ունեն մի օր դիմել ԵՄ անդամակցության համար, համապատասխանել ԵՄ անդամակցության չափանիշներին և հնարավոր է նաև դառնալ անդամ⁸⁷»:

ԱԳ-ը ԵՄ-ի պատասխանն է այն մարտահրավերներին, որոնք ծառայած են վերը նշված երկրների առջև: ԵՄ-ը շահագրգռված է արևելյան հարևան երկրներում տեսնել տնտեսական զարգացում, ժողովրդավարական կառավարում և կայունություն: Հիմք ընդունելով ԵՀԲ-ի առաջընթացը, ԱԳ-ն առաջարկում է երկկողմ և բազմակողմ համագործակցության միջոցներ: Գործընկեր երկրներների համագործակցության մակարդակը կախված է երկրի առկա հնարավորություններից և ժամկետներից⁸⁸:

Ծրագրի հիմքում ընկած են երկկողմ շահագրգռվածությունն ու ընդհանուր արժեքները, որոնք, ինչպես ԵՀԲ-ի դեպքում, կպահպանվեն, իսկ մասնակից երկրների հետ հարաբերությունների խորացումը կշարունակի կախված մնալ վերջիններիս կողմից իրականացրած բարեփոխումների և արդիականացմանն ուղղված առաջընթացի աստիճանից:

Մոտեցնելով արևելյան գործընկերներին ԵՄ-ին, «Արևելյան գործընկերությունը» կնպաստի ԵՄ-ի սահմանների կայունությանը և անվտանգությանը՝ միևնույն ժամանակ ամրապնդելով բարիդրացիական հարաբե-

⁸⁶ Տե՛ս՝ “The Eastern Partnership: An interim Step Towards Enlargement?” by Deniz Devrim and Evelina Schulz, Real Instituto Elcano, 2009, <http://www.almendron.com/tribuna/23870/the-eastern-partnership-an-interim-step-towards-enlargement/>

⁸⁷ Տե՛ս՝ “The Eastern Partnership: An interim Step Towards Enlargement?” by Deniz Devrim and Evelina Schulz, Real Instituto Elcano, 2009, <http://www.almendron.com/tribuna/23870/the-eastern-partnership-an-interim-step-towards-enlargement/>

⁸⁸ Տե՛ս Eastern Partnership-Questions and Answers, 04.12.08, European Commission External Relations http://ec.europa.eu/external_relations/eastern/index_en.htm

րություններն ու արդյունավետ համագործակցությունը հենց գործընկերների միջև: Ծրագիրը նպատակ ունի՝ ամրապնդել վստահության մթնոլորտը տարածաշրջանում՝ զարգացնելով քաղաքական շփումները գործընկերներ երկրների միջև՝ կառավարությունների, խորհրդարանների անդամների, ՀԿ-ների և քաղաքացիների մակարդակով, ինչպես նաև նվազեցնել նրանց ու ԵՄ-ի միջև առևտրի խոչնդոտները: Ծրագրի միջոցով ԵՄ-ն առաջարկում է մասնակից-երկրներին զգալիորեն հեշտացնել նրանց քաղաքացիների մուտքը ԵՄ: Ավելի երկարաժամկետ հեռանկարում հնարավոր է նաև այդ երկրների համար վիզաների վերացմանն ուղղված տարբերակների մշակում:

ԱԳ-ն ընդգրկում է նաև ԵՄ-ի և նախկին խորհրդային 6 երկրների միջև էներգետիկ քաղաքականության ոլորտում ավելի սերտ և համակարգված փոխգործակցություն: Մասնավորապես, ԵՄ-ը պատրաստվում է կնքել համաձայնության հուշագրեր էներգետիկ անվտանգության ոլորտում Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի հետ, քննարկել ԵՄ-Բելառուս էներգետիկ հռչակագրի ստորագրումը, որը վերաբերում է ածխաջրածնային պաշարների տեխափոխմանն ու Բելառուսում էներգետիկ բարեփոխումներ իրականացնելուն:

Ծրագիրը նախատեսում է ավելի արդյունավետ համագործակցություն կոնկրետ հարցերի շուրջ՝ ԵՄ ԸԱԱԲ-ԸԱՊՔ շրջանակներում, ներառյալ գործընկեր երկրների մասնակցությունը ԵՄ-ի առաքելություններին և զորավարություններին, դիվանագիտական միջոցառումների համաձայնեցմանը և այլն: Անվտանգությանն ուղղված վաղ արձագանքման համակարգերը կիզորացվեն, շեշտը դնելով հակամարտության գոտիների վրա: Ավելի սերտ համագործակցություն կմշակվի զենքի արտահանման և ՋՈՋ չտարածման ուղղությամբ:

Այս նախաձեռնության հաջողությունը մեծապես կախված է ԵՄ-ի անդամ-պետությունների քաղաքական կամքից և գործընկեր-երկրների պատրաստակամությունից: Թեև Եվրոպական հանձնաժողովը վճռորոշ դեր է կատարելու բազմակողմ շրջանակը համագործակցության արդյունավետ միջոց դարձնելու գործում, այն չի կարող փոխարինել գործընկեր-երկրների և ԵՄ-ի անդամ-պետությունների ներգրավվածությունը:

Ծրագրում մեծ տեղ է հատկացվում քաղաքացիական հասարակության զարգացմանը ժողովրդավարական բարեփոխումների շրջանակներում: Այդ պատճառով, Եվրոպական հանձնաժողովն առաջարկում է աջակցել քաղաքացիական հասարակության դերակատարներին՝ նրանց

ներգրավելով ծրագրի մեջ Եվրոպական գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի միջոցով: Ֆորումը կխրախուսի շփումները քաղաքացիական հասարակության դերակատարների միջև և կստեղծի հնարավորություններ պետական իշխանության մարմինների հետ երկխոսության համար:

«Ազատության Ռադիո»-ի հրապարակած տեղեկատվության համաձայն, ծրագրի նախագիծն ավելի շատ շեշտը դնում է երկկողմ շահերի, քան արժեքների վրա: Վերլուծելով ծրագրին վեց գործընկեր-երկրների մասնակցության հարցը և մեջբերելով ԵՄ-ի բարձրաստիճան պաշտոնյաների կարծիքները, հրապարակման մեջ նշվում է, որ այդ երկրներից միայն Վրաստանն ու Ուկրաինան են անցկացրել ազատ և արդար ընտրություններ, իսկ մյուսն երկրները չեն համապատասխանում մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության, արդյունավետ կառավարման չափանիշներին և այլ արժեքներին:⁸⁹

ԵՄ-ը, սակայն, գտնում է, որ մերձեցման ճանապարհով այդ երկրներում ավելի շուտ կարելի է հասնել ժողովրդավարության և տնտեսական զարգացման բարձր ցուցանիշների, քան՝ նրանց մեկուսացնելով: Բելառուսի դեպքում, օրինակ, ԵՄ-ը գնտում է, որ նա հնարավորություն ունի դառնալու ԵՄ ակտիվ գործընկերը ԵՀԲ-ի շրջանակներում, քանի որ սկսել է իրականացնել խորքային ժողովրդավարական և տնտեսական բարեփոխումներ և փորձում է առավել մերձենալ Եվրոպական ընդհանուր արժեքներին:⁹⁰

ՌԴ-ի իշխանությունները մեծ խանդավառությամբ չընդունեցին այս ծրագրի գաղափարը՝ այն որակելով որպես նախկին խորհրդային երկրների ներքին գործերին միջամտելու և ԵՄ-ի ազդեցության գոտու ընդլայնման փորձ:⁹¹ ԵՄ-ի պաշտոնական շրջանակները, սակայն, չեն կիսում այդ կարծիքը և հերքում են ՌԴ-ի բարձրաստիճան ներկայացուցիչների հայտարարությունները, թե իբր «Արևելյան գործընկերություն» ծրագիրն ունի հակառուսական բնույթ: ԵՄ-ի պնդմամբ, այս ծրագիրը պատասխան է մասնակից-երկրների կողմից մշտապես բարձրացվող՝ ԵՄ-ի հետ հարաբերությունները խորացնելու պահանջին:

⁸⁹ St' u Ahto Lobjakas, EU's Eastern Partnership Strains To Juggle Interests, Values, April 29, 2009, Radio Free Europe, Radio Liberty

⁹⁰ St' u EU includes Belarus in Eastern Partnership program, 24/02/2009 09:33 BRUSSELS, February 24 (RIA Novosti)

⁹¹ St' u EU's New Eastern Partnership Draws Ire from Russia, 2009-03-23 - <http://www.dw-world.de/dw/article/0.,4116554.00.html>

Ուկրաինայի առումով, որն արդեն օգտվում է ԵՄ-ի հետ խորացված հարաբերությունների առավելություններից Փոխկապակցման պայմանագրի միջոցով, որի մի մաս են կազմում ազատ առևտրի գոտու ստեղծումը, ինչպես նաև պարզեցված վիզայի հնարավորությունները, հարց է ծագում, թե ի՞նչ կարող է ԱԳ-ն առաջարկել նրան:

ԱԳ-ը հնարավորություն կտա՝ առավել խորացնելու հարաբերությունները ԵՄ-ի հետ, ջանքերն ուղղորդել այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են, օրինակ, իրավական կարգավորումների մոտարկումը: Բացի այդ, ԱԳ-ի տնտեսական ինտեգրման և կարգավորիչ մոտարկման պլատֆորմով նախատեսվում է ազատ առևտրի գոտիների ստեղծում, որոնք հեռանկարում կարող են ներառվել Հարևանության Տնտեսական Ընկերակցության մեջ՝ միավորելով, փաստորեն, ԵՄ-ին և արևելյան գործընկերներին, ինչն էլ, իր հերթին, կնպաստի Ուկրաինայի տնտեսական զարգացմանը:

Սակայն ԵՄ-ն մտահոգված է Ուկրաինայի տնտեսական և քաղաքական ձգնաժամով և, ինչպես նշել է Խ. Սոլանան, ԵՄ-ը պետք է նախազահական ընտրություններից առաջ և հետո իր ջանքերն ուղղի տնտեսական և քաղաքական իրավիճակի շտկման ուղղությամբ:⁹²

ԱԳ-ին Մոլդովայի մասնակցության հարցը բուռն քննարկումների տեղիք տվեց վերջին իրադարձությունների լույսի ներքո, երբ այդ երկրի իշխանությունները ճնշումներ գործադրեցին հասարակական լայնածավալ բողոքի ակցիաների դեմ՝ ի պատասխան խորհրդարանական ընտրություններում կոմունիստների հաղթանակի: Ի նշան բողոքի, Մոլդովայի կառավարությունը, մեղադրելով Ռումինիային անկարգությունների կազմակերպման մեջ, հատուկ վիզայի ռեժիմ սահմանեց այդ երկրի քաղաքացիների համար: Չնայած այն հանգամանքին, որ ԵՄ-ի շրջանակներում այս փաստն արժանացավ քննադատության և, ինչպես Չեխիայի արտգործնախարարը նկատեց «Մոլդովան լուրջ խնդիր է ԵՄ-ի համար»⁹³, ԵՄ-ը գտնում է, որ ԱԳ-ի ձևաչափը շարունակում է մնալ որպես արդյունավետ գործիք Մոլդավայում բարեփոխումներ իրականացնելու համար: Այդ երկրին չմեկուսացնելու դիրքորոշման կողմանկից են, մասնավորապես, Գերմանիան և Լեհաստանը:

⁹²Stéu Ahto Lobjakas, EU Foreign Ministers Discuss Growing Eastern Instability, April 27, 2009, <http://politicom.moldova.org/news/eu-foreign-ministers-discuss-growing-eastern-instability-199285-eng.html>

⁹³Ahto Lobjakas, EU Foreign Ministers Discuss Growing Eastern Instability, April 27, 2009, <http://politicom.moldova.org/news/eu-foreign-ministers-discuss-growing-eastern-instability-199285-eng.html>

2009թ. մայիսի 7-ի գագաթաժողովին ընդառաջ ԵՄ-ի արտաքին գործերի նախարարների համաժողովի ընթացքում ներկայացված ԱԳ-ի փաստաթղթում նշվում է, որ համագործակցության ճանապարհին մեծ խոչընդոտ են «սառեցված համակամարտությունները», և կոչ է արվում՝ շուտափույթ լուծումներ գտնել ընդունված նորմերի և սկզբունքների հիման վրա:⁹⁴

Նախաձեռնության մեջ տեղ են գտել նոր փոխկապակցման համաձայնագրեր, որոնք ընդգրկում են խորացված և ազատ առևտրի համապարփակ պայմանագրեր այն կողմերի համար, որոնք ցանկանում են և պատրաստ են համագործակցել ԵՄ-ի հետ: Այն ներառում է նաև այլ դրույթներ՝

- ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող համապարփակ ծրագրեր՝ բարելավելու գործընկերների վարչարարական կառուցվածքներն այս առաջարկն իրականացնելու համար:

- Շարժունության և անվտանգության համաձայնագրերի կնքումը, որոնք հնարավորություն կտան իրավական տեսանկյունից ավելի հեշտացնել քաղաքացիների մուտքը ԵՄ՝ միաժամանակ ջանքեր գործադրելով կոռուպցիայի, կազմակերպված հանցագործության և անօրինական միգրացիայի դեմ պայքարի գործում: Այս համաձայնագրերով նախատեսվում է նաև համապատասխանեցնել ապաստան տրամադրելու կարգերը ԵՄ-ի չափանիշներին և ստեղծել ինտեգրված սահմանային կառավարման կառույցներ: Վերջնական նպատակն է՝ մասնակից բոլոր երկրների միջև ապահովել առանց վիզաների տեղաշարժվելու հնարավորություն:

- Հանձնաժողովը կուսումնասիրի աշխատուժի տեղաշարժման հնարավորությունները՝ որպես վերջնական նպատակ ունենալով ԵՄ-ի աշխատանքի շուկայի բացումը:

- Տարաբնույթ հարցերի լուծման նպատակով կանցկացվեն մի շարք տեղեկատվական և խորհրդատվական ծրագրեր՝ սեմինարներ ԵՄ-ի օրենսդրության, չափորոշիչներին, փորձի փոխանակման վերաբերյալ, և, հնարավորության դեպքում, համատեղ միջոցառումների մշակում: Օրակարգում ընդգրկված են քաղաքականության մշակման չորս պլատֆորմներ՝ ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության, տնտեսական ինտեգրման և ԵՄ-ի քաղաքականության համապա-

⁹⁴ St' u Ahto Lobjakas, EU's Eastern Partnership Strains To Juggle Interests, Values, April 29, 2009, Radio Free Europe, Radio Liberty

տասխանեցման, էներգետիկ անվտանգության և մարդկանց միջև շփումների վերաբերյալ;

- Հզորացված համագործակցություն շրջական միջավայրի և կլիմայի ոլորտներում;

- Մարդկանց միջև ընդլայնված շփումներ և քաղաքացիական հասարակության ու այլ գործիչների առավել լայն ներգրավվածություն:⁹⁵

Արևելյան գործընկերության ծրագրում նախատեսվում է իրականացնել հինգ առանցքային միջոցառումներ, որոնց շեշտը բազմակողմանի համագործակցությունն է՝

- ԵՄ-ի չափանիշներին համապատասխան *ինտեգրված սահմանային կառավարման ծրագիր*, որը հանդես է գալիս որպես ապօրինի միգրացիայի, թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարի առաջնային նախապայման:

- *Օժանդակություն փոքր և միջին ձեռնարկություններին* - տեխնիկական օժանդակության, ֆինանսական միջնորդների, ռիսկայնության նվազեցման և վարկերի միջոցով փոքր և միջին ձեռնարկությունները լրացուցիչ աջակցություն կստանան զարգացման և աշխատատեղերի ստեղծման համար:

- *Էլեկտրաէներգիայի տարածաշրջանային շուկաներ*, էներգիայի արդյունավետություն և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման ծավալների ավելացում, որը ևս ենթադրում է համապատասխան կարգավորիչ շրջանակ և ֆինանսավորման մեխանիզմներ:

- *Հարավային էներգետիկ միջանցք*, որը ենթակառուցվածքային առանցքային նախաձեռնություն է, որի նպատակն է դիվերսիֆիկացնել տարանցիկ ուղիները և մատակարարման աղբյուրները ԵՄ-ի և նրա գործընկեր երկրների համար:

- *Տարերային և տեխնածին աղետների կանխարգելում և դիմակայում*, որը նախատեսում է հզորացնել աղետների կանխարգելման կառավարման համակարգերը և ստեղծել արդյունավետ համագործակցություն ԵՄ-ի և գործընկեր-երկրների միջև:⁹⁶

Այսպիսով, ինչպես նշվում է պաշտոնական փաստաթղթերում, Արևելյան գործընկերությունը հանդես է գալիս որպես արևելաեվրոպական և

⁹⁵ St'u The Eastern Partnership –an ambitious new chapter in the EU's relations with its Eastern neighbors (04/12/2008)

⁹⁶ St'u Eastern Partnership, Communication from the European parliament and the Council, Commission staff Working Document, Brussels, 2008

հարավկովկասյան երկրների ժողովրդավարական և տնտեսական բարեփոխումների իրականացման, կայունության բարձր մակարդակի և ԵՄ-ի չափորոշիչներին համապատասխանության ձեռքբերմանն աջակցության գործիք: Սակայն, չնայած նախաձեռնության խնդիրներից մեկը ԵՄ-ի տնտեսությանը գործընկերների ինտեգրումն է, այն ուղղակի կապ չունի ԵՄ-ին անդամակցության հետ: Գործնականում «Արևելյան գործընկերությունը» հանդիսանում է ԵՀՔ-ի մի մասը, որին մասնակցում են Հարևանության արևելյան և հարավկովկասյան մասնակից-երկրները:

ԱԳ-ն ունի երկկողմ և բազմակողմ բաղադրիչներ, որոնցից առաջինը նախատեսվում է կառուցել ԵՀՔ-ի արդեն գոյություն ունեցող գործառնական կառուցվածքների շրջանակներում, իսկ դրա տեմպերն ու բովանդակությունը կախված կլինեն յուրաքանչյուր գործընկեր-պետության ձեռքբերումներից ու հնարավորություններից: Ըստ գաղափարի, երկկողմ բաղադրիչը պետք է հիմնականում կենտրոնացված լինի հետևյալ ոլորտների վրա⁹⁷.

- պայմանագրային նոր հարաբերություններ, որոնք ենթադրում են, մասնավորապես, փոխկապակցման պայմանագրերի շուրջ բանակցություններ: Դրանք պայմանավորված կլինեն այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են առաջընթացը ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, արդյունավետ կառավարման, շուկայական տնտեսության և կայուն զարգացման հարցերում:

- աստիճանական տնտեսական ինտեգրում՝ յուրաքանչյուր մասնակից-երկրի հետ ազատ առևտրի գոտու ստեղծման նպատակով:

- շարժունության և անվտանգության խնդիրները, որոնք կարող են ներառել այդ ոլորտներում բանակցությունների անցկացում միգրացիայի, ապաստանի տրամադրման, սահմանային հսկողության, կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության դեմ պայքարի, ինչպես նաև վիզային ռեժիմի աստիճանական ազատականացման հարցերի շուրջ:

- էներգետիկ անվտանգություն՝ երկարաժամկետ էներգամատակարարման և տարանցման ապահովման նպատակով:

⁹⁷ Стів Eastern Partnership, Factsheet N°3, European Council, 19 and 20 March 2009

- սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցություն՝ գործընկեր-պետություններում առանձին տարածաշրջանների և բնակչության խմբե-րի միջև սուր անհամասնությունները մեղմելու նպատակով:

Գործընկերության մյուս՝ բազմակողմ բաղադրիչը պետք է լրացնի ա-ռաջինը՝ նպատակ ունենալով դիմակայել ընդհանուր մարտահրավերնե-րին ու փոխկապակցել հենց գործընկեր-պետություններին: Այդ բաղադրի-չը ներառում է չորս հիմնական թեմատիկ հարթակներ՝ ա. ժողովրդավա-րություն, արդյունավետ կառավարում և կայունություն, բ. տնտեսական ինտեգրացիա և ԵՄ-ի քաղաքականությունների հետ համապատասխա-նեցում, գ. էներգետիկ անվտանգություն, և դ. մարդ-մարդ հարաբերութ-յունները⁹⁸:

Հատկանշական է, որ այս հարցերում ԱԳ-ը չի բացառում նաև երրորդ երկրների հնարավոր մասնակցությունը, ինչպես նաև լրացուցիչ նախա-ծեռնությունների իրականացումը, ինչպիսին է, օրինակ, հարավային է-ներգետիկ միջանցքի, սահմանների ինտեգրված հսկողության ծրագրի զարգացումը: Բազմակողմ բաղադրիչը ենդրվում է կապակցել նաև տարածաշրջանային բազմակողմ այլ նախածեռնություններին, ինչպիսին է, օրինակ, Սևծովյան համակցությունը (Black Sea Synergy):

Այդուհանդերձ, դեռևս մինչ ծրագրի պաշտոնական մեկնարկը, այն բախվեց մի շարք խնդիրների հետ: Թեև գազաթնաժողովին մասնակցում էին Եվրոպական հանձնաժողովի ղեկավար Ժ. Մ. Բառոզուն, Հանձնաժո-ղովի արտաքին հարաբերությունների գծով հանձնակատար Բ. Ֆ. Վալդ-ները և ԵՄ-ում նախագահող Չեխիայի վարչապետ Մ. Տոպոլանեկը, սա-կայն դրան մասնակցեցին արևմտաեվրոպական ոչ բոլոր երկրների ղե-կավարները՝ բավարարվելով այդ միջոցառմանն ավելի ցածր մակարդա-կով ներկայացված լինելուն (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Ի-տալիա, Ավստրիա, Պորտուգալիա և այլն): Ազդեցիկ երկրներից, փաստո-րեն, միայն Չեռմանիան էր դրան ներկայացված դաշնային կանցլերի մա-կարդակով: Բարձր մակարդակով ներկայացված չէին նաև ԱԳ-ի մասնա-կից-երկրներից երկուսը՝ Բելառուսը եւ Մոլդովան:

Առանցքային խնդիրներից մեկը կապված է նաև ՌԴ-ի դիրքորոշման հետ, քանզի պաշտոնական Մոսկվան այս նախածեռնությունը դիտար-կում է որպես ոտնձգություն իր ավանդական ազդեցության գոտու նկատ-

⁹⁸ St'eu Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit, 7 May 2009, Prague

մամբ, դա այն դեպքում, երբ ԵՄ-ի և անդամ-երկրների ներկայացուցիչները պարբերաբար հավաստիացնում են, որ ծրագիրը ոչ մի կերպ ուղղված չէ ՌԴ-ի դեմ⁹⁹: Սակայն նույն այդ շրջանակները նշում էին նաև, որ «Արևելյան գործընկերությունը» պատասխան է ռուս-վրացական հակամարտությանն ու պարբերական բնույթ ստացած ռուս-ուկրաինական գազային ձգնաժամերին: Եվ, ինչպես հայտարարեց Ա. Մերկելը, անվտանգությունն ու բարեկեցությունը Եվրոպայում կախված են նաև գործընկեր-երկրների կայունությունից¹⁰⁰:

Դեռևս մինչ ծրագրի մեկնարկը ռուսական պաշտոնական շրջանակները զգուշացնում էին, որ ԱԳ-ի մասնակից-երկրները կարող են որոշ խնդիրներ ունենալ ԱՊՀ-ի շրջանակներում, քանզի ԵՄ-ի պահանջներին օրենսդրության համապատասխանեցումը կհանգեցնի ԱՊՀ-ի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների վերանայմանը: Իսկ ահա Մոլդովայի նախագահ Վ. Վորոնինն ԱԳ-ը բնորոշեց որպես «օղակ ՌԴ-ի շուրջ, ԱՊՀ-2 ԵՄ-ի հսկողության ներքո»:¹⁰¹ Դրա փոխարեն, Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին ևս, բարձր գնահատելով նախածեռնության նշանակությունն իր երկրի համար, այն որակեց որպես «Եվրոպայի պատասխանը Վրաստանի և Ռուսաստանի միջև պատերազմին», որն այսօր հնարավորություն է տալիս «Վրաստանին ու տարածաշրջանի մյուս երկրներին հավասարաը հավասարի պես նստել սեղանի շուրջ եվրոպական առաջնորդների հետ»:¹⁰²

Բացի դրանից, ընդունված հռչակագիրը որոշակիորեն բովանդակալիս տեսանկյունից տարբերվում է նախնական հայեցակարգից: Օրինակ, գազաթնաժողովի նախօրեին Գերմանիան պահանջեց եզրափակիչ հայտարարությունում չընդգրկել շուտափույթ կերպով անայցազիր ռեժիմ մտցնելու մասին կետը, և դա սահմանվեց որպես հեռանկարային նպատակ: Հարավկովկասյան երկրների համար նշանակալի էր նաև այն հանգամանքը, որ վերջնական փաստաթղթում մասնակից-երկրների տարածքային ամբողջականության ճանաչման սկզբունքը տեղ չգտավ, ինչը հետագայում կարող էր բազմաթիվ շահարկումների գործիք դառնալ:

⁹⁹ Տե՛ս EC заверяет, что "Восточное партнерство" не направлено против России, <http://www.rian.ru/politics/20090428/169460017.html>

¹⁰⁰ Տե՛ս Արևելյան գործընկերություն. եվրոպական այլընտրանք - <http://hetq.am/am/politics/praha-2/>

¹⁰¹ Տե՛ս "Восточное партнерство" ЕС похоже на кольцо вокруг России – Воронин, <http://www.rian.ru/politics/20090227/163343594.html>

¹⁰² Տե՛ս "Восточное партнерство" приблизит Грузию к Европе – Саакашвили, <http://www.rian.ru/world/20090507/170300501.html>

Մյուս հատկանշական փոփոխությունն այն էր, որ հռչակագրում գործընկերկրներին վերաբերվող «եվրոպական երկրներ» արտահայտությունը զագաթաժողովի նախօրեին փոխարինվեց «գործընկեր-պետություններ» արտահայտությամբ՝ այդպերպ վերջ դնելով այս ծրագրի միջոցով «ետնամուտքից» ԵՄ-ին անդամակցելու հնարավորության մասին քննարկումներին:

Այս նախաձեռնության ապագան դեռևս խիստ աղոտ է և միայն ժամանակն ու աշխարհաքաղաքական հետագա զարգացումները ցույց կտան նրա կենսունակությունը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

3.1. Հարավային Կովկասի ռազմավարական նշանակությունը ԵՄ-ի անվտանգության քաղաքականության համատեքստում

2007թ. ընդլայնման արդյունքում Հարավային Կովկասը դարձել է ԵՄ-ին (Սև ծովի միջոցով) սահմանակից տարածաշրջան, որը սահմանակցում է նաև ԵՄ-ին անդամակցության թեկնածու Թուրքիայի հետ: Այս հանգամանքը, բնականաբար, պետք է խթաներ ԵՄ-ի ակտիվ ուշադրությունը Հարավային Կովկասի ներքին խնդիրների նկատմամբ: ԵՄ-ը Հարավային Կովկասը պաշտոնապես դիտարկում է որպես ինքնուրույն, առանձին տարածաշրջան: Սակայն ԵՄ-ի նոր հարևանության հայեցակարգում, Մեծ Մերձավոր Արևելքի ամերիկյան և ԱՊՀ երկրների ինտեգրման ռուսական ձևանմուշներում Հարավային Կովկասին տրվում է տարբեր նշանակություն: Հատկանշական է, որ բոլոր այդ նախագծերում Հարավային Կովկասն ունի հատուկ նշանակություն՝ որպես միակ տարածաշրջան, որն իրական երաշխիքներ ունի մասնակցելու բոլոր երեք նախագծերին:¹⁰³

Ակադեմիական շրջանակներում այս հարցում չկա միասնական մոտեցում: Հարավային Կովկասը ոմանք դիտարկում են **«Եվրասիական Բալկաններ»** աշխարհաքաղաքական տարածության մեջ, որը ներառում է Հարավ-Արևելյան Եվրոպան, Միջին Ասիան, Հարավային Ասիայի մի մասը, Պարսից ծոցն ու Մերձավոր Արևելքը և գտնվում Եվրոպա-Ասիա տրանսպորտային ցանցի երկու կողմերում (Զբ. Բժեզինսկի¹⁰⁴), որպես Հարավ-Արևելյան Եվրոպայի մաս, որը ներառում է Կովկասը, Սևծովյան տարածությունը և Բալկանները (Շ. Թրոյբստ, Ն. Կերսկե¹⁰⁵), Մեծ Մերձավոր Արևելքի ծայրամաս և կցորդ գոտի Եվրոպայի ու Ասիայի միջև, Եվրոպան Կենտրոնական Եվրասիայի հետ կապակցող **«միջանցք»** (Ի. Մու-

¹⁰³ Տե՛ս Восканян А., О комплементаризме и возможных моделях европейской интеграции стран Южного Кавказа - http://scirs.org.ge/russian/analytic/round_three/voskanyan.htm.

¹⁰⁴ Տե՛ս Бжезинский Зб. Великая шахматная доска (Господство Америки и его геостратегические императивы), М.: Междунар. отношения, 1998, с. 56 – 90

¹⁰⁵ Տե՛ս Troebst St. Eine neue Südosteuropa-Konzeption? Der Balkan-Schwarzmeer-Kaukasus-Raum in politikwissenschaftlicher Sicht; in: Jahrbücher für Geschichte und Kultur Südosteuropas, Nr. 2 (2000), S. 153 – 159:

րադյան¹⁰⁶), **Մեծ Եվրոպայի ծայրամաս**¹⁰⁷, որը, թեև տնտեսական տեսանկյունից հրապուրիչ չէ, սահմանների ընդլայնման պատճառով ստիպում է ԵՄ-ին խորացնել իր ներգրավվածությունը ծայրամասում կայունության ապահովման մեջ, որպես **Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանն ընդգրկող տարածաշրջան**, որտեղ ԵՄ-ի շահերը թելադրված են անվտանգության պատկերացումներով:

Եվրոպա-Հարավային Կովկաս հարաբերություններում, «**Կենտրոն-ծայրամաս**» հայեցակարգի համաձայն, կենտրոնը կազմում են եվրոպական ինտեգրման առկա, իսկ ծայրամասը՝ ապագա մասնակիցները: Եվրոպայի ծայրամասը պետք է աստիճանաբար միաձուլվի նրա կենտրոնի հետ և ներառվի որոշումների ընդունման ընդհանուր գործընթացին:¹⁰⁸ Ծայրամասի մեկ այլ մոտեցում Հարավային Կովկասը գործառնության ինտեսանկյունից բնորոշում է որպես կամուրջ այլ տարածաշրջանների միջև: Ըստ այդմ, Հարավային Կովկասի հետ ԵՄ-ի առևտրային հարաբերություններն ունեն ծայրամասային բնույթ և տարածաշրջանը՝ որպես սպառողական շուկա, ԵՄ-ի համար չունի մեծ նշանակություն: Կենսական նշանակություն չի տրվում նաև Կասպից ծովի էներգետիկ պաշարներին՝ թեև դրանք իսկապես կարող են փոքրացնել ԵՄ-ի կախվածությունը Պարսից ծոցից և ՌԴ-ից: Այդ ձևանմուշն առկա է նաև անվտանգության քաղաքականության ոլորտում, քանզի հարավկովկասյան հակամարտություններն այնքան էլ մեծ սպառնալիք չեն համարվում եվրոպական անվտանգության համար:¹⁰⁹ Դա ամենևին չի նշանակում, որ Հարավային Կովկասը չի ներառվում ԵՄ-ի տնտեսական և անվտանգության շահերում, քանզի կասպյան էներգետիկ պաշարներն արդեն հրապուրել են եվրոպական նավթային ընկերություններին և որոշակի տեղ են զբաղեցնում Եվրոպայի էներգետիկ անվտանգության համակարգում, իսկ հայ-ադրբեջանական և ռուս-վրացական հակասություններն իսկապես կարող են ապակայունացնել Եվրոպայի հարավային սահմանները, ինչը դրանց կարգավորումը

¹⁰⁶ Տե՛ս Мурадян И., Интересы Европейского Союза на Южном Кавказе и Карабахская проблема, «21-րդ դար», թիվ 3(5), 2004, с. 53.

¹⁰⁷ Տե՛ս Coppieters B., The Caucasus as a Security Complex, in Bruno Coppieters (ed.), Contested Borders in the Caucasus (Brussels: VUB Press, 1996), pp. 159-163, 193-204

¹⁰⁸ Տե՛ս Коппитерс Б., Грузия в Европе. Идея периферии в международных отношениях - <http://poli.vub.ac.be/publi/etni-3/coppieters1.htm>

¹⁰⁹ Տե՛ս The South Caucasus: a challenge for the EU, Chaillot Papers n°65, December 2003, EU Institute for Security Studies, Paris, p. 164-168:

դարձնում է ԵՄ-ի կարևոր շահերի առարկա, մանավանդ, որ դրանք վերաբերում են ՌԴ-ի և Թուրքիայի հետ ԵՄ-ի հարաբերություններին:

Հարավային Կովկասի վճռորոշ խնդիրներից մեկը կայանում է նրանում, որ այն աստիճանաբար դառնում է ամերիկյան «Մեծ Մերձավոր Արևելքի» մի մասը և սերտորեն համակցվում Կենտրոնական Ասիայի հետ: Այստեղ գնալով աճում է տարածաշրջանային մակրո- և մեզո-տե-րությունների ինքնուրույնությունը, իսկ փոքր պետություններն սկսում են խաղալ «հանգուցային օղակի» դեր: Դրան զուգահեռ հստակ ուրվագծվում է տեղի երկրների ռազմաքաղաքական և աշխարհատնտեսական դաշինքների ձևավորումը, որոնք հաճախ միմյանց նկատմամբ հակադիր կեցվածք են ընդունում: Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի համար տարածաշրջանային և միջտարածաշրջանային էներգետիկ ու հաղորդակցական նախագծերը դարձել են արտաքին քաղաքականության գործիքներ, որոնք նրանք օգտագործում են որպես լոբբինգի միջոց ԵՄ-ի, ԱՄՆ-ի և ՌԴ-ի հետ հարաբերություններում: Դա էլ ավելի ակնառու է դառնում այն դեպքերում, երբ հարցը վերաբերում է այդ նախագծերին չմասնակցող երրորդ երկրների (օրինակ, Հայաստանի) հետ հարաբերություններին:

Ոմանք էլ գտնում են, որ Եվրոպայի համար Հարավային Կովկասի բնաշխարհագրական պայմաններն այնքան էլ հետաքրքրական չեն, քանզի Կովկասն իր բավական սահմանափակ պաշարային ներուժով հանգուցային տարածաշրջան չէ: Եվ եթե ԱՄՆ-ի համար Կովկասն ունի «կամրջի» նշանակություն լայնամասշտաբ աշխարհաքաղաքական զուգակցությունների համար, ապա Եվրոպայի համար այն այսօր դիտարկվում է որպես «էթնիկ հակամարտություն» կոչվող հիվանդությամբ տառապող քաղաքական հաճախորդ, որի «բուժումն» ու արժեքների «եվրոպական» համակարգի տարածումը հանդիսանում է եվրոպական քաղաքականության առաջնահերթությունը:¹¹⁰

Որոշ հեղինակներ էլ առաջ են քաշում Հարավային Կովկասի բնորոշման յոթ մոտեցումներ¹¹¹, որոնք բոլորը, իրականում, ներառված են ԵՄ-ի

¹¹⁰ Այդպիսի կարծիք է հայտնել, օրինակ, Միջազգային քաղաքականության և անվտանգության գերմանական ինստիտուտի «Ռուսաստան և ԱՊՀ» խմբի ղեկավար Ռ. Գետցը: Տե՛ս Маркедонов С., Европеизация Кавказа - www.amina.com/kamina/3930.html

¹¹¹ Տե՛ս Helly D., EU Policies in the South Caucasus, Conférence: L'Europe et le Caucase du Sud / Europe and the South Caucasus, Bakou, 11 juin 2001 / Baku, June 11th 2001

հարավկովկասյան քաղաքականության մեջ: Բայց քանզի ԵՄ-ի անդամների միջև չկա միասնական դիրքորոշում այդ մոտեցումների ընտրության հարցում, ԵՄ-ի միասնական ռազմավարություն Հարավային Կովկասի նկատմամբ առայժմ գոյություն չունի:

1. **Եվրոպական Կովկաս**, որտեղ առաջին պլան է մղվում եվրոպական բաղադրիչը, ենթադրելով, որ տարածաշրջանում ներկայացված են եվրոպական արժեքները և այն հանդիսանում է ԵՄ-ի մոտ հարևանը: ԵՄ-ի շահն այս համատեքստում կապված է եվրոպական այդ արժեքների և տարածաշրջանի հետ էլ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու հետ: Այս մոտեցումը ենթադրում է եվրոպական ընդլայնման քաղաքականություն, որի արդարացումը Հարավային Կովկասի եվրոպական չափումն է: Դրա արտահայտությունն են հանդիսանում անդամակցությունը ԵՆ-ին, մասնակցությունն անդրեվրոպական այնպիսի ցանցերի, ինչպիսիք են ՏՐԱՍԵԿԱ և ԻՆՕԳԵՅԹ ծրագրերը:

2. **Բալկանյան Կովկաս**, որն առավել շեշտադրում է այստեղ անկայունության օջախների, հակամարտությունների և էթնիկ խնդիրների առկայությունը: Սա ենթադրում է հակամարտությունների կարգավորում ԵՄ-ի սահմաններից դուրս, միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում մասնագիտացված կառույցների միջոցով (օրինակ, ԵԱՀԿ ՄԽ), սակայն, ԵՄ-ի և այդ կառույցների սերտ փոխգործակցության շրջանակներում:

3. **Կասպյան Կովկասը** դիտարկում է Հարավային Կովկասն առավել լայն էներգետիկ Կասպյան (կամ Կենտրոնական Ասիայի) շրջանակներում՝ որպես էներգակիրների տարանցման համեմատաբար կենսունակ և արդյունահանման (Ադրբեջան) պակաս չափով կարևոր միջանցք:

4. **«Անդրկովկաս»** մոտեցումն ուշադրությունը կենտրոնացնում է Կովկասյան տարածաշրջանի աշխարհագրական միասնականության և ՌԴ-ի ազդեցության պահպանման վրա: Բայց եթե ԵՄ-ի մի շարք անդամներ ՌԴ-ի ազդեցությունն այստեղ ընկալում են որպես սպառնալիք, ապա մյուսները՝ որպես կայունության ապահովման կարևոր երաշխիք: Այս մոտեցումը հիմք է ընդունում նաև կապը Կովկասի հյուսիսային և հարավային հատվածների խնդիրների միջև:

5. **Կովկասի հետխորհրդային** ընկալումը շեշտադրում է տարածաշրջանի երկրներում անցումային գործընթացների առկայությունը, որոնց փորձագիտական-տեխնիկական աջակցությունը մշտապես հանդիսացել է եվրոպական կառույցների և երկրների ազդեցության միջոցներից մեկը:

6. **Կովկասի մերձավորարևելյան** մոտեցումն ընդգծում է տարածաշրջանի հարևանությունը Մերջավոր Արևելքի հետ, կապում այնտեղ ընթացող գործընթացների և Եվրո-միջերկրծովյան համագործակցության հետ: Ընդլայնված ԵՄ-ն իր էներգետիկ պահանջմունքները բավարարելու համար զգում է մերձավորարևելյան ածխաջրածնային պաշարների կարիքը, ինչն էլ հենց պետք է նպաստի Իրանի հետ նրա հարաբերությունների բարելավմանը: Այս մոտեցման շրջանակներում առանձնացվում են մի քանի ուղղություններ՝ հայ-թուրքական և իրանական, կասպյան էներգետիկ, կենտրոնաասիական խնդիրները՝ կապված թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ և այլն:

7. Կովկասն ընկալվում է նաև որպես «**երրորդ աշխարհի**» մաս, ըստ որի, ԵՄ-ի համար տարածաշրջանը կարևորվում է այնքանով, որքանով տեղի երկրներում սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացումը պատճառ կդառնա այստեղից դեպի ԵՄ-ի բարեկեցիկ երկրներ մարդկանց մեծ զանգվածների արտագաղթի համար:

Իրականում թե՛ ԵՄ-ի, թե՛ այլ ուժային կենտրոնների հարավկովկասյան քաղաքականությունն ունի լայն տարածաշրջանային ընդգրկում: Հատկապես էներգետիկ և տարանցման նախագծերի շրջանակներում Հարավային Կովկասը պետք է դիտարկվի առավել լայն **Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի** ենթատեքստում՝ այն կապակցելով նաև Կենտրոնական Ասիայի հետ: Հենց այդպիսի կարգավիճակ ունի Հարավային Կովկասը ԵՄ-ի էներգետիկ անվտանգության քաղաքականության համատեքստում: ԵՄ-ի համար տարածաշրջանը հետաքրքիր է և՛ էներգետիկ անվտանգության, և՛ ռազմաքաղաքական կայունության տեսանկյուններից: Այս համատեքստում որոշ հեղինակներ գտնում են, որ ԵՄ-ը պետք է մեծացնի իր աջակցությունն այնպիսի տարածաշրջանային կազմակերպություններին, որոնք հարթակ են հանդիսանում տարածայնություններ ունեցող երկրների (Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Ադրբեջան, Վրաստան-Ռուսաստան) հաղորդակցման համար, ինչպիսին, օրինակ, ՄՏՏՀԿ-ն է:¹¹²

Իր անմիջական հարևանների նկատմամբ ԵՄ-ի զգուշավոր քաղաքականության հիմքում ոմանք տեսնում են երեք հիմնական դրդապատճառներ: Առաջին, ԵՄ-ն այստեղ չունի ուղղակի շահագրգռվածություն,

¹¹² St'eu Aydin M., Europe's next shore: the Black Sea region after EU enlargement, European Union Institute for Security Studies, Occasional Paper n°53 June 2004, 2004, p. 15

ինչպես, օրինակ, Բալկանների դեպքում: Սևծովյան երկրները չունեն նաև այնպիսի լոբբիստական կենտրոններ ԵՀԲ-ի շրջանակներում, ինչպես Հարավային միջերկրծովյան տարածության առումով առկա է Իսպանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի դեպքում: Այս համատեքստում ակտիվ դերակատարություն են ստանձնել Լեհաստանն ու բալթյան երկրները, իսկ 2007թ. ԵՄ-ին Ռումինիայի և Բուլղարիայի անդամակցությունից հետո ԵՀԲ-ի արևելյան ուղղությունն ստացավ նոր խթան: Սա, բնականաբար, առաջ բերեց ԵՄ-ի շրջանակներում «պրոհարավային» և «պրոարևելյան» երկրների միջև տարածայնությունների որոշակի խորացում: Երկրորդ, ակնհայտ են շահերի տարբերությունները ՌԴ-ի առումով: ԵՄ-ի մի խումբ երկրներ, այդ թվում՝ Ֆրանսիան և Գերմանիան, ոչ միայն հանդես են գալիս ՌԴ-ի հետ հարաբերությունները խորացնելու, այլև այդ երկրին ռազմավարական գործընկերոջ կարգավիճակ տալու օգտին: Երրորդ պատճառ դիտարկվում է արտաքին քաղաքական ունակությունների անբավարարությունը, որը լրացնելու են գալիս ընդլայնման արդյունքում առաջացած նոր պարտավորությունները, պատասխանատվությունը Բալկանների համար, ինչպես նաև ներքին տարածայնությունները ԵՄ-ի սահմանադրական կարգավիճակի հարցում:¹¹³

Զնայած այս տարածությունում գործունակության թուլությանն ԱՄՆ-ի և ՌԴ-ի համեմատ, հավանական է, որ մոտ ապագայում ԵՄ-ը ևս առաջատար դերակատարում կստանձնի: Այդ նպատակով ԵՄ-ը շարունակում է զարգացնել տարանցիկ նշանակություն ունեցող այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են ՏՐԱՍԵԿԱ և ԻՆՕԳԵՅԹ ծրագրերը: Ավելին, 1997թ. Տրանսպորտի նախարարների եվրոպական երրորդ խորհրդաժողովում Սև ծովը հաստատվեց որպես Անդրեվրոպական տանսպորտային չորս գոտիներից մեկը:¹¹⁴ Իսկ ԻՆՕԳԵՅԹ ծրագիրը տեխնիկական և ներդրումային աջակցությունը կենտրոնացնում է Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի ածխաշրածնային պաշարների արդյունահանման և տեղափոխման հարցերում:

Այդուհանդերձ, Սևծովյան-Կասպյան տարածաշրջանը մնում է հակամարտածին օջախ, որոնց կարգավորման մեջ, բնականաբար, մեծապես շահագրգռված է ԵՄ-ը: Թերևս սա է այն հիմնական պատճառը, որ մի

¹¹³ St' u Lessenski M., The EU Policy toward its Black Sea Neighbors, Institute for Regional and International Studies, Sofia, 2005, p. 13.

¹¹⁴ St' u Black Sea Pan-European Transport Area (BS-PETra) - <http://www.bs-petra.org/6>.

շարք հեղինակներ պնդում են, որ ԵՄ-ը տարածաշրջանը պետք է դիտարկի էներգետիկ շահերի տեսնկյունից, աջակցելով համապատասխան ենթակառուցվածքների, ինչպես նաև Եվրոպայի ու Մերձավոր Արևելքի հետ տարածաշրջանի փոխկապվածության զարգացմանը:¹¹⁵ Դա ունի նաև քաղաքական ենթատեքստ, քանզի ԵՄ-ը պետք է աջակցի տարածաշրջանի նորանկախ երկրներին, որպեսզի վերջիններս պահպանեն հարաբերական ինքնուրույնություն արտաքին ճնշումներին դիմակայելու համար: Վերջինս էլ ենթադրում է ԵՄ-ի ներգրավվածությունը հակամարտությունների կանխարգելման և ճգնաժամերի կառավարման մեխանիզմների կառուցման գործին, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կովկասում պահպանվող հակամարտությունները կարող են խափանել հաղորդակցային ծրագրերի իրականացումը, արդյունքում ԵՄ-ի երկրներին ևս ներքաշելով այդ անկայունությունների մեջ:

ԵԱՌ-ի մեջ ամրագրվում է, որ ԵՄ-ի «խնդիրն է արևելյան հարևանների վրա տարածել տնտեսական և քաղաքական համագործակցության օգուտները, և միաժամանակ, զբաղվել այդ երկրներում առկա քաղաքական խնդիրներով»:¹¹⁶ Ըստ այդմ, ամրագրվում է Հարավային Կովկասի խնդիրների նկատմամբ առավել մեծ և ակտիվ հետաքրքրություն ցուցաբերելու անհրաժեշտությունը:

ԵՄ-ն ցանակնում է տեսնել իր հարևաններին անվտանգ՝ դրանով անուղղակիորեն պաշտպանելով իր անվտանգությունը հնարավոր սպառնալիքներից: Եվրոպական անվտանգության ռազմավարությունում ասվում է.«Չնայած գլոբալացմանը, աշխարհագրությունը դեռևս կարևոր է:Եվրոպայի շահերից է բխում, որ սահմանակից պետությունները լավ կառավարվեն:Այն հարևանները, որոնք ներգրավված են հակամարտություններում, թույլ պետությունները, որտեղ կազմակերպված հանցավորությունը ծաղկում է, իրենց գործառույթները չիրականացնող հասարակությունները կամ արագ աճող բնակչությունը՝ այս ամենը, խնդիրներ է հարուցում Եվրոպայի համար»¹¹⁷:ԵՄ-ի ընկալմամբ անվտանգության ապահովումը տարածաշրջանում առակա հակամարտությունների հան-

¹¹⁵ St' u Aydin M., Europe's next shore: the Black Sea region after EU enlargement, European Union Institute for Security Studies, Occasional Paper n°53 June 2004, 2004, p. 29.

¹¹⁶ A Secure Europe in a Better World, European Security Strategy, Brussels, 12 December 2003.

¹¹⁷ St' u՝ “A secure Europe in a better world: European Security Strategy”, Brussels,2003, էջ 8

գուցալուծումը չէ միայն: Ակտիվ կիրառման մեջ է դրվել նաև այսպես կոչված «փափուկ անվտանգությունը» կամ “soft security” հասկացությունը, որը ենթադրում է անվտանգություն ապահովել դրա համար նախադրյալներ ստեղծելով, այսինքն՝ դարձնել որոշակի առումով գաղափարակից, միևնույն արժեքների կրող:

Ռազմավարության մեջ ամրագրված սպառնալիքները և դրանց հակազդելու մեխանիզմները ևս վերաբերում են Հարավային Կովկասին: Այստեղ առաջին պլանի վրա են մղվում այնպիսի անհամաչափ կամ նոր մարտահրավերներ, ինչպիսիք են թմրանյութերի և մարդկանց առևտուրը, ահաբեկչությունը, ՋՈՋ տարածումը, տարածաշրջանային հակամարտությունները, կազմակերպված հանցավորությունը: Ավելին, հենց տարածաշրջանային հակամարտությունների, փակ սահմանների և անվտանգության մթնոլորտի առկայությունը Հարավային Կովկասում ԵՄ-ը դիտարկում է որպես իր իսկ անվտանգության սպառնալիքներ:

Եվ ահա այս սպառնալիքները Եվրոպային կարող են սպասվել նաև Հարավային Կովկասից: ԵՄ-ի համար տարածաշրջանը սպառնալիք է քրեական տարրերի հոսքի, միջազգային ահաբեկչության ցանցի և Հարավային Կովկասի պետությունների թուլության հետ կապված վտանգների տեսանկյունից:

Տարածաշրջանի աշխարհագրական դիրքը այն դրաձնում է բնական միջանցք զենքի և թմրանյութերի մաքսանենգության և կազմակերպված հանցավորության համար: Ահաբեկչության սպառնալիքը ևս մեկ չափորոշիչ է, որը մեծացնում է Հարավային Կովկասի կարևորությունը, և հատկապես Վրաստանինը չեչենական հակամարտության պատճառով: ԵՄ Հանձնաժողովի Արտաքին Գլխավոր Տնօրինության ներկայացուցիչ՝ պրն. Մայքլ Քոլերը, մասնավոր զրույցի ժամանակ նշել է. «ԵՄ չպետք է թույլատրի Վրաստանի նման կովկասյան պետությանը դառնալ ձախողված պետություն ժամանակակից աշխարհում և հատկապես տարածաշրջանում ահաբեկչության մտահոգության մեծացման պատճառով»¹¹⁸:

ԵԱՌ ներդրման հաշվետվության մեջ¹¹⁹ հատուկ անդրադարձ է կատարվում 2008թ. օգոստոսին սկիզբ առած վրաց-ռուսական հակամար-

¹¹⁸ Տե՛ս՝ Mariam Dekanozishvili “ The EU in the South Caucasus: By What Means, to What Ends?”, էջ 14

¹¹⁹ Տե՛ս՝ Report on the Implementation of the European Security Strategy, Providing Security in a Changing World, Brussels, 11 December 2008.

տությանը, ինչպես նաև Հարավային Կովկասում «սառեցված հակամարտությունների» կամ «սառեցված անկայունությունների» (“frozen instability”) առկայությանը: Դրանց կարգավորման գործում մեծ կարևորություն է տրվում ԵՄ-ի ընդհանուր դիրքորոշման ձևակերպմանը և համալիր (քաղաքական, տնտեսական, ռազմական, ուղղակի և միջնորդված, կառավարական և հանրային) մեխանիզմների ներդաշնակ կիրառմանը: Ընդհանրապես, տարածաշրջանային անվտանգության և կայունության ապահովման գործում ԵՄ-ը նախընտրում է բազմակողմ համագործակցության ձևաչափը՝ ենթադրելով կոնկրետ խնդիրների կարգավորման հարցում սերտ գործակցությունն ԱՄՆ-ի, ՌԴ-ի, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի հետ:

Ռիսկային գործոնների կողքին տարածաշրջանը նաև լայն հնարավորություններ է բացում ապրանքափոխանակության, տարանցիկ առևտրի և էներգակիրների արդյունահանման ու տարանցման համար: Այս առումով, Հարավային Կովկասի նշանակությունը ԵՄ-ի համար հարկ է դիտարկել նաև ԵՄ-ի էներգետիկ անվտանգության համատեքստում: Ինչպես նշվում է ԵԱՌ-ի ներդրման հաշվետվության մեջ, 2030թ. Եվրոպան ստիպված է լինելու նավթի և գազի 75%-ը ներմուծել, և խնդիրը նրանում է, որ դրանք ներկրվելու են հիմնականում անկայուն տարածաշրջաններից և խնդրաշատ երկրներից: Բնականաբար, սահմանափակ թվով աղբյուրներից կախվածությունը սահմանափակում է և կսահմանափակի ԵՄ-ի ինքնուրույնությունն արտաքին քաղաքականության ոլորտում: Այս ամենն անհրաժեշտ է դարձնում ընդարձակել էներգիայի ստացման աղբյուրների և դրա տարանցման ուղիների ցանկը, միաժամանակ, կարևորելով այդ երկրներում օրենքի նկատմամբ հարգանքի ամրապնդումն ու ֆինանսական ներդրումները՝ ներքին կայունություն և փոխվստահության մթնոլորտ ապահովելու նպատակով: Հենց այդ հիմնախնդիրներն են այսօր հիմնականում կազմում Կենտրոնական Ասիայում, Կովկասյան-Կասպյան, Միջերկրծովյան տարածաշրջաններում ԵՄ-ի արտաքին և անվտանգության քաղաքականության միջուկը: Հենց էներգետիկ գործոնն է այսօր հանգուցային դեր խաղում ՌԴ-ի, իսկ էներգակիրների տարանցման ուղիների խնդիր՝ Ուկրաինայի և Թուրքիայի հետ ԵՄ-ի հարաբերություններում:

Տևական ժամանակ ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականությունը մշակվում և իրականացվում էր ԵԸ-ի շրջանակներում, մասնավորապես, Եվրոպական հանձնաժողովի կողմից, բայց արդեն 2001թ. այն թեմատիկավորվեց նաև Խորհրդի մակարդակով: Այս առումով, լիովին հասկանա-

լի է ԵՄ-ի շատ անդամների դժգոհությունը՝ լինել տարածաշրջանի խոշորագույն վարկատուն, սակայն, միաժամանակ չխաղալ համապատասխան քաղաքական դեր: 1990-ական թթ. ԵՄ-ի շվեդական Նախագահությունը որոշեց, որ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հետ հարաբերություններին: Հարավային Կովկաս իրենց այցելության ժամանակ «Եռյակի» ներկայացուցիչներն ընդգծեցին տարածաշրջանային խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը: Հեռանկարում պատվիրակության այցը պետք է ամրապնդեր ԵՄ-ի դիրքերը Հարավային Կովկասում: 2001թ.-ից ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության առաջնահերթություններ դարձան տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովումը, տեղի երկրների տնտեսությունների զարգացմանն աջակցությունը:

2003թ. հաստատվեց նաև Հարավային Կովկասում ԵՄ-ի Հատուկ ներկայացուցիչը, ում առջև խնդիր դրվեց ապահովել ԵՄ-ի քաղաքականության հաջորդականությունն ու արդյունավետությունը տարածաշրջանում, աջակցել տեղի երկրների քաղաքական և տնտեսական բարեփոխումների իրականացմանը, հակամարտությունների կարգավորմանը, փախստականների վերադարձին և տարածաշրջանային համագործակցության զարգացմանը:

2003թ. ԵՄ-ի Խորհրդարանի անդամ Գ. Քվիստհուդ-Ռովոլըն առաջարկեց ՏԱՍԻՍ-ի շրջանակներում աջակցել Հայաստանին այլընտրանքային էներգետիկ զարգացման հայեցակարգի զարգացման և վերամշակման գործում՝ ուղղված ՀԱԷԿ-ի աշխատանքների շուտափույթ դադարեցմանը:¹²⁰ Պ. Գարտոնը ևս անհրաժեշտ համարեց Հարավային Կովկասում ԵՄ-ի առավել ակտիվ դերակատարությունը հակամարտությունների կարգավորման, քաղաքական և տնտեսական բարեփոխումների իրականացման, խաղաղության և կայունության վերականգնման ու միջտարածաշրջանային համագործակցության խթանման գործում, իսկ էներգետիկ անվտանգության տեսանկյունից՝ այլընտրանքային էներգամատակարարման աղբյուրների ստեղծման և շահագործման հիման վրա ՀԱԷԿ-ի աշխատանքների դադարեցումը:¹²¹

¹²⁰ St'u Europäisches Parlament, Ausschuss für Industrie, Außenhandel, Forschung und Energie, Vorläufig 2003/2225(INI), Godelieve Quisthoudt-Rowohl, PA\514504DE.doc // PE 337.419:

¹²¹ St'u Europäisches Parlament, Ausschuss für auswärtige Angelegenheiten, Menschenrechte, gemeinsame Sicherheit und Verteidigungspolitik, Entwurf eines

Հատկանշական է, որ հարավկովկասյան երկրներին վերաբերող բոլոր փաստաթղթերում ԵՄ-ն սկզբունքային կարևորություն է տալիս տարածաշրջանային համագործակցության ամրապնդմանն ու զարգացմանը: Դեռևս, ԳՀՀ-ների շրջանակներում Եվրոպական խորհրդարանի ընդունած որոշումներում ընդգծվում է Կովկասյան տարածաշրջանում կայունության և անվտանգության ապահովման նպատակով միջազգային այլ դերակատարների հետ գործակցությամբ ԵՄ-ի առավել ակտիվ քաղաքականության անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ տարածաշրջանային կայունության հաստատմանը, արդյունավետ համագործակցությանը, ժողովրդավարական և տնտեսական զարգացմանը մեծապես խոչընդոտում են տարածաշրջանային հակամարտություններն ու հակասությունները: Դրանց կարգավորման համար կարևորվում է միջազգային լայնամասշտաբ ներգրավվածությունը և ԵՄ-ի ու հարավկովկասյան երկրների միջև պարբերական խորհրդակցությունների մեխանիզմների ակտիվացումը, ԵՄ-ի աջակցությունը հակամարտությունների խաղաղ կարգավորման և հակամարտող կողմերի միջև վստահության մթնոլորտի ստեղծմանը:¹²²

Թեև հարավկովկասյան երկրների նկատմամբ ԵՄ-ը ցուցաբերում է ընդհանուր՝ տարածաշրջանային մոտեցում, սակայն նրանցից յուրաքանչյուրի հանդեպ վարած էներգետիկ քաղաքականությունը միշտ ունեցել է իր առանձնահատկությունները: Այսպես, Վրաստանի դեպքում մշտական ուշադրության կենտրոնում են գտնվել տրանսպորտային և ենթակառուցվածքային խնդիրները՝ հաշվի առնելով այս երկրի աշխարհագրական դիրքը: Ադրբեջանի նկատմամբ հատուկ հետաքրքրությունը պայմանավորված է նրա էներգետիկ պաշարներով և կենտրոնաասիական էներգետիկ պաշարները տարանցելու ճանապարհին նրա զբաղեցրած հանգուցային դիրքով: Հայաստանի դեպքում ԵՄ-ի ուշադրության հիմնական առարկան եղել և մնում է ՀԱԷԿ-ի փակմանը հարցը՝ դա պատճառաբանելով բնապահպանական խնդիրներով և սեյսմիկ անկայուն գոտում կայանի գտնվելու հանգամանքով:

Berichts, mit einem Vorschlag für eine Empfehlung des Europäischen Parlaments an den Rat zu der Politik der EU gegenüber dem Südkaukasus (2003/0000(INI)),
Berichterstatter: Per Gahrton, Vorläufig 2003/2225(INI), 24. November 2003:

¹²² Entschließung des Europäischen Parlaments zu der Mitteilung der Kommission an den Rat und das Europäische Parlament über die Beziehungen der Europäischen Union zu Transkaukasien im Rahmen der Partnerschafts- und Kooperationsabkommen (PKA) (KOM(1999) 272 – C5- 0116/1999 – 1999/2119(COS)); 28 Feb 2002:

Այսպիսով, որպես ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության հիմքեր կարող են դիտարկվել կասսյան ավազանի էներգետիկ պաշարները, կենտրոնաասիական տարածաշրջանի, և որպես հնարավոր հեռանկար՝ Իրանի ածխաջրածնային պաշարների տարանցման խնդիրները, ինչպես նաև, այդ նախագծերի անվտանգությունն ապահովելու նպատակով, տարածաշրջանային կայունության, տեղի երկրների քաղաքական և տնտեսական համակարգերի զարգացման խնդիրները:

3.2. Եվրոպական Միության շահերը Հարավային Կովկասում և տարածաշրջանային հիմնական դերակատարների վերաբերմունքը

Մի շարք արևմտյան վերլուծաններ Սևծովյան տարածաշրջանում առանձնացնում են շահերի երեք հիմնական խմբեր: Առաջինն ԱՄՆ-ի և մայրցամաքային Եվրոպայի առաջատար երկրների մասամբ համընկնող շահերն են, երկրորդը կազմում են ՌԴ-ը և Թուրքիան, երրորդը տարածաշրջանի համեմատաբար փոքր պետությունները, ներառյալ՝ Ուկրաինան, Բուլղարիան, Ռումինիան, Մոլդովան, Վրաստանը, որոնք ձգտում են դուրս գալ ռուսական ազդեցությունից, Հայաստանը, որը հետապնդում է իր սեփական ռազմավարությունը՝ կապված ԼՂ հիմնախնդրի և թուրքադրբեջանական շրջափակման հետ, ինչպես նաև Ադրբեջանը, որն իր էներգետիկ պաշարների տարանցման շնորհիվ ներկայումս ակտիվորեն մասնակցում է տարածաշրջանային գործընթացներին:¹²³

Սև ծովն իրենից ներկայացնում է ռազմավարական միջանցք, որը Կովկասի միջոցով Եվրոպան կապում է Կենտրոնական Ասիայի հետ, որտեղ իրենց ազդեցությունն են փորձում ամրապնդել արևմտյան տերությունները, Չինաստանը և ՌԴ-ը: Սևծովյան տարածաշրջանը նաև դարպաս է հանդիսանում Մերձավոր Արևելքի համար: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ը փորձում են այս տարածությունում իրենց ազդեցության ամրապնդման միջոցով ՌԴ-ին և Թուրքիային ինտեգրել արևմտյան միության մեջ, իսկ այդ ռազմավարության ձախողումը թույլ կտա ՌԴ-ին ու Թուրքիային իրականացնել ինքնուրույն ռազմավարություն:¹²⁴ Սև ծովը նաև

¹²³ St' u Minchev O., Major interests and strategies for the Black Sea region, Framework Analytical Review, September 2006 Sofia, p. 3.

¹²⁴ Ինքնուրույնության ակնհայտ դրսևորում կարելի է համարել այն հանգամանքը, որ այսօր թուրքական և ռուսական ծովային ուժերն ամբողջությամբ վերահսկում են Սև ծովը, իսկ օգոստոսի 8-ի հակամարտության

կարևոր առևտրային և էներգետիկ միջանցք է, որը Եվրոպային կարող է ապահովել այլընտրանքային ածխաջրածնային պաշարներով՝ փոքրացնելով կախվածությունը Մերձավոր Արևելքից և ՌԴ-ից:

Կոնկրետ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական քարտեզի վրա կարելի է առանձնացնել մի քանի հիմնական դերակատարներ, որոնց շահերի և վարած քաղաքականության հարաբերակցությունն էլ պայմանավորում է տարածաշրջանային գործընթացների տրամաբանությունը: Այդ դերակատարներն են ԱՄՆ-ը, ՌԴ-ը և ԵՄ-ը որպես գլոբալ ուժային կենտրոններ, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Գերմանիան՝ որպես եվրոպական խոշոր և առավել ակտիվ ուժային կենտրոններ¹²⁵, տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ունեցող Թուրքիան և Իրանը¹²⁶: Չնայած արևելաեվրոպական մի շարք երկրներ (մասնավորապես, Լեհաստանը և բալթյան երկրները) և Չինաստանը վերջերս ևս սկսել են մեծ հետաքրքրություն ցուցաբերել տարածաշրջանի նկատմամբ, առայժմ նրանց ակտիվությունն էականորեն զիջում է վերը նշված դերակատարների ներգրավվածությանը, և նրանց ազդեցությունը տարածաշրջանային գործընթացների վրա մնում է բավական սահմանափակ:

ԵՄ-ը չունի համակողմանի մշակված ռազմավարություն Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի նկատմամբ: Մասստրիխտյան պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո նա ակտիվորեն զբաղված էր ներքին բարեփոխումներով, ԿԱԵ երկրների վերափոխումներով, ինչպես նաև Բալկանյան տարածաշրջանի հետհակամարտային վերականգնման, և, բնականաբար, ի վիճակի չէր հատուկ ուշադրություն դարձնել Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի խնդիրներին: Սակայն մի շարք ազդեցիկ եվրոպական երկրներ միջնորդի կարգավիճակով ներգրավվեցին այս տարածաշրջանի հակամարտությունների կարգավորմանը, միաժամանակ, ցուցաբերե-

հաջորդած օրերին Թուրքիան թույլ չտվեց ՆԱՏՕ-ի (ԱՄՆ-ի) ռազմածովային ուժերին մտնել Սև ծով:

¹²⁵ Չնայած ԸԱԱՔ առկայությանը, ԵՄ-ին շատ դժվար է միևնույն հարթության վրա դնել ԱՄՆ-ի և ՌԴ-ի հետ՝ հաշվի առնելով ոչ միայն այն հանգամանքը, որ ԵՄ-ը չի հանդիսանում միասնական պետություն, այլև այն հանգամանքը, որ նրա առաջատար երկրները, որպես կանոն, համաշխարհային քաղաքականության մեջ շարունակում են առաջնորդվել իրենց սեփական շահերով: Այդուհանդերձ, հենց ԵՄ-ի ձևակերպած ընդհանուր շահերի և դրան ուղղված քաղաքականության առկայությունն էլ թույլ է տալիս ԵՄ-ը դիտարկել որպես ակտիվ դերակատար:

¹²⁶ Այս շարքին կարելի էր դասել նաև ՆԱՏՕ-ին և ՀԱՊԿ-ին, սակայն դրանք տարածաշրջանում հանդես են գալիս ոչ թե որպես ինքնուրույն դերակատարներ, այլ որպես իրենց առաջատար անդամների քաղաքականության գործիքներ:

լով զգուշավոր մոտեցում ՌԴ-ի նկատմամբ: Տարածաշրջանը մտավ ԵՄ-ի ակտիվ քաղաքականության օրակարգ 2004թ. ընդլայնմամբ, և ներկայումս, կապված նաև 2007թ. ընդլայնման և Թուրքիայի հետ բանակցությունների աշխուժացման, ինչպես նաև ռուս-վրացական հակամարտության հետ, ԵՄ-ն սկսել է մեծ ուշադրություն դարձնել տարածաշրջանի խնդիրներին: Այդուհանդերձ, անդամ-երկրները միաստեսակ վերաբերմունք չունեն այս հարցում: Լեհաստանը, Չեխիան և Բալթյան երկրները հանդես են գալիս հօգուտ ԵՄ-ի ակտիվ ներգրավմանը Ուկրաինայի և սև-ծովյան երկրների բարեփոխմանը¹²⁷: Եվրոպա-Կովկաս-Կենտրոնական Ասիա էներգետիկ և տարանցիկ միջանցքի զարգացման նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերում նաև ԵՄ-ի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները՝ Ավստրիան, Բուլղարիան, Ռումինիան, ինչպես նաև Լեհաստանն ու բալթյան երկրները՝ այդպես փորձելով «մեղմել» ՌԴ-ից իրենց էներգետիկ կախվածությունը: Սակայն ԵՄ-ի խոշոր տերությունների շահերն այստեղ պայմանավորված են զլխավորապես ՌԴ-ի հետ հարաբերություններով: Օրինակ, Ֆրանսիան և Գերմանիան բավական զուսպ են արձագանքում տարածաշրջանում ՌԴ-ի ակտիվությանը, տեղի երկրների ներքաղաքական կյանքին և հակամարտություններին նրա միջամտությանը: Նրանք չեն էլ ձգտում ակտիվորեն ներգրավվել հետխորհրդային տարածության բարդ հակամարտությունների կարգավորմանը: Բնականաբար, նավթա-գազային նախագծերում մեծապես շահագրգռված են հատկապես ԿԱԵ երկրները, որոնք մեծապես կախված են ՌԴ-ից ստացվող էներգակիրներից: Մինչդեռ միջերկրծովյան պետությունները տիրապետում են ավանդական ու առավել հուսալի նավթային աղբյուրների Հյուսիսայի Աֆրիկայում և Պրասից ծոցում: Մինչ վերջին ժամանակները միայն Գերմանիային էր հաջողվել ապահովել իր մուտքը համաշխարհային նշանակություն ունեցող և ԱՄՆ ու Բրիտանիայի հսկողությունից դուրս գտնվող նավթային ու գազային աղբյուրներին, ինչպես, օրինակ, Հարավային Փարսն Իրանում:

Բացի դրանից, իր արտաքին քաղաքականության գործիքների շարքում ԵՄ-ը դեռևս չի մշակել առավել արդյունավետը, քան փոխպայմանավորումն է, որի ազդեցությունը, սակայն, մեծ է միայն անդամակցության իրատեսական հեռանկարներ ունեցող երկրների դեպքում: Եվ միայն վեր-

¹²⁷ Այդ աջակցության օրինակներ կարելի է համարել ՎՈՒԱՄ-ին ցուցաբերվող օժանդակությունը, Սևծովյան ֆորումը, «Վրաստանի բարեկամների» խմբի ձևավորումը:

ջերս անդամ-երկրներն ընդհանուր հայտարարի եկան ԵՀԶ-ի ու ԱԳ-ի ներդրման հարցում, որոնք կոչված են լրացնելու արևելյան ուղղությամբ ԵՄ-ի արտաքին քաղաքականության այդ հարաբերական թուլությունը:

Հզոր արտաքին դերակատարների ներկայությունն ու մրցակցությունն էապես դժավարացնում են ԵՄ-ի ռազմավարական ներթափանցումը տարածաշրջան: Ոմանք գտնում են, որ Եվրոպայի արդյունավետ սև-ծովյան-կասպյան քաղաքականությունը մեծապես կախված է ԵՄ-ԱՄՆ հարաբերություններից¹²⁸, բայց, իրաքյան ճգնաժամից սկիզբ առած տարածայնություններն առայժմ հիմք չեն տալիս խոսելու արևմտյան միասնական ռազմավարության մշակման մասին: Թեև սեպտեմբերի 11-ից հետո ԵՄ-ը և ԱՄՆ-ը փորձեցին մշակել այդպիսի ռազմավարություն, որը, ամերիկյան դիտանկյունից, հենվում է ՆԱՏՕ-ի հետ գործընկերության խորացման առաջնայնության և նավթային ընկերությունների ազդեցության վրա, իսկ եվրոպական դիտանկյունից՝ քաղաքական և տնտեսական համագործակցության զարգացման վրա: Ընդհանուրն այստեղ կասպյան էներգապաշանների հաշվին ՕՊԵԿ-ի երկրների մատակարարումներից իրենց կախվածությունը թուլացնելու և տարածաշրջանը ծայրահեղական խմբավորումներից գերծ պահելու ձգտումն է:

Այս համատեքստում հարկ է հաշվի առնել նաև Իրանի, Թուրքիայի և ՌԴ-ի դիրքորոշումը: Օրինակ, եթե ամերիկյան ակտիվության աճը պայմանավորված է կասպյան էներգապաշարների նկատմամբ հսկողություն ապահովելու խնդրով, ապա ՌԴ-ը ձգտում է վերականգնել իր նախկին ռազմական, քաղաքական և տնտեսական ազդեցությունը տարածաշրջանում: Արտաքին և անվտանգության քաղաքականության իմաստով ԵՄ-ի ազդեցությունն անհամեմատելի է ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Իրանի և Թուրքիայի հետ: Ըստորում, նկատելի են էական տարբերություններ Հարավային Կովկասում ԱՄՆ-ի և ԵՄ-ի ռազմավարական նպատակների միջև: ԵՄ-ը չի ձգտում մեկուսացնել ՌԴ-ին կամ Իրանին Կասպյան ավազանի էներգետիկ և առևտրային նախագծերում, և, չնայած ԵՄ-ը չի էլ հավակնում դառնալ տարածաշրջանային անվտանգության հիմնական դերակատարներից մեկը, նա փորձում է Հարավային Կովկասը վերածել իր հարևանությամբ կայունության, արդյունավետ կառավարվող երկրների գոտու:

¹²⁸ St'eu Minchev O., Major interests and strategies for the Black Sea region, Framework Analytical Review, September 2006 Sofia, p. 9.

ԵՄ-ի կովկասյան քաղաքականության հիմքում կարելի է առանձնացնել մի շարք հիմնասկզբունքներ, ինչպիսիք են, ժողովրդավարական և տնտեսական վերափոխումների աջակցությունը՝ որպես երկարաժամկետ խաղաղության և կայունության նախապայման, տարածաշրջանային համագործակցություն՝ տարատեսակ ռազմավարական դաշինքների մեջ մտնելու փոխարեն, ներգրավումը որոշումների ընդունման եվրոպական համակարգի մեջ:

ԵՄ-ի արտաքին և անվտանգության քաղաքականության մշակման ու իրականացման վրա էական ազդեցություն ունեն Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Իտալիան: Սակայն ԵՄ-ի երկրներից առայժմ միայն **Մեծ Բրիտանիային** է հաջողվել իր ազդեցությունն ամրապնդել Հարավային Կովկասում և իր նավթային ընկերությունների միջոցով ակտիվորեն ներգրավվել կասպյան (մասնավորապես, ադրբեջանական) էներգետիկ նախագծերում: Նա Հարավային Կովկասը համարում է իր ավանդական ազդեցության գոտին և այստեղ հետապնդում է հստակ աշխարհատնտեսական շահեր: Դրանց անվտանգության պահովումը ևս Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքական խնդիրներից մեկն է, որն առայժմ չի հաջողվել լուծել, քանզի առայժմ Հարավային Կովկասում անվտանգության իրական երաշխիքներ կարող է ապահովել միայն ՌԴ-ը:

Թեև ԽՍՀՄ փլուզումից հետո **Գերմանիան** առաջիններից մեկը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց հարավկովկասյան երկրների հետ, մինչ այժմ նա նախընտրում է իր հարավկովկասյան քաղաքականությունն իրականացնել միջազգային կառույցների, նախևառաջ, ԵՄ-ի «դրոշի» ներքո: Հատկանշական է, որ Գերմանիան երկար ժամանակ կարողանում էր ապահովել իր հարաբերական ազդեցությունը Վրաստանում, սակայն այստեղ տեղի ունեցած իշխանափոխությունից հետո առավել ակնհայտ են դառնում Վրաստանի արտաքին քաղաքականության մեջ պրոամերիկյան կողմնորոշումները:

Այդուհանդերձ, Գերմանիայի հարավկովկասյան քաղաքականությունը բավական հստակ ու համակարգված է, իսկ որպես դրա հիմնասկզբունքներ կարելի է համարել միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ) միջոցով տարածաշրջանում երկարաժամկետ և կայուն խաղաղության հաստատումը, տեղի երկրների ենթակառուցվածքների զարգացումը և տնտեսական զարգացմանն աջակցությունը: Սակայն, ի տարբերություն Մեծ Բրիտանիայի, Գերմանիային չի հաջողվել ապահո-

վել իր ընկերությունների առաջատար դիրքերը տարածաշրջանային էներգետիկ նախագծերում:¹²⁹

Հատկանշական է, որ վերջին տարիներին Պերմանիան ԵՄ-ի միակ երկիրն է եղել, որ ձգտել է էականորեն վերափոխափոխել իր կովկասյան քաղաքականությունը՝ այդ նպատակով մշակելով նոր արևելյան քաղաքականություն (Neue Ostpolitik) հետխորհրդային երկրների նկատմամբ: 2006թ. դաշնային կանցլեր Ա. Մերկելը հայտարարեց ԵՄ-ի նոր արևելյան քաղաքականության իր հայեցակարգի մասին, որը պետք է խարսխված լիներ էներգետիկ խնդիրների և Հարավային Կովկասի՝ որպես ԵՄ-ում Պերմանիայի նախագահության տարածաշրջանային առաջնահերթության վրա:¹³⁰ Բնականաբար, Պերմանիայի համար առանձնահատուկ հետաքրքրություն պետք է ներկայացներ Ադրբեջանից Եվրոպա ածխաջրածնային պաշարների տարանցման հարցը:

Շնորհիվ Հայաստանի հետ ավանդական սերտ հարաբերությունների և ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահության կազմի մեջ ընդգրկվածության, **Ֆրանսիան** որոշակիորեն կարողացել է ապահովել իր դիրքերը Հարավային Կովկասում: Ավելին, ռուս-վրացական հակամարտության նկատմամբ ԵՄ-ի միասնական դիրքորոշումն արտահայտեց հենց Ֆրանսիայի նախագահը՝ դրանով իսկ փաստելով ԵՄ-ի հետաքրքրության աճը տարածաշրջանային գործընթացների նկատմամբ:

Եվրոպական առաջատար երկրներին Հարավային Կովկասում միավորող գլխավոր հանգամանքը տարածաշրջանում ռազմական բախումները բացառելու ձգտումն է, ինչը կմեծացնի եվրոպական էներգետիկ և տարանցիկ նախագծերի իրագործման ռիսկայնությունը և պատճառ կդառնա տարածաշրջանային մյուս դերակատարների, մասնավորապես, Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի և ՌԴ-ի անցանկալի ակտիվացման համար: Այդ իսկ պատճառով Ֆրանսիան, Պերմանիան և Իտալիան տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման հարցում առայժմ նախընտրում են սահմանափակվել ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի շրջանակներով, իսկ Եվրոպայի հիմնական գազամատակարարը հանդիսացող ՌԴ-ի հետ իրենց

¹²⁹ Դա անգամ այն դեպքում, երբ «Նաբուկո» գազատարի նախագիծն իրականացնողներից մեկը գերմանական RWE ընկերությունն է: Փոխարենը Պերմանիայի կառավարությունն ակտիվորեն աջակցում է «Յուրսիսային հոսանք» ռուսական գազային նախագծի իրականացմանը:

¹³⁰ Steu Merkel will Initiative für EU-Verfassung starten, Die Welt, 18 April 2006 - http://www.welt.de/print-welt/article211200/Merkel_will_Initiative_fuer_EU_Verfassung_starten.html

հարաբերություններում ավելորդ լարվածություն չառաջացնելու համար վերապահումով են վերաբերում տարածաշրջանում ՆԱՏՕ-ի ակտիվացման հնարավորությանը: Այդուհանդերձ, այդ երկրները չեն բացառում ԵՄ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու ներքո Հարավային Կովկաս զինված ուժեր ուղարկելու հնարավորությունը, սակայն, խաղաղապահ գործառույթներով: Նրանց համար ցանկալի չէ նաև Թուրքիայի հետ գործակցության խորացումը տարածաշրջանում, քանզի, ինչպես ցույց տվեց «Նաբուկո» գազատարի նախագծի ակտիվացման շուրջ Թուրքիայի պաշտոնական շրջանակների վերաբերմունքը, այդ երկիրը կարող է նմանատիպ նախագծերն օգտագործել ԵՄ-ին անդամակցության իր խնդիրները «ետին դռնից» լուծելու համար:

Ընդհանրապես շատերն են խոսում միասնական Արևմուտքի անվտանգության քաղաքականության մասին՝ նկատի ունենալով ԱՄՆ-ի և ԵՄ-ի ու նրա առաջատար երկրների շահերի ընդհանրությունը բազմաթիվ գլոբալ հարցերում: Սակայն ռազմավարական ընդհանրությունների ֆոնի վրա վերջին տարիներին ակնհայտ են դարձել նաև նրանց մարտավարական տարածայնությունները (գլոբալ բնապահպանական խնդիրներ, Բալկանյան և Իրաքյան ճգնաժամեր, ՆԱՏՕ-ին Ուկրաինայի և Վրաստանի, ինչպես նաև ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը, ՌԴ-ի հանդեպ քաղաքականությունը և այլն): Դրանք պայմանավորված են մի շարք հանգամանքներով: Այսպես, ԱՄՆ-ը նախընտրում են գործել գլոբալ մասշտաբով և միակողմանի, ԵՄ-ը՝ տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների միջոցով, ԱՄՆ-ը հաճախակի են նախընտրում միջազգային հակասությունները լուծել ուժային մեթոդներով, մինչդեռ ԵՄ-ը նախապատվությունը տալիս է «փափուկ ուժին», ԱՄՆ-ի անվտանգության քաղաքականության մեջ ՆԱՏՕ-ն մնում է միակ նախապատվելի ռազմաքաղաքական կառույցը, մինչդեռ ԵՄ-ը փորձում է եվրոպական թատերաբեմում և մերձակա տարածաշրջաններում ամրապնդել նաև իր ԸԱՊՔ մեխանիզմները:

Իրաքյան խնդիրն էլ ավելի ակնառու դարձրեց ԱՄՆ-ի և մայրցամաքային Եվրոպայի երկրների ռազմավարական տարածայնությունները: Այսօր դժվար է խոսել Սևծովյան տարածաշրջանի նկատմամբ միասնական արևմտյան քաղաքականության առկայության մասին: Եվ, առաջին հերթին, դա վերաբերում է ՌԴ-ի հետ հարաբերություններին: Եթե մինչև Բ. Օբամայի նախագահությունն ԱՄՆ-ը ՌԴ-ին դիտարկում էին որպես հակառակորդ այս տարածաշրջանում, ապա Չերմանիայի և Ֆրանսիայի հա-

մար ընդունելի է ՌԴ-ի մտահոգությունն ու քաղաքականությունը՝ զսպել Ատլանտյան դաշինքի առաջխաղացումը դեպի իր սահմանները: ԽՍՀՄ փլուզումից հետո, ԱՄՆ-ը, ստանալով արևմտաեվրոպական իր դաշնակիցների աջակցությունը, կարողացավ անվտանգության եվրոատլանտյան կառույցների սահմաններն ընդհուպ մոտեցնել ԱՊՀ տարածքին և ԿԱԵ-ում ապահովել իր ռազմավարական հսկողությունը: Այդ ռազմավարության տրամաբանական շարունակությունը պետք է դառնար պրոատլանտյան կողմնորոշում ունեցող Ուկրաինայի և Վրաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին, ինչը, սակայն, լուրջ տարածայնությունների տեղիք է տալիս թե՛ ՆԱՏՕ-ՌԴ հարաբերություններում, թե՛ հենց ՆԱՏՕ-ի շրջանակներում:

Տարածայնությունների երկրորդ խումբը կապված է ԵՄ-ի ընդլայնման հետ: Եթե նախկինում ԿԱԵ երկրների անդամակցությունը ՆԱՏՕ-ին ճանապարհ էր հարթում դեպի ԵՄ-ին անդամակցություն, ապա այս ձևաչափն այսօր այնքան էլ չի աշխատում: ԵՄ-ի մայրցամաքային առաջատար երկրները դիմադրում են ԱՄՆ-ի ճնշումներին՝ կապված ԵՄ-ին այս կամ այն երկրի անդամակցության հետ, քանզի «ամերիկյան ակումբի» անդամների ավելացումը ԵՄ-ի ներսում դիտարկվում է որպես ամերիկյան ռազմավարության մի մասը՝ թույլ չտալ, որպեսզի ԵՄ-ը վերածվի միջազգային թատերաբեմում իրենց մրցակցի: Սա նշանակում է, որ առնվազը միջնաժամկետ հեռանկարում ԵՄ-ը մտադրություն չի ունենա ընդլայնվել ի հաշիվ սևծովյան և հետխորհրդային երկրների:

2008թ. օգոստոսյան ռուս-վրացական հակամարտությունն ակնհայտ դարձրեց, որ **ՌԴ-ը** չի պատրաստվում զիջել իր ազդեցությունը Կովկասյան տարածաշրջանում, իսկ նրա էներգետիկ ընկերությունների ակտիվությունը Կասպյան տարածաշրջանում, ինչպես նաև կենտրոնաասիական երկրներում ռազմավարական ներկայություն հաստատելու՝ ամերիկյան ծրագրերի ձախողումը վկայում են այս տարածությունում ռուսական հավակնությունների մասին: ՌԴ-ը և Թուրքիան ձգտում են սահմանափակել տարածաշրջանում արևմտյան երկրների և կազմակերպությունների ազդեցությունը, սակայն նրանց միջև ևս արդեն մի քանի դար շարունակվում է մրցակցությունն այստեղ տիրապետող դիրքեր հաստատելու համար: Բայց հենց այդ մրցակցությունն է խոչընդոտում արտաքին ուժերի ռազմական և քաղաքական միջամտությանը տարածաշրջանային գործընթացներին: ՌԴ-ը ձգտում է վերականգնել իր նախկին ազդեցությունը համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներում՝ դրա համար

օգտագործելով թե՛ իր էներգետիկ պաշարները, թե՛ ավանդական ազդեցությունը նախկին խորհրդային երկրներում ու հակաարևմտյան խմբավորումներում:

ԵՄ-ը ընդունում է ՌԴ-ի շահերը ետխորհրդային տարածքում: Բացի դրանից, ԵՄ-ն առայժմ ստիպված է կասսյան էներգապաշների տարանցումը քննարկել ՌԴ-ի հետ էներգետիկ երկխոսության շրջանակներում, ինչը ՌԴ-ին հնարավորություն կտա ստանալ այդ տարացման շահույթի մի մասը: Ըստորում, հարավկովկասյան տրանսպորտային միջանցքը բավական խոցելի է տարածաշրջանային անկայունությունների պատճառով և չի կարող դիտարկվել որպես եվրոպական աշխարհատնտեսական նախագծերի իրագործման հուսալի դաշտ: Եվրոպայի համար ներկայումս առավել նախընտրելի է հաղորդակցական խնդիրները լուծել ՌԴ-ի հետ: Որոշ հեղինակներ նկատում են, որ քանզի Եվրոպան ավելին, քան ԱՄՆ-ը շահագրգռված է Կասսյան ավազանի ու Կենտրոնական Ասիայի հումքային պաշարների օգտագործման մեջ, ԵՄ-ի համար սուր մրցակցությունը ՌԴ-ի հետ հաղորդակցության ուղիների հարցերում բոլորովին ձեռնտու չէ: ¹³¹ Ղա, իհարկե, չի գոհացնում ԱՄՆ-ին, բայց նրանք ևս հիանալի գիտակցում են, որ անիմաստ է շուտափույթ լուծել հարավկովկասյան միջանցքի հաղորդակցական ուղիների կազմակերպման հարցը, քանզի այդ ուղիների գլխավոր սպառողը, միևնույնն է, լինելու է Եվրոպան: Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «սառը պատերազմի» ավարտից հետո առանձին քաղաքական հարցերի շուրջ ԵՄ-ը հակված է ՌԴ-ի հետ համագործակցությանը, նրանք երկուսն էլ շահագրգռված են բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման մեջ՝ ի դեմս միաբևեռ աշխարհակարգի՝ ԱՄՆ-ի առաջնորդությամբ:

Տարածաշրջանի մեկ այլ ազդեցիկ տերություն՝ **Թուրքիան**, լինելով ՆԱՏՕ-ի անդամ, հանգուցային դեր է խաղում Հարավ-Արևելյան Եվրոպայում Արևմուտքի ռազմական գերակայության պահպանման գործում: Սակայն նա ևս տարածայնություններ ունի ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության և ահաբեկչության դեմ պայքարի հարցերում:

Ջբ. Բժեզինսկու բնորոշմամբ, որպես աշխարհաքաղաքական կարևոր կենտրոն՝ Թուրքիան կայունացնում է Սևծովյան տարածաշրջանը, հսկում դրանից ելքը դեպի Միջերկրական ծով, հավասարակշռում

¹³¹ St'u Мурадян И., Геоэкономические факторы развития политических процессов в Кавказско-Каспийском регионе, Ер., 2001, стр. 158-159.

ՌԴ-ին Կովկասում, դեռևս մնում է իսլամական արմատականության «հակաթույնը» և ծառայում որպես ՆԱՏՕ-ի հարավային սահման:¹³² Բայց եթե ԱՄՆ-ը Սևծովյան-Կասպյան տարածությունում իրենց ռազմական ներկայության իրական գործընկեր համարում են Թուրքիային, ապա եվրոպական երկրները չեն շտապում սերտ համագործակցել Թուրքիայի հետ տարածաշրջանային հարցերում՝ հաշվի առնելով այստեղ նրա հատուկ աշխարհառազմավարական շահերը: Երբեմն անգամ հայ-թուրքական հարաբերություններում առկա խնդիրներն են դառնում շահարկման առարկա ԵՄ-ին այս երկրի անդամակցության հարցում, հատկապես այն անդամների կողմից, որոնք դեմ են Թուրքիայի անդամակցությունը:

Իրանը ևս մնում է վիճահարույց թեմա մայրցամաքային եվրոպական երկրների և ԱՄՆ-ի փոխհարաբերություններում, քանզի եվրոպական երկրներն Իրանը դիտարկում են որպես ածխարջածնային հումքի կարևոր, այլընտրանքային աղբյուր և իրենց տեխնոլոգիաների իրացման տարողունակ շուկա: Այդ իսկ պատճառով նրանք բացասաբար են վերաբերում Իրանը հյուսիսից շրջափակելու ԱՄՆ-ի, Իսրայելի, մասամբ, նաև Թուրքիայի ծրագրերին, առավել ևս, նրա նկատմամբ կոշտ միջազգային պատժամիջոցներ կիրառելուն: Ակնհայտ է, որ Իրանին տիրելով, ԱՄՆ-ը կտիրեն ողջ Մերձավոր Արևելքին և այստեղի նավթա-գազային պաշարներին ու կմեծացնեն ԵՄ-ի կախվածությունն ԱՄՆ-ից:

Հարավկովկասյան երկրների առումով տեղին է նշել, որ նրանք արդեն հայտարարել են իրենց «եվրոպական» ընտրության մասին և ձգտում են առավելագույնս ներգրավվել եվրոպական կառույցներին ու գործընթացներին: Բայց այդ հարցում նրանց դիրքորոշումները բավական տարբեր են: Ս. Էմերսոնը և Ն. Պոպեսկուն առաջ են քաշում հարավկովկասյան երկրների եվրոպականացվածության իրենց բնութագրությունը: Ըստ եվրոպականացվածությանը տրամադրվածության Վրաստանն ու Հայաստանը բնորոշվում են որպես պատրաստակամ, իսկ Արդբեջանը՝ պասիվ:¹³³ **Վրաստանը** ցանկանում է լիարժեք ինտեգրվել ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին՝ վերջանականապես ձեռք բերելով անկախություն ՌԴ-ից: Վրաստանի խորհրդարանը 1997թ. ընդունեց հայեցակարգային մի փաստաթուղթ, ո-

¹³² Ст'ю Бжезинский Збигнев. Великая шахматная доска (Господство Америки и его геостратегические императивы), М.: Междунар. отношения, 1998., стр. 56, 62-63.

¹³³ Ст'ю Emerson M., Popescu N., European Neighbourhood Policy Two Years on: Time indeed for an "ENP plus", Journal of Foreign Policy of Moldova, issue: 03 / 2007, p. 24

րում եվրոպական կառույցների կառուցողական դերը հակադրվում էր ՌԴ-ի «կայսերական» քաղաքականությանը: 1999թ. Վրաստանի նախագահ Է. Շևարդնաձեն վրացական արտաքին քաղաքականության եվրոպական ուղղությունը հռչակեց որպես առաջնահերթություն: Նույն թվականին Վրաստանն անդամակցեց ԵՄ-ին՝ չնայած երկու ազգամիջյան չկարգավորված հակամարտությունների առկայությանը: Այդպես ճանաչվեց այդ երկրի «եվրոպական» բնույթը: Իսկ 2003թ. Մ. Սահակաշվիլիի իշխանության գալուվ «եվրոպական ուղղությունը» և ՆԱՏՕ-ին ինտեգրումը դարձան Վրաստանի արտաքին քաղաքականության ռազմավարական ուղղություններ: ՆԱՏՕ-ին անդամակցությունը պայմանավորվում է պետական անկախության, տարածքային ամբողջականության և ՌԴ-ի քաղաքականությանը հակազդելու խնդիրներով: ԵՄ-ին անդամակցության հարցում բավական զուսպ դիրքորոշում ունեցող Հայաստանի և Ադրբեջանի կողքին Վրաստանը քանիցս հայտարարել է իր այդ մտադրությունը, բայց առայժմ այդ գործընթացի սկիզբը երաշխավորող ոչ մի փաստաթուղթ կնքված չէ և, հավանաբար, չի կնքվի այնքան ժամանակ, քանի դեռ Վրաստանը չի կարգավորել իր ներքին խնդիրները: Նա դեռևս խնդիրներ ունի նաև օրենսդրության ներդաշնակեցման, դատական և տեղական ինքնակառավարման համակարգերի բարեփոխումների, բազմակուսակացական համակարգի զարգացման և ԶԼՄ-ների անկախության ապահովման հարցերում:

Այդուհանդերձ, Վրաստանը կարողացել է տարածաշրջանում առաջատար տեղ գրավել եվրոպական կառույցների հետ համագործակցության հարցում: ԵՄ-ին անդամակցելուց հետո վրացական մի շարք վերլուծաբաններ կարծում էին, որ Վրաստանը ԵՄ-ի անդամ կդառնա ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո:¹³⁴ Ըստ այդմ, ՆԱՏՕ-ի արևելյան ընդլայնումը ժամանակի ընթացքում պետք է ընդգրկեր նաև հարավկովկասյան երկրները, ինչով տարածաշրջանը կստանար պաշտպանական վահան: Բայց, չնայած ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հաջողություններին, այդ կառույցին Վրաստանի անդամակցության հեռանկարը ևս մնում է բավական մշուշոտ:

Մինչ 2008թ. օգոստոսյան իրադարձությունները Վրաստանը համարվում էր Արևմուտքի նախընտրելի գործընկերը Հարավային Կովկասում՝

¹³⁴ Տե՛ս Зубабашили Г. Южный Кавказ на пути к Европе, Центральная Азия и Кавказ, N 4(34), 2004, с. 160-162.

պայմանավորված այդ երկրի աշխարհաքաղաքական դիրքով և արտաքին քաղաքական կողմնորոշմամբ: Վրաստանը համարվում էր Կասպյան ավազանը Սևծովյան շրջանի և Թուրքիայի հետ կապող բնական միջանցք, որն Արևմուտք կասպյան նավթի արտահանման համար ՌԴ-ը, Հայաստանը և Իրանը շրջանցող միակ ուղին է:

Հարևան Ադրբեջանի և Թուրքիայի հետ լուրջ խնդիրներ ունեցող Հայաստանի համար ՌԴ-ի հետ ռազմավարական դաշինքը և ռուսական զորքերի առկայությունը սեփական տարածքում դիտարկվում են որպես ազգային անվտանգության անկյունաքարեր: Իրանը ևս համարվում է կարևոր գործընկեր, մասնավորապես, շրջափակման պայմաններում էներգետիկ անվտանգության և ապրանքափոխանակության հարցերում: Եթե Վրաստանն ակնհայտորեն, իսկ Ադրբեջանը՝ ոչ այնքան, ձգտում են ներառվել անվտանգության եվրոատլանտյան համակարգի մեջ, ապա Հայաստանն ընտրել է ՀԱՊԿ-ի շրջանակներում ռազմաքաղաքական դաշինքի տարբերակը: Հայ հասարակությանը դժվար կլինի համոզել, որպեսզի երկիրն իր անվտանգության երաշխիքները փնտրի ՆԱՏՕ-ի շրջանակներում, որի հանգուցային անդամներից մեկը հանդիսանում է Թուրքիան, որը, իր հերթին, արդեն երկար ժամանակ փակ է պահում իր սահմանները Հայաստանի հետ և մինչ վերջերս Ադրբեջանի հետ միասին հանդես էր գալիս Հայաստանին տարածաշրջանային ծրագրերում չներառելու օգտին: Այդ պատճառով Հայաստանում ՆԱՏՕ-ին անդամակցության հարցը երբեք լուրջ քննարկման առարկա չի եղել, թեև այդ կառույցի հետ ձեռք են բերվել դինամիկ զարգացող հարաբերություններ:

Այդուհանդերձ, Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում կա փոխհամաձայնություն այն հարցում, որ երկրի ապագան եվրոպական կառույցների շրջանակներում է: Հարավկովկասյան երկրներից նա առաջինն ստացավ ԵՆ ԽՎ-ում հատուկ հրավիրյալի կարգավիճակ (1996թ.): Այսօր ԵՀԲ-ին իր ակտիվ մասնակցությունը Հայաստանը դիտարկում է որպես տարածաշրջանային մեկուսացումից դուրս գալու և տնտեսական զարգացման խթանման միջոց: Որպես վերջնական նպատակ՝ Հայաստանը դիտարկում է ԵՄ-ի հետ առավել սերտ հարաբերությունների հաստատումը, իսկ առավել պրագմատիկ մակարդակում բարեփոխումներն ակնհայտ են տնտեսական ոլորտում, թեև նկատելի է առաջընթաց նաև քաղաքական, սոցիալական և դատական ոլորտներում: Նա հարավկովկասյան միակ երկիրն է, որը թեև չի հայտնել ՆԱՏՕ-ին անդամակցության ցանկություն, ակտիվորեն ներգրավվում է եվրոպական կա-

ռույցներին ու գործընթացներին՝ իր արտաքին քաղաքական նպատակների իրագործման համար հաճախ ստանալով Սփյուռքի աջակցությունը:

Այսպիսով, Հայաստանն ընտրել է եվրոպական երկրների ընկերակցությանը ներգրավվելու ուղին՝ միաժամանակ պահպանելով իր հատուկ հարաբերությունները ՌԴ-ի, բարիդրացիական հարաբերությունները Մերձավոր Արևելքի երկրների հետ և զարգացման մեծ շարժընթաց ունեցող հարաբերություններն ԱՄՆ-ի հետ:

Ադրբեջանը ևս միանշանակ չի վերաբերում եվրոատլանտյան կառույցներին ինտեգրվելու հարցին: Երկրի ղեկավարությունն ընդգծում է ԵՄ-ի հետ բոլոր ուղղություններով ինտեգրման անհրաժեշտությունը՝ Ադրբեջանը համարելով նոր Եվրոպայի բաղկացուցիչ մասը: Նա բավական բարդ հարաբերություններ ունի ՌԴ-ի հետ և Հայաստանի հետ գտնվում է հակամարտության մեջ, մյուս կողմից, նա փորձում է դառնալ տարածաշրջանի էներգակիրների արդյունահանման և տարանցման հանգուցակետը: ԲԹԶ-ի կառուցումը նրան թույլ տվեց թուլացնել ՌԴ-ի տարածքով իր նավթն արտահանելու կախվածությունից: **Նա բարդ հարաբերություններ ունի նաև Իրանի հետ, որտեղ ադրբեջանական փոքրամասնությունն ավելի մեծաքանակ է, քան բուն Ադրբեջանում:** Իսկ դա Իրանը համարում լուրջ մտահոգության առարկա:

Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և էներգետիկ պաշարների Ադրբեջանն ունի ընտրության առավել լայն հնարավորություն, քանի իր հարևանները: Այդ իսկ պատճառով ԵՀԲ-ի շրջանակներում բարեփոխումների իրականացումը, որոշ վերլուծաբանների գնահատմամբ, չի հանդիսանում նրա առաջնահերթ խնդիրը:¹³⁵ Իհարկե, Ադրբեջանի նավթագազային պաշարները և տարանցման հնարավորությունները մեծ հետաքրքրություն են առաջացրել եվրոպական ընկերություններում: Դրանցից մի քանիսն արդեն ներկայացված են Ադրբեջանի էներգետիկ սեկտորում և նպատակ ունեն խորացնել ու ընդլայնել իրենց գործունեությունը ողջ կասպյան ավազանում ու Կենտրոնական Ասիայում: Ադրբեջանի նկատմամբ Արևմուտքի հետաքրքրությունն ու վերաբերմունքը պայմանավորված են, առաջին հերթին, տեղի էներգետիկ պաշարներով, ինչը փորձում է օգտագործել Ադրբեջանը և դրանից ստացվող եկամուտները ներդնել երկրի տնտեսական և ռազմական զարգացման հիմքում՝ նպատակ ունե-

¹³⁵ St'u Emerson M., Popescu N., European Neighbourhood Policy Two Years on: Time indeed for an "ENP plus", Journal of Foreign Policy of Moldova, issue: 03 / 2007, p. 24.

նալով փոփոխել իր դերը տարածաշրջանում, վերագինել բանակը և ռազմաքաղաքական առումով դառնալ տարածաշրջանի առաջատար երկիրը:

Հարավկովկասյան երկրների եվրոպական քաղաքականությունը մեծապես պայմանավորված է տարածաշրջանում ուժերի հավասարակշռության պահպանման պատկերացումներով: Բայց ներկայում Հարավային Կովկասի թույլ «եվրոպականացվածությունը» եվրոպական կառույցներին այդ երկրների անդամակցության հիմնախնդիրներից մեկն է: Այդ խնդիրն այժմ ինստիտուտացված է հիմնականում ԵԱՀԿ-ի և ԵԽ-ի կողմից, որոնց անդամակցությունը թեև նշանակալի է այս երկրների համար, բայց այդ կառույցներին չի տալիս Հարավային Կովկասում ուժերի հավասարակշռության վրա գործուն ազդեցության լծակներ:

Ակնհայտ է, որ ապագայում ԵՄ-ն էլ ավելի կախված կլինի հարևան տարածաշրջաններից, այդ թվում՝ Հարավային Կովկասից էներգամատակարարումից: Հարավային Կովկասում նավթի և բնական գազի հարուստ պաշարներ ունի միայն Ադրբեջանը, իսկ մյուս հարևանները զրկված են այդ հնարավորությունից ու կախված են նախևառաջ ռուսկան մատակարարումից: Ներկայիս և հեռանկարային հիմնական նավթա- և գազամուղների շինարարությունը շրջանցում է Հայստանը, ինչը խիստ դժվար կացության մեջ է դնում նրան՝ հաշվի առնելով նաև Ադրբեջանի և Թուրքիայի հետ նրա սահմանների փակ լինելը:

Ակնհայտ է նաև, որ ԵՄ-ին անդամակցության հարցում բալկանյան երկրներն առաջատար տեղ են զբաղեցնում ԵՄ-ի առաջնահերթությունների շարքում՝ ի համեմատ հարավկովկասյան երկրների, հետևաբար, մինչ այդ հարցի լուծումը հարավկովկասյան երկրների շանսերը չնչին են: Բացի դրանից, իր աշխարհաքաղաքական տեղադրության պատճառով Հարավային Կովկասը համարվում է կցորդ գոտի, և նրա ապագան մասամբ կախված է այն հանգամանքից, թե տեղի երկրները որքանով կկարողանան օգտագործել տարածաշրջանի այդ նշանակությունը:

Սակայն տարածաշրջանում «սառեցված հակամարտությունների» և միջպետական տարածայնությունների տևական առկայությունը փոքրացնում են տեղի երկրների կողմից կցորդային գործառույթների իրականացման, ինչպես նաև, առնվազն տեսանելի հեռանկարում, ԵՄ-ին նրանց անդամակցության հնարավորությունները: ԵՄ-ի ընդլայնման խնդիրները, բարդությունները ՌԴ-ի հետ հարաբերություններում, ներքին հակասությունները ԵՄ-ի շրջանակներում այս խնդրի հիմնական պատճառներն են:

Իսկ ՆԱՏՕ-ին անդամակցության միջոցով ժողովրդավարական բարեփոխումների խթանման ձևանմուշը հետխորհրդային երկրների դեպքում չի կարող արդյունավետ համարվել: Փոխարենը ԵՄ-ի շահերից է բխում տեղի երկրների հանդեպ երկարաժամկետ հարևանության ռազմավարության իրագործումը և նրանց ներառումը եվրոպական ազդեցության շառավղի մեջ:

Հարավկովկասյան երկրների հետ իր հարաբերություններում ԵՄ-ն ընդգծում է եվրոպական կառույցներում նրանց ակտիվ ներգրավման անհրաժեշտությունը, ինչը պահանջում է քաղաքացիական հասարակության բոլոր ոլորտներում եվրոպական արժեքների համակարգված ընդունում և զարգացում: Քաղաքական ազատությունների և ժողովրդավարական սկզբունքների զարգացման ոլորտում հատուկ ուշադրություն է դարձվում մարդու իրավունքների պաշտպանությանը, ընտրական համակարգի կատարելագործմանը, ազատ և անկախ ՋԼՄ-ների կայացմանը՝ որպես հարավկովկասյան երկրների եվրոպական ինտեգրման հնարավոր հեռանկարի նախապայման: Արդյունքում այդ կառույցներն ակնկալում են Հարավային Կովկասում ստեղծել կանխատեսելիության մթնոլորտ, երբ տարածաշրջանային զարգացումները կընթանան փոխապայմանավորման շրջանակներում: Իսկ հարավկովկասյան երկրների համար դա նշանակում է որոշակի երաշխիքներ եվրոպական ինտեգրմանը մասնակցելու և եվրոպական թատերաբեմում իրենց դիրքերն ամրապնդելու, եվրոպականացման ընձեռած հնարավորությունները երկրի սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական համակարգերի զարգացման գործում օգտագործելու համար:

3.3. Հարավային Կովկասը եվրոպական էներգետիկ և հաղորդակցային անվտանգության քաղաքականության համատեքստում

Այսօր ԵՄ-ն ներկրում է անհրաժեշտ էներգակիրների առնվազն 50%-ը, որից նավթի շուրջ 20%-ը ներկրվում է Նորվեգիայից, 30%-ը և գազի շուրջ 40%-ը՝ ՌԴ-ից:¹³⁶ Ընդհանուր առմամբ, նավթի ներկրումը կազմում է շուրջ 75%, որը պահանջարկի մեծացման հետ 2030թ-ին կհասնի 85%-

¹³⁶ Տե՛ս “Чейни предложил пригласить Грузию, Армению и Азербайджан на заседание ЕС по энергетической политике” - <http://analitika.at.ua/news/2008-09-08-2456>.

ի¹³⁷, իսկ «Կանաչ գործի» համաձայն, որն իրենից ներկայացնում է ԵՄ-ի էներգետիկ անվտանգության երկարաժամկետ ռազմավարությունը, ներկայիս միտումների պահպանման դեպքում 2030թ.-ից ԵՄ-ը ստիպված կլինի ներկրել էներգակիրների առնվազն 70%-ը:¹³⁸ Բացի դրանից, էներգետիկ անվտանգությունը ենթադրում է նաև ներկրումների հուսալիության ապահովում տրանսպորտային ցանցերի ամրապնդման միջոցով: Այս ամենն առաջին պլան են մղում էներգիայի ներկրման առկա ուղիների զարգացման և նորերը գտելու խնդիրը, և այս պայմաններում մեծանում է հետաքրքրությունը Կասպից ծովի էներգապաշարների նկատմամբ: Բացի այդ, Կասպյան տարածաշրջանը դիտարկվում է նաև որպես Եվրոպան, Ասիան և Պարսից ծովի ավազանը միմյանց հետ կապող խաչմերուկ:

Էներգետիկ անվտանգության համատեքստում առաջ են քաշվում երեք հիմնական փոխկապակցված խնդիրներ՝ առաջինը, Կասպյան ավազանի կարևորությունը Եվրոպական էներգետիկ անվտանգության շրջանակներում, երկրորդը, Եվրոպայի կարևորությունը կասպյան էներգետիկ անվտանգության շրջանակներում, երրորդը, էներգետիկ կապերի ֆիզիկական անվտանգության խնդիրը:¹³⁹ Հարցը նրանում է, որ Հարավային Կովկասի տարածքով կառուցվող նավթատարերը մեծ ազդեցություն կունենան տարածաշրջանի և Եվրոպայի անվտանգության համար:

2001թ. ԵՄ-ը ներկայացրեց *Հարավ-Արևելյան Եվրոպայում էներգետիկ և տրանսպորտային ցանցերի զարգացման ռազմավարությունը*:¹⁴⁰ Ըստ այդմ, որպես առաջնահերթություն դիտարկվում էր տարածաշրջանում առկա գազի և նավթի մատակարարման շուկաների անվտանգության ապահովումը և դրանց բազմազանեցումը՝ հաշվի առնելով նոր նախագծերի առավելությունները, դրանց իրականացման ճանապարհին հնարավոր խոչըդոտները, նախագծի արժեքը և ակնկալվող շահույթը:

¹³⁷ Տե՛ս The South Caucasus: a challenge for the EU, ISS N65, December 2003, p. 97.

¹³⁸ Տե՛ս Green Paper: Towards a European Strategy for the security of energy Supply, European Commission 2000.

¹³⁹ Տե՛ս Lynch D. (ed.) The South Caucasus: a challenge for the EU, Chaillot Papers n°65, Institute for Security Studies, European Union, Paris, December 2003, p. 96.

¹⁴⁰ Տե՛ս 2001 Transport and Energy infrastructure in SEE, EUROPEAN COMMISSION Brussels, October 15, 2001.

Սա հատկապես վերաբերում էր Կասպից ծովի երկրներից գազի ներկրման նախագծերին:

Սևծովյան-Կասպյան տարածաշրջանում ԵՄ-ի էներգետիկ քաղաքականության իրականացման ճանապարհին նշանակալի էր 2006թ. Աստանայում կայացած «*Քաբվի նախաձեռնության*» էներգետիկայի նախարարների համաժողովը ԵՄ-ի Հանձնաժողովի, Ադրբեջանի, Բելառուսի, Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Վրաստանի, Տաջիկստանի, Թուրքիայի, Ուկրաինայի, Ուզբեկստանի ու ՌԴ-ի (որպես դիտորդ) մասնակցությամբ: Համաժողովն ընդունեց «ճանապարհային քարտեզ»՝ մասնակիցների միջև էներգետիկ համագործակցության զարգացման, էներգետիկ ոլորտում առկա տարբերությունները հարթելու և հետագայում ընդհանուր էներգետիկ ռազմավարություն մշակելու համար:¹⁴¹

Որոշ հեղինակներ գտնում են, որ իրականում ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության շրջանակներում էներգետիկ բաղադրիչն ունի փոքր նշանակություն:¹⁴² Այդուհանդերձ, ԵՄ-ի արտաքին կապերի գծով նախկին հանձնակատար Կ. Պատտենի խոսքերով, ԵՄ-ի համար կարևորություն ունի Հարավային Կովկասի տնտեսական և քաղաքական զարգացումը, և, որպես դրա հետևանք, տարածաշրջանի կայունությունը: Ավելին, «Հարավային Կովկասը մուտք է ապահովում դեպի Կասպյան տարածաշրջանի էներգապաշաները, որը ԵՄ-ը դիտարկում է որպես իր էներգետիկ պահանջմունքների բազմազանեցման աղբյուներից մեկը»:¹⁴³ Սակայն, նրա կարծիքով, էներգետիկ պաշարները չեն հանգեցնում արտաքին դերակատարների հակադրությանը. ՌԴ-ը, ԱՄՆ-ը, Թուրքիան և Իրանն աստիճանաբար համաձայնության են գալիս այն հարցում, որ անհրաժեշտ է սկսել փոխշահավետ համագործակցություն և աջակցություն ցուցաբերել Հարավային Կովկասին: Այդ համատեքստում նա կարևոր է համարում, որպեսզի տեղի երկրներն իրենք չգայթակղվեն և միմյանց դեմ չուղղեն այդ ուժերին, այլ հայտարարեն տարածաշրջանային համագործակցությանն իրենց պատրաստակամության մասին:

¹⁴¹ Տե՛ս The EU and the countries of the Black Sea and Caspian Sea regions agree on a common energy strategy, Brussels, 30 November 2006.

¹⁴² Տե՛ս Tamm S., Weakness as an opportunity: EU policy in the South Caucasus, 2007, p. 4.

¹⁴³ Տե՛ս «Южный Кавказ расположен на пороге ЕС», Эксклюзивное интервью Комиссара Европейского Союза по внешним связям Криса Паттена армянскому информационному агентству Медиамакс, июль 2003 г.

ԵՄ-ի երկրները ներկայումս ակտիվորեն զբաղվում են Կասպյան ավազանից, դեպի Եվրոպա Իրանից, Հյուսիսային Աֆրիկայից և Մերձավոր Արևելքից էներգակիրներ տարանցելու խնդիրներով: Հայ մասնագետների կարծիքով, ռուսական «Հյուսիսային հոսանք» գազատարի կառուցումը ևս չի կարողանա բավարարել Եվրոպայի էներգետիկ պահանջումները: Այդ իսկ պատճառով, ԵՄ-ի համար մեծ կարևորություն է ստանում ազատ գազային պաշարների գտնելու հարցը, որոնք մեծամասամբ կենտրոնացած են Մերձավոր Արևելքում, մասնավորապես, Իրանում: Ուկրաինան, Վրաստանը և Իրան-Հայաստան գազատարն այս առումով հանդիսանում են դարպաս դեպի իրանական գազային պաշաները: Իրանն ինքը ձգտում է դառնալ իր սեփական գազի գլխավոր վաճառողը Եվրոպական շուկայում: Ըստ այդմ, Իրանի միջուկային խնդրի շուրջ համաձայնության ձեռքբերումը ԵՄ-ի և Իրանի միջև պայմաններ կստեղծի նաև էներգետիկ երկխոսության մեկնարկի համար, ինչից հետո իրանական գազը կարող է դառնալ Եվրոպական շուկայում ռուսական մատակարարումների հիմնական մրցակիցը:¹⁴⁴

Այս համատեքստում Բաքու-Թբիլիսի-Սուփսա, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղերը, որոնցով տարանցվում է նաև դազախական նավթի մի մասը, և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը կարող են լրացուցիչ ներդրում ունենալ Եվրոպայի էներգետիկ անվտանգության համակարգում: 2007թ. մայիսին Ադրբեջանի, Ուկրաինայի, Վրաստանի, Լիտվայի և Լեհաստանի ղեկավարների հանդիպմանը Ի. Ալիևը պատրաստակամություն հայտնեց միանալու Օդեսա-Բրոդի նավթատարին, ինչը թույլ կտա ադրբեջանական նավթը տեղափոխել Արևելյան Եվրոպա Ուկրաինայի և Լեհաստանի տարածքով: Նրանց հաշվարկներով, լեհ-ուկրաինական խողովակաշարը պետք է դառնա Թենգիզ-Նովոռոսսիյսկ, Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս ռուսական մայրուղիների այլընտրանքը:¹⁴⁵

Եվրոպական նավթային ընկերությունները շահագրգռված են իրականացնել խոշոր նավթային նախագծեր Կասպյան տարածաշրջանում, և այս առումով, Ադրբեջանը խաղում է երկակի դեր՝ և՛ որպես էներգետիկ պաշարների մատակարար, և՛ (առավելապես) որպես կենտրոնաասիա-

¹⁴⁴ Ст'ю Антагонизм Ирана и «Газпрома» на Южном Кавказе: интервью замдиректора фонда «Нораванк» Севака Саруханяна ИА REGNUM, <http://www.regnum.ru/english/625298.html>, 18.04.2006

¹⁴⁵ Ст'ю Grigorian S., The South Caucasus and the International Community. Armenia in the Contemporary World, Evropa (Европа), issue: 3 (24) / 2007, p. 103.

կան էներգետիկ պաշարների տարանցման երկիր: Այս ամենը, բնականաբար, անհրաժեշտ են դարձնում համակարգված, համաձայնեցված եվրոպական սևծովյան-կասպյան ռազմավարության և քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Իր էներգատրանսպորտային նպատակների համար ԵՄ-ը նախագծել է երկու խոշոր միջտարածաշրջանային ծագրեր՝ ՏՐԱՍԵԿԱ-ն՝ Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցքի զարգացման համար (տես Քարտեզ 1), և ԻՆՕԳԵՅԹ-ը՝ տարածաշրջանից ԵՄ ներկրվող էներգակիրների անվտանգության ապահովման համար: ՏՐԱՍԵԿԱ ծրագիրը հանդիսանում է պատմական «Մեծ մետաքսյա ճանապարհի» վերարտադրությունը ժամանակաշրջանի նոր իրողությունների պայամներում: Դրանով արևելաեվրոպական երկրները, Ուկրաինան և Մոլդովան կապվում են Հարավային Կովկասի հետ ոչ թե Ռուսաստանի տարածքով, այլ Սև ծովի միջոցով՝ Իլիչևսկ (Ուկրաինա) - Փոթի (Վրաստան) ուղիով, իսկ ծրագրի մեկ այլ մասնակից՝ Ադրբեջանը, Ղազախստանի և Թուրքմենստանի հետ իր կապն ապահովում է Կասպից ծովի միջոցով: Ծրագրը ներկայումս ընդգրկում է 13 երկրներ՝ Բուլղարիա, Ռումինիա, Ուկրաինա, Մոլդովա, Թուրքիա, Ադրբեջան, Հայաստան, Վրաստան, Ղազախստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Ղրղզստան և Աֆղանստան: Այն ձգվում է ավելի քան 10.000 կմ և կապում է Մայնի Ֆրանկֆուրտը Շանհայի հետ: Ծրագրի գործարկման արդյունքում բեռնափոխադրումների ծավալն արագորեն աճում է՝ 1993թ. 3 մլն.-ից հասնելով 2007թ. մինչև 27 մլն.: Դրա շրջանակներում 15 տարվա ընթացքում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվել են 157 մլն. ընդհանուր արժուողությամբ 15 ներդրումային և 61 տեխնիկական նախագծեր: Տեղափոխվող բեռների մեծ մասը նավթ և նավթամթերք է՝ շուրջ 70%:¹⁴⁶


Ծրագրի շրջանակներում առավել նշանակալի է 2,5 մլն. եվրո բյուջեով Միջազգային տերմինալային սարքավորումների նախագիծը Հայաստանի (1մլն. եվրո), Ղազախստանի (1մլն. եվրո) և Ղրղզստանի (0,5 մլն. եվրո) մասնակցությամբ, որի շրջանակներում 2000թ. հուլիսին վերաբացվեց «Կարմիր Բլուր» երկաթգծային բեռնահամալիրը: Մեկ այլ ներդրումային ծրագրի շրջանակներում կովկասյան երկաթգծային ցանցի զարգացման նպատակով նախատեսվում էր Փոթի-Թբիլիսի, Թբիլիսի-Երևան, Թբիլիսի-Բաքու ուղղություններով օպտիկամանրաթելային մալուխի անց-

¹⁴⁶ Стів Мороз А., Поезд TRACECA еще не ушел: посадка продолжается, журнал "RegionPlus", выпуск # 68.

կացում: Նշանակալի նախագծերից էր նաև Ուկրաինա-Վրաստան սևծովյան տրանսպորտային մայրուղին, որը միացնում է Ուկրաինան Կրաստանին: Ծրագրի մաս է կազմում նաև Կարս-Գյումրի ճանապարհը, որի փոխարեն թուրքական կողմը ձգտում է հաստատել Կարս-Ախլքալաք-Թբիլիսի ճանապարհը, ինչն արժանացավ ԵՄ-ի Հանձնաժողովի քննադատությանը:

Քարտեզ 1. ՏՐԱՍԵԿԱ - Եվրոպա - Կովկաս - Կովկաս - Ասիա տրամապոլստային միջանցքը

Եվրոպա - Կովկաս - Ասիա տրամապոլստային միջանցքը



Աղբյուրը: <http://www.traceca.org>

Հեռանկարում այն կարող է միանալ Անդրեվրոպական տրանսպորտային ուղուն: Նախատեսվում է նաև այդ ցանցին նոր երկրների միացումը: 2000թ. հուլիսին Բաքվում կայացած հանդիպման ժամանակ որոշվեց ՌԴ-ին և Իրանին ևս հրավիրել մասնակցելու տրանսպորտային այդ ցանցին: Իրանն արդեն միջկառավարական մակարդակում համաձայնության է եկել ծրագրին միանալու վերաբերյալ: Հաջողություն չեն ունենում Թուրքմենստանի միացմանն ուղղված ջանքերը:

Զնայած ԵՄ-ը շահագրգռված չէ ՌԴ-ի հետագա ապակայունացման ու Կասպյան տարածաշրջանից նրան դուրս մղելու մեջ, Եվրասիական այս տրանսպորտային միջանցքը փաստացի շրջանցում է ՌԴ-ին, նրան բաժանում Արևմտյան Եվրոպայից, Իրանից, կտրուկ սահմանափակում նրա ակտիվությունը Սև և Կասպից ծովերի ավազանում և հեռու պահում անդրեվրասիական հաղորդակցության ուղիներից: Դրանով նախկին խորհրդային երկրներն իբր պետք է հիանալի հնարավորություն ստանային տարածաշրջանում կայունության ձեռքբերման ու հակամարտությունների հաղթահարման համար: Փաստորեն, այս նախագիծը, առաջին հերթին, դիտարկվում էր որպես հակակշիռ արդեն 200 տարի ՌԴ-ից Ասիա Հյուսիս-Հարավ ուղղությամբ ձգվող ճանապարհին:¹⁴⁷ Սակայն, որոշ հեղինակների համոզմամբ, եթե անգլո-ատլանտյան բլոկի պետությունները ձգտում են հաղթահարել «սիբիրյան» երթուղու նշանակությունը և պահպանել իրենց հսկողությունը կանտրաֆույն համաշխարհային հաղորդակցությունների նկատմամբ, ապա Եվրոատլանտիզմի և մայրցամաքային Եվրոպայի երկրները ձգտում են ստեղծել նոր, ավանդական անգլիական ծովային ուղղուց չկախված ճանապարհի դեպի Կենտրոնական, Հարավային և Արևելյան Ասիա:¹⁴⁸ Այս համատեքստում Հարավային Կովկասը երկու բլոկների կողմից դիտարկվում է որպես միասնական հաղորդակցական միջանցք, որտեղ բացառություններ չպետք է լինեն, այլապես դրանք կասկածի տակ կդնեն այդ նախագծերի անվտանգությունը:

ԵՄ-ի մյուս՝ «ԻՆՕՊԵՅԹ» ծրագրի ուշադրությունը կենտրոնացված է Կենտրոնական Ասիայի, Կովկասի և Արևելյան Եվրոպայի էներգետիկ շուկաների զարգացման խնդրին: Այդ համատեքստում որոշվում է ՌԴ-ի և

¹⁴⁷ St'u Bimboes D., Der Kampf um das Öl am Kaspischen Meer: Daten, Fakten und Trends bis Anfang September 2001- <http://www.uni-kassel.de/fb10/frieden/regionen/Kaukasus/bimboes.html>.

¹⁴⁸ St'u Мурадян И., Геоэкономические факторы развития политических процессов в Кавказско-Каспийском регионе, Ер: Антарес, 2001, стр. 146-154


Ուկրաինայի տարածքներով Ղազախստանից դեպի Կենտրոնական Եվրոպա, ինչպես նաև Ուկրաինայի ու Բելոռուսի միջև սահմանամերձ ենթակառուցվածքներով Բալթյան երկրներ, Լեհաստան, Սլովակիա և Հունգարիա առկա տրանսպորտային համակարգերի վերականգնման ու օպտիմալացման հարցը: Նավթի բնագավառում խնդիրը վերաբերում է Օդեսա-Բրոդի նավթատարը մինչև Գդանսկ հասցնելուն և բալկանյան նավթատրանսպորտային համակարգերի միացմանը (տես նաև Քարտեզ 2, 3):

Քանզի ԵՄ-ի քաղաքականության առաջնայնություններից մեկը Սև և Կասպից ծովերի, Կենտրոնական Ասիայի ու Հարավային Կովկասի միջև տարանցման ուղիների զարգացումն է, ապա հարավկովկասյան երկրների ակտիվ երկխոսությունը հարևան երկրների հետ կարելի է դիտարկել որպես դրանց վերակառուցման արագացման գլխավոր միջոցներից մեկը: Այդ քաղաքականության հիմնական նպատակներն են տնտեսական բարեփոխումների հետ սերտ կապակցության մեջ գտնվող կայունության, ժողովրդավարության ու մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանն աջակցելը, Եվրոպական նավթային ընկերությունների շահերը պաշտպանելը: Դա, իր հերթին, կարող է էականորեն նպաստել Հարավային Կովկասում ԵՄ-ի քաղաքական ակտիվացմանը, քանզի այդ ընկերություններն ստիպված են ստանալ իրենց կառավարությունների աջակցությունը տարածաշրջանում այլերկրյա ընկերությունների հետ մրցակցության գործում: Այսինքն, հարավկովկասյան երկրների նկատմամբ ԵՄ-ի արտաքին քաղաքական դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Եվրոպայի և Ասիայի միջև կապող օդակի դեր խաղացող Հարավային Կովկասի ռազմավարական նշանակությունից առավելագույն օգուտ քաղելու համար անհրաժեշտ է տարածաշրջանում անվտանգության և կայունության հաստատում, տեղի ածխաջրածնային պաշարների նկատմամբ մուտքի ապահովում:¹⁴⁹

Էներգետիկ հարցի ամենախրթին կողմը թերևս գլխավոր խողովակագծի համար ճիշտ ուղի ընտրելն է: Ներկայումս կասպյանկովկասյան նավթագազային խողովակաշարերը և դրանց նախագծերն անցնում են հետևյալ ուղիներով.

¹⁴⁹ Երբեմն հարավկովկասյան երկրների անդամակցությունը ԵՄ-ին գնահատվում է հենց որպես Եվրոպայի հարավ-արևելյան սահմանների անվտանգության նկատմամբ անմիջական հսկողություն հաստատելու միջոց: Տե՛ս Агабабян А., Открыта ли для Армении дорога в Европу? - www.mpa.ru:8081/analytics/issue.php?id=240:


- Ղազախստան-Թուրքմենիա-Իրան, Թենգիզ-Նովորոսիյսկ, Բաքու-Գրոզնի-Նովորոսիյսկ, Բաքու-Սուպսա, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթանւղերը,
- Անդրկասպյան, Թուրքմենիա-Իրան-Թուրքիա, Ջուգրա-Սամսուն, Բաքու-Թբիլիսի-Էրզրում և «Նարսիկ» գազատարերը:



Աղբյուրը: <http://www.inogate.org>

Քարտեզ 2. ԻՍՕԳԵՅՆԹ – Նավթի տարանցման ուղիների Եվրոպա

Քարտեզ 3. ԻՆՕԳԵՅՅԹ – գազի տարածման ուղիները Եվրոպայա



Աղբյուր: <http://www.inogate.org>

Ինչպես ՏՐԱՍԵԿԱ ծրագրի դեպքում Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի կառուցումը, այնպես էլ ԻՆՕԳԵՅՅԹ ծրագրի դեպքում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղն ու Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարն առաջ բերեցին ԵՄ-ի պաշտոնական շրջանակների դժգոհությունն այն հիմնավորմամբ, որ այդ ծրագրերին Հայաստանի չմասնակցությունը Հարավային Կովկասում առաջացնում է նոր բաժանարար գծեր, ինչն էլ վտանգում է այդ ծրագրերի անվտանգությունը: Մինչդեռ ԵՄ-ի գլխավոր խնդիրն է՝ ապահովել անվտանգությունը և բաժանարար գծերի բացակայությունն իր հարևանությամբ:

Այս ասպեկտում Հայաստանի դերը հանգեցվում է ոչ այնքան այդ նախագծերի անվտանգության ապահովմանը ռազմաքաղաքական

հակամարտությունների հաղթահարման միջոցով, այլ, ավելի շուտ, այդ աշխարհառազմավարության մեջ որոշակի զանազանություն մտցնելուն: Խնդիրը նրանում է, որ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Սևծովյան-Կասպյան տարածաշրջանում գնալով ավելի ինքնուրույնություն է ձեռք բերում և վերոհիշյալ նախագծերի իրականացումը նպաստում է թուրքական մտադրությունների իրագործմանը: Իսկ Ադրբեջանի հանգուցային մասնակցությունը դրանց, Թուրքիային տալիս է թելադրող դերակատարում: Այդ պատճառով Արևմուտքի համար թուրքական ակտիվությունը հսկելու նպատակով մեծանում է Հայաստանի և Իրանի նշանակությունը:


2009թ. տարեսկզբին ռուս-ուկրաինական գազային հակամարտության համատեքստում մեծ հնչեղություն ստացավ նախագծվող «Նաբուկո» գազատարը, որի մասնակից ընկերություններն են ավստրիական OMV, հունգարական MOL, բուլղարական Bulgargaz, ռումինական Transgaz, գերմանական RWE և թուրքական Botas ընկերությունները: 7,9 մլրդ. եվրո արժողությամբ այդ նախագծի կառուցումը նախատեսվում է սկսել 2011թ., իսկ շահագործումը՝ 2014թ.: Նախագիծը նախատեսում է Կասպից ծովի ավազանից բնական գազը տեղափոխել Եվրոպա Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Ռումինիայի և Ավստրիայի տարածքներով: Այն կծծվի շուրջ 3300 կմ և կդառնա արդեն գոյություն ունեցող Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի շարունակությունը: 31մլրդ. խմ տարեկան թողունակությամբ այդ գազատարի առաջին մատակարարումները մինչև 12 մլրդ. խմ ծավալով պետք է ապահովվեն ադրբեջանական պաշարների հաշվին (տես Քարտեզ 4):

Սակայն արդեն այսօր ծրագիրը բախվում է մի շարք խոչընդոտների: Կարևորագույն հարցերը կապված են գազի անհրաժեշտ չափաքանակ ապահովելու և ծրագրի ֆինանսավորման հետ: Առաջին հարցի հետ կապված, 2009թ. հունվարին Բուդապեշտում «Նաբուկո» ծրագրի գազաթնաժողովի ժամանակ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը հայտարարեց, որ իր երկիրը կստեղծի բոլոր անհրաժեշտ պայմանները համաշխարհային շուկայական գներով գազի տեղափոխումն ապահովելու համար:¹⁵⁰ Բայց արդեն մարտի վերջին Ադրբեջանը ՌԴ-ի

¹⁵⁰ Стів Министр енергетики Турції: ,Турция настроена на реализацию проекта Nabucco, 18 Марта 2009 -<http://www.day.az/news/world/150766.html>.

հետ փոխընթացման հուշագիր ստորագրեց շուկայական գներով գազի երկարաժամկետ մատակարարման վերաբերյալ: Ռուսական «Գազպրոմ» ընկերության պաշտոնական կայքում տեղադրված հաղորդագրության համաձայն, երկու կողմերը պայմանավորվել են բանակցություններ սկսել, որոնց վերջնական նպատակը 2010թ.-ից ադրբեջանական գազի առաքումն է ՌԴ: Կողմերը չեն հստակեցնում, թե գազի ինչ ծավալների մասին է խոսքը, բայց տեսակետ կա, որ Ադրբեջանը պատրաստվում է ընդունել 2008թ. ռուսական կողմից արված առաջարկը՝ արդյունահանված գազի ողջ ծավալը շուկայական գներով վաճառել «Գազպրոմ» ընկերությանը:¹⁵¹

Քարտեզ 4. «Նաբուկո» գազատարի սնուցման աղբյուրները¹⁵²



ՌԴ-ից էներգետիկ կախվածությունը թուլացնելու ձգտող ԵՄ-ը միայն մեծ դժվարությամբ կարողացավ ընդհանուր մոտեցում ձեռք բերել իր անդամների միջև այդ նախագծի ֆինանսավորման հարցում: Գերմանիայի դաշնային կանցլեր Ա. Մերկելն, օրինակ, պատճառաբանելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, աննպատակահարմար համարեց ֆինանսավորման ցուցակում ներառել այն նախագծերը, որոնք նախատեսվում է իրականացնել 2010թ.-ից հետո: Այդուհանդերձ, ինչպես հավաստիացնում է «Նաբուկո» նախագծի ներկայացուցիչ Ք. Դոլեգալը,

¹⁵¹ Տե՛ս Ադրբեջանը գազամատակարարման շուրջ բանակցում է ռուսական Գազպրոմի հետ - <http://www.armtown.com/news/am/rfe/20090401/200904011/>.

¹⁵² Տե՛ս Markets for Nabucco - <http://www.nabucco-pipeline.com/company/markets-sources-for-nabucco/markets-sources-for-nabucco.html>.

այդ հուշագիրը չի վտանգում իրենց նախագիծը, և Ադրբեջանը մնում է այդ գազատարի հիմնական մատակարարը:¹⁵³ Բացի դա, էներգետիկայի հարցերով ԵՄ-ի հանձնակատար Ա. Պիեբալզսի խոսքերով, «Նաբուկո» գազատարը մնում է ԵՄ-ի առաջատար նախագծերի շարքում, և ԵՆԲ-ը պարտրաստ է ֆինանսական աջակցություն ցուցաբերել դրա իրագործմանը 200 մլն. եվրոյի չափով:¹⁵⁴

Նոր հարցեր առաջ բերեց նաև Վրաստանի միանալը «Նաբուկո» գազատարի մրցակիցը համարվող «Սպիտակ հոսանք» նախագծին (թողունակությունը՝ տարեկան 22 մլրդ. խմ), որը ենթադրում է ադրբեջանական, կենտրոնաասիական և, հնարավոր է, իրանական գազի տարանցում Վրաստանի տարածքով, Սև ծովով դեպի Ուկրաինա և ԵՄ-ի երկրներ: Սակայն «Նաբուկո» նախագծի գլխավոր խնդիրն այն չէ, որ ՌԴ-ն ապահովում է եվրոպական շուկայի պահանջունքները, այլ նրանում, որ առայժմ չկան տրամադրված պաշարներ գազատարը լիարժեք գործարկելու համար: Միայն վերջերս ԵՄ-ը և Թուրքմենստանը ձեռք բերեցին առևտրային պայմանավորվածություն, որը եվրոպական ընկերություններին թույլ է տալիս մուտք գործել այդ երկրի էներգետիկ սեկտոր: Ենթադրվում է, Թուրքմենստանին ի վերջո համոզել միանալու «Նաբուկո» ծրագրին և այդկերպ բարձրացնել ծրագրի շահութաբերությունը: 2009թ. ապրիլի վերջին գերմանական RWE ընկերությունը Թուրքմենիայի կառավարության հետ ևս կնքեց երկարաժամկետ համագործակցության պայմանագիր այդ երկրի ածխաջրածնային պաշարների արդյունահանման վերաբերյալ:¹⁵⁵ Հատկանշական է, որ գերմանական RWE և ավստրիական OMF ընկերություններն արդեն հիմնել են Կասպիական էներգետիկ ընկերություն, որը պետք է զբաղվի կասպյան էներգապաշարները Եվրոպա տարանցելու ուսումնասիրություններով: Թուրքմենստանի կասպյան գազային պաշարները կազմում են 6.1 տրլն. խմ, իսկ նավթայինը՝ 12,1 մլրդ. տոննա: Խնդիրը նրանում է, որ ներկայումս Թուրքմենստանը տարեկան արդյունահանում է 75 մլրդ. խմ գազ և մինչև 50 մլրդ. խմ վաճառում ռուսական «Գազպրոմ» ընկերությանը: Բացի դրանից, ռուսական կողմն ա-

¹⁵³ Տե՛ս Проект "Набукко": время играет не в пользу Евросоюза, 10.04.09 - <http://capital-en.trend.az/oil/oilgas/1453811.html>.

¹⁵⁴ Տե՛ս Nabucco remains priority project: European energy commissioner, 30.03.09 - <http://capital-en.trend.az/oil/oilgas/1447240.html>.

¹⁵⁵ Տե՛ս ЕС договорился с Туркменией о поставках газа в обход России <http://www.izvestia.ru/news/news202713>

ռաջարկում է Թուրքմենստանին միանալ իր «Հյուսիսային» և «Հարավային հոսանքներին»՝ ի հակակշիռ «Նաբուկո» նախագծի:¹⁵⁶

Խնդիրներ կան նաև Ուզբեկստանի հետ, որը ևս սերտորեն համագործակցում է ՌԴ-ի հատ գազի մատակարարման ոլորտում: Ուզբեկստանի նախագահ Ի. Քարիմովը խոստացել է, որ 2009թ. ՌԴ մատակարարվող գազի ծավալը կհասցնի մինչև 30 մլրդ. խմ և համաձայնեց ողջ գազը վաճառել միայն նրան: Ռուս փորձագետները համարում են, որ դա բավարար կլինի «Հարավային հոսանք» գազատարի գործարկման համար:¹⁵⁷ Այս հանգամանքն արդեն իսկ կասկածի տակ դնում առաջիկայում Ուզբեկստանի մասնակցությունը «Նաբուկո» գազատարի նախագծին:

Այս համատեքստում, որոշ հեղինակների համոզմամբ, սևծովյան-կասպյան տարանցիկ էներգետիկ միջանցքի զարգացման, ինչպես նաև Օդեսա-Բրոդի նավթամուղի համար որոշիչ նշանակություն է ստանում Ղազախստանի հետ սերտ համագործակցությունը:¹⁵⁸ Սակայն, թեև Ղազախստանի նավթը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ԵՄ-ի համար, այն առաջնային չի համարվում:¹⁵⁹ Ներկայումս ղազախական նավթի մեծ մասը ՌԴ-ի տարածքով տեղափոխվում է արևմուտք, իսկ մի մասն էլ լցանավերի միջոցով Կասպից ծովով մատակարարվում է Բաքու-Ջեյհան խողովակաշարին:

Ակնհայտ է, որ վերը նշված կենտրոնաասիական երկրներին այլընտրանք կարող է լինել Իրանը, որի մասնակցությանը «Նաբուկո» նախագծին դեմ են ԱՄՆ-ը: Փոխարենն ԱՄՆ-ի վարչակազմն աջակցում է Իրաքից Եվրոպա գազի տեղափոխմանը: Սա ստիպում է ԵՄ-ին հաշվի առնել նաև ԱՄՆ-ի դիրքորոշումը նախագծի լիարժեք գործարկման հարցում: Այդուհանդերձ գազասպառման աճը կստիպի Եվրոպական երկրներին փոխել վերաբերմունքն Իրանի նկատմամբ: Այսօր արդեն իրանական գազի տեղափոխման համար առաջարկվում են մի քանի տարբերակներ: Իրանը ևս ցանկանում է դառնալ Եվրոպայի էներգետիկ շուկայի կարևորագույն դերակատարներից մեկը՝ արտահանելով իր գազային պաշարներն Իրան-Կովկաս-ՌԴ-Եվրոպա կամ Իրան-Հայաստան-Վրաստան-Սև ծով-

¹⁵⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁵⁷ Տե՛ս Один против всех и каждый за себя - <http://www.regionplus.az/ru/articles/view/124>.

¹⁵⁸ Տե՛ս Melvin N., Engaging Central Asia: The European Union's New Strategy in the Heart of Eurasia, CEPS Paperback Series, issue: 4 / 2008, p. 55

¹⁵⁹ Տե՛ս Matveeva A., EU stakes in Central Asia, EU Institute for Security Studies, Chaillot Paper n°91, 2006, p. 72

Ուկրաինա-Եվրոպա ուղղություններով: Հատկանշական է, որ այս դեպքում Իրան-Հայաստան գազատարի կառուցումից հետո Հայաստանը ևս կդառնա տարանցիկ երկիր:

Դեռևս 2009թ. տարեսկզբին Բրյուսելում Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը կասկած հայտնեց «Նաբուկո» նախագծի տնտեսական նպատակահարմարության վերաբերյալ, և հայտարարեց, որ իր երկիրը կվերանայի վերաբերմունքը նախագծի նկատմամբ, քանի դեռ որևէ առաջընթաց չկա ԵՄ-ին անդամակցության բանակցություններում: Ի պատասխան, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժ. Մանուել Բարոզոն կոչ արեց չփոխկապակցել այդ երկու հարցերը: Նա, միաժամանակ, հավելեց, որ եթե Թուրքիան օգնի Եվրոպային թուլացնել ռուսական մատակարարումներից կախվածությունը, դա կարող է դրական ազդեցություն թողնել Եվրոպական հասարակական կարծիքի վրա ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում: Նա հայտարարեց նաև, որ «Նաբուկո» գազատարի անհրաժեշտությունը պայմանավորված է այն օբյեկտիվ փաստով, որ ՌԴ-ից եկող և Ուկրաինայի տարածքով անցնող գազը երաշխավորված չէ:¹⁶⁰ Ի վերջո, կողմերին հաջողվեց համաձայնության գալ այն հարցում, որ գազատարն իսկապես անհրաժեշտ է: Թուրքիայի վարչապետը վստահեցրեց, որ Թուրքիան պատրաստ է հանգուցային դերակատարություն ստանձնել Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման գործում և մտադիր չէ գազի տարանցումն օգտագործել որպես քաղաքական զենք:¹⁶¹

«Նաբուկո» գազատարը պետք է հանդիսանա նաև ԵՄ-ի «Հարավային միջանցք –մետաքսի նոր ճանապարհ» էներգետիկ նախագծի հենասյունը, որի մեկնարկը պաշտոնապես տրվեց 2009թ. մայիսի 8-ին: ԵՄ-ը, Ադրբեջանը, Թուրքիան, Վրաստանը և Եգիպտոսն ստորագրեցին ՌԴ-ն շրջանցող այդ նախագծի համար անհրաժեշտ խողովակաշարերի կառուցման մասին քաղաքական հռչակագիր: Հանդիպման արդյունքում ձեռք բերված հռչակագիրը նախատեսում էր մինչև 2009թ. հունիսի վերջը կնքել «Նաբուկո» գազատարի և էներգակիրների տարանցման Անդրկասպյան մայրուղու (մասնավորապես, 11 մլրդ. խմ տարեկան թողունա-

¹⁶⁰ Տե՛ս "Газовая опера" от ЕС и Турции: газопровод "Набукко" построят в обход Украины и России? - <http://www.qwas.ru/ukraine/vitrenko/Gazovaja-opera-ot-ES-i-Turcii-gazoprovod-Nabukko-postrojat-v-obhod-Ukrainy-i-Rossii/>.

¹⁶¹ Տե՛ս Jozwiak R., Nabucco discussed by EU, Turkey - <http://www.europeanvoice.com/article/2009/01/nabucco-discussed-by-eu,-turkey/63670.aspx>

կությամբ Թուրքիան Հունաստանի և Իտալիայի հետ կապող ITGI գազատարի կառուցման ավարտը) շուրջ համաձայնագրեր վերը նշված երկրների, Ղազախստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Իրաքի մասնակցությամբ: Այդ մայրուղու վերաբերյալ փաստաթղթում նշվում է, որ գազաթնաժողովի մասնակիցները մտադիր են «նպաստել Կասպյան ծովի երկու ափերի միջև ուղիղ կապի՝ որպես էներգետիկ համագործակցության կարևորագույն տարրերից մեկի հաստատմանը»:¹⁶² Այդ նախագծերը ԵՄ-ի համար ունեն առաջնահերթ նշանակություն, այսինքն, կարող են 30%-ով ֆինասավորվել ԵՄ-ի բյուջեից: Ինչպես հայտարարեց Եվրոպական հանձնաժողովի նախագահը, հռչակագրի շնորհիվ համաձայնություն է ձեռք բերվել առ այն, որ ա. արդյունահանող երկրները համաձայնել են կոնկրետ չափաբաժնով և գրաֆիկով հումք տրամադրել Միջանցքին և ԵՄ-ին, բ. կարանցիկ երկրները երաշխավորում են հստակ և թափանցիկ պայմաններ հումքի տարանցման ռեժիմի համար, և գ. սպառող-երկրները համաձայնության են եկել ընդհանուր պահանջարկի շուրջ, որի համատեքստում ուշադրություն պետք է դարձվի Կասպյան զարգացման կորպորացիայի նախաձեռնության տեխնիկա-տնտեսական հիմնավորմանը:¹⁶³ Հայտնի է դարձել նաև, որ մայիսի 17-ին ավստրիական OMV և հունգարական MOL ընկերությունները գնել են Pearl Petroleum Company բաժնետոմսերի 10%-ը, իսկ այդ ընկերությանն են պատկանում 8 մլրդ. դոլար արժողությամբ իրաքյան 2 արդյունավայրեր՝ Khor Mor հանքավայրը, որտեղից այժմ արդյունահանվում է 2.5 մլն խմ, և Chemchemal հանքավայրը, որի հետախուզումն սկսվելու է այս տարի: Նախատեսվում է, որ 2015թ. այդ հանքավայրերում կարդյունահանվի մինչև 85 մլն. խմ/օրը գազ:¹⁶⁴

Այդուհանդերձ, իրենց համաձայնությունն այդ քաղաքական հռչակագրին արդեն չեն տվել երեք առանցքային կասպյան հավանական էներգամատակարարները՝ Ուզբեկստանը, Ղազախստանը և Թուրքմենստանը:¹⁶⁵ Ավելին, դեռևս չլուծված են մնում երկու հանգուցային հարցեր՝

¹⁶² Prague Summit, Southern Corridor, May 8, 2009

¹⁶³ Statement of President Barroso following the Southern Corridor Summit,

Prague, 8 May 2009

¹⁶⁴ "Газпром" полностью согласовал строительство "Южного потока" – <http://www.lenta.ru>, 19.05.2009

¹⁶⁵ No Uzbek, Kazakh, Turkmen gas for EU, <http://www.euronews.net/2009/05/08/no-uzbek-kazakh-turkmen-gas-for-eu/>

հումքային բազան և այն հանգամանքը, որ գազատարն անցնում է անկայուն երկրների տարածքով: Ինչպես արդեն նշվեց, առանց Իրանի մասնակցության այս նախագծի իրականացումը շատ դժվար կլինի, սակայն Իրանն ինքը, համապատասխան ֆինասական և տեխնոլոգիական միջոցների բացակայության պատճառով, առայժմ ստիպված է ինքը գազ ներկրել: Վերջին դեպքում, «Նաբուկո» գազատարի և Իրանի շահերը համընկնում են, սակայն Իրանն իր գազի դիմաց կարող է պահանջել հսկայական ֆինասական ներդրումներ, ինչը, ֆինասական ճգնաժամի պայմաններում, լրացուցիչ դժվարություններ կստեղծի ԵՄ-ի համար:

Մյուս առանցքային խնդիրը կապված է ռուսական «Հարավային հոսանք» գազատարի ծրագրի հետ, որը համարվում է «Նաբուկո» գազատարի մրցակիցն ու առավել իրատեսական այլընտրանքը: Այս նախագծով գազը խողովակաշարով, շրջանցելով Ուկրաինան, ՌԴ-ի սևծովյան ափերից ձգվելու է դեպի Բուլղարիա և Ռումինիա, ապա հասնելու է մինչև Ավստրիայի և Իտալիայի հարավ (տես նաև Քարտեզ 5):¹⁶⁶ Հատկանշական է, որ սկզբնապես նախատեսվում էր, որ գազատարի թողունակությունը տարեկան կկազմի 31 մլրդ. խմ, բայց արդեն մայիսի կեսերին ռուսական «Գազպրոմ» և իտալական Eni ընկերությունների միջև ձեռք բերված համաձայնությամբ նախատեսվող թողունակությունը կրկնապատկվել է՝ տարեկան 63 մլրդ. խմ:¹⁶⁷ Դրանից բացի, «Գազպրոմ» ընկերությունն արդեն պայմանագրեր է կնքել նաև Բուլղարական էներգետիկ հովիհնգի, հունական DESFA և սերբական Srbijagas ընկերությունների հետ այդ գազատարի կառուցման համար: Գազատարը գնահատվում է 25 մլրդ. եվրո:

ՌԴ-ն ավելի կոշտ դիրքորոշում ունի այս նախագծի նկատմամբ, քանզի դրա հիմնական նպատակը ռուսական գազից կախվածությունը թուլացնելն ու ռուսական էներգակիրներին այլընտրանք ստեղծելն է: Այսօր ՌԴ-ը ձգտում է Կենտրոնական Ասիայի էներգապաշարների մեծ մասը տարանցել իր տարածքով: Դեռևս 2007թ. մայիսին նախագահ Վ. Պուտինը համոզում էր Ղազախստանին և Թուրքմենստանին կառուցել գազային խողովակ, որը գազն այդ երկրների տարածքից Կասպից ծովի ա-

¹⁶⁶ «Газпром» подписал ряд новых соглашений по «Южному потоку», ИА «Финмаркет» 15.05.2009

¹⁶⁷ А.Миллер: Мощность «Южного потока» была удвоена по просьбе Eni, РИА «Новости» 15.05.2009

վազանով կտարանցի ՌԴ, այլ ոչ թե Կասպից ծովով Հարավային Կովկաս, ինչն արժանացել էր ԵՄ-ի և ԱՄՆ-ի հավանությանը:¹⁶⁸

Քարտեզ 5



Աղբյուրը. <http://south-stream.info>

Այսպիսով, ակնհայտ է, որ Սևծովյան-Կասպյան տարածաշրջանը հակամարտածին, բայց և ռազմավարական մեծ կարևորություն ունեցող տարածություն է, եվրոպական ապրանքների սպառման նշանակալի շուկա, Եվրոպան Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի հետ կապող առևտրային ուղի, որի բացառիկ նշանակությունը պայմանավորված է նաև կասպյան ածխաջրածնային պաշարների առկայությամբ: Այս համատեքստում հատուկ նշանակություն է ստանում Հարավային Կովկասը՝ որպես տրանսպորտային և էներգետիկ ուղիների խաչմերուկ, որտեղ կայունության ապահովումն առանցքային նշանակություն կունենա կասպյան էներգակիրների տարանցման անվտանգության ապահովման համար: Հարավային Կովկասը ԵՄ-ին մերձեցնելու քայլերը կնպաստեն նաև Կենտրոնական Ասիայի և Եվրոպայի մերձեցմանը, ինչը առավել նկատելի կդարձնի ԵՄ-ի ներկայությունը տարածաշրջանում: Դա էլ, իր հերթին, ԵՄ-ին կստիպի ակտիվորեն ներգրավվել տարածաշրջանի հակամարտությունների և միջպետական հակասությունների կարգավորման գործին:

¹⁶⁸ St' u Melvin N., Engaging Central Asia: The European Union's New Strategy in the Heart of Eurasia, CEPS Paperback Series, issue: 4 / 2008, p. 54.

3.4. Եվրոպական Միությունը և հարավկովկասյան հակամարտությունների եվրոպականացման հիմնախնդիրը

*“World peace cannot be safeguarded
without the making of creative efforts
proportionate to the dangers which
threaten it”*

The Schuman Declaration¹⁶⁹

Հարավային Կովկասի վերածվելը տարածաշրջանային անկայունությունների օջախի ազդում է տարածաշրջանի երկրների, դրանց ու եվրոպական կառույցների փոխհարաբերությունների ձևաչափի և բովանդակության վրա: Լարվածության ներուժը պահպանվում է նաև այդ երկրների, դրանց և հարևանների հարաբերություններում: Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ չունի Ադրբեյջանի և Թուրքիայի հետ ու նրանց կողմից ենթարկված է տնտեսական շրջափակման, որոշակի լարվածություն կա հայ-վրացական հարաբերություններում, խիստ լարված են ռուս-վրացական հարաբերությունները, անկայուն են նաև ադրբեյջանա-իրանական հարաբերությունները, որոնցում երբեմն նկատվում է արտաքին ուժերի միջամտությունը: Այս իրավիճակում ԵՄ-ը վարում է բավական զգուշավոր քաղաքականություն և, ծառնպահ մնալով անկայուն իրավիճակների կառավարման իր ունակությունների կիրառումից, բավական արդյունավետ, բայց առայժմ ոչ ամբողջությամբ օգտագործում է հարավկովկասյան երկրների եվրոպականացման ու ինտեգրման ակնկալիքները:

Ներկայումս եվրոպական քաղաքական շրջանակներում Հարավային Կովկասն ընկալվում է որպես դժվար լուծելի հակամարտություններով լի տարածաշրջան: Դեռևս 2001թ. արտաքին հարաբերությունների գծով ԵՄ-ի նախկին հանձնակատար Կ. Պատտենը հանդես եկավ հայտարարությամբ, թե Կալինինգրադից մինչև Կովկաս, Կենտրոնական Ասիա և Բալկաններ Եվրոպան շրջապատված է վտանգներով և անկայունություններով, որոնց չեզոքացումն էլ հենց պետք է հանդիսնա ԵՄ-ի առաջնահերթ խնդիրը՝ նպատակ ունենալով ԵՄ-ի անմիջական հարևանությամբ

¹⁶⁹ Sten Nelsen F., Alexander C-G. Stubb. Eds. The European Union: Readings of the Theory and Practice European Integration. Boulder, 1998, pp. 13.

յամբ ապահովել անվտանգության և կայունության միջավայր:¹⁷⁰ Թեև թե՛ ԵՄ-ի, թե՛ առանձին անդամ-երկրների ջանքերն այս ուղղությամբ էական առաջընթաց չեն արձանագրել, ԵՄ-ը շարունակում է հատուկ վերաբերմունք ցուցաբերել դրանց կարգավորման նկատմամբ:

Իր հարցազրույցներից մեկում ԵՄ-ի ԸԱԱՔ հարցերով Բարձրագույն ներկայացուցիչ Խ. Սոլանան նշել է, որ տարածաշրջանն առաջնային նշանակություն ունի ԵՄ-ի համար և վերջինս ամեն հնարավորը կանի տարածաշրջանում վստահության և համագործակցության միջավայրի ձևավորման համար: Որպես առանցքային հիմնախնդիր՝ նա մատնանշեց «սառեցված հակամարտությունների» առկայությունը և դրանց ապակայունացնող ազդեցությունը տարածաշրջանի վրա: Այդուհանդերձ, ըստ դիվանագետի, կարգավորման համաձայնության ձեռքբերման հիմնական պատասխանատվությունը կրում են հենց հակամարտող կողմերը: Նրա համոզմամբ, տարածաշրջանի անվտանգությունը, կայունությունը և բարեկեցությունը կախված են ինչպես հարավկովկասյան երկրների, այնպես էլ արտաքին «դերակատարների» գործողություններից:¹⁷¹ Միաժամանակ, արտաքին բացասական ազդեցության չեզոքացման լավագույն միջոցը տեղի երկրների միջև առկա խնդիրների լուծումն է, որոնք էլ հենց հիմք են հանդիսանում արտաքին միջամտության համար:

Խ. Սոլանայի կարծիքով, տարածաշրջանային հակամարտությունները թույլ չեն տալիս, որպեսզի զարգանա ժողովրդավարությունը, կանխում են տարածաշրջանային համագործակցությունը: Դրանց կարգավորումը կընդլայնի ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակները:¹⁷² Դրանում համոզված է նաև Հարավային Կովկասում ԵՄՀՆ Փ. Սեմնեբին՝ ավելացնելով, որ ԵՄ-ի համար անընդունելի են ԼՂ-ի հարցի ռազմական լուծման հնարավորության մասին Ադրբեջանում հնչող հայտարարութ-

¹⁷⁰ St'eu Chris Patten, 'EU Strategy in the Balkans', speech to the International Crisis Group, Brussels, 10 July 2001.

¹⁷¹ «Регион Южного Кавказа является приоритетным для Европейского Союза», Эксклюзивное интервью Генерального Секретаря Совета Европейского Союза Хавьера Солана армянскому информационному агентству Медиамакс, июль 2003 г.

¹⁷² «Նոր հարևանություն» կոնկրետ քայլեր, «Արմենպրես» լրատվական գործակալության բացառիկ հարցազրույցը ԵՄ ՀԱԱՔ հանձնակատար Խ. Սոլանայի հետ // «Հայաստանի Հանրապետություն», 30 մարտ 2006, հիմնադրաբեկ, թիվ 57(3913):

յունները¹⁷³, բայց տեղին չէ խոսել պատերազմն սկսողի դեմ պատժամիջոց կիրառելու մասին, այլ պետք է ներգրավված կողմերին համոզել, որ ռազմական լուծումները չեն բխում իրենց շահերից:¹⁷⁴ Նրա համոզմամբ, սառեցված հակամարտությունները հնարավոր չէ կարգավորել առանց հակամարտող կողմերի միջև վստահության մթնոլորտի ստեղծման, ինչին հնարավոր չէ հասնել առանց քաղաքական և տնտեսական հստակ հեռանկարներ ուրվագծելու:¹⁷⁵ Այդ համատեքստում Հարավային Կովկասում կայունության պայմանագրի ստորագրման հեռանկարն ավելի մշուշոտ է, քան Բալկաններում, քանզի տարածաշրջանի երկրները շարժվում են տարբեր ուղղություններով. Կրաստանը հստակ ուղղորդված է դեպի Արևմուտք, Հայաստանը դեռևս գտնվում է իր շուրջ ստեղծված մեկուսացման մթնոլորտից բխող սահմանափակումների ազդեցության տակ, իսկ Ադրբեյջանն իր հակամարտության գործընկերների նկատմամբ վարում է բավական հավասարակշռված քաղաքականություն:

Արևմտյան որոշ հեղինակավոր մասնագետներ ևս, մատնանշելով հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման գործում ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի անհաջողությունները, կոչ են անում ԵՄ-ին ակտիվորեն զբաղվել այդ խնդիրներով: Սակայն, միաժամանակ, ընդգծվում է, որ ԵՄ-ի զինված ուժերի ներգրավմամբ այդ հակամարտությունների կարգավորումն առանց ՌԴ-ի հետ սերտ փոխգործակցության անհրատեսական է:¹⁷⁶ Ավելին, տարածաշրջանում բարեփոխումների արդյունավետության համար անհրաժեշտ է նաև ԵՄ-ին անդամակցության թեկնածու Թուրքիայի ներգրավումը,¹⁷⁷ քանզի մինչև թուրք-հայկական սահմանի բացումը տարանցիկ ճանապարհները Կենտրոնական Ասիայից, Սևծովյան-Կասպ-

¹⁷³ Ռազմական ուղին կործանարար կլինի // Հայաստանի Հանրապետություն», 6 ապրիլ 2006, հինգշաբթի, թիվ 62(3918):

¹⁷⁴ Եվրամիություն-Հայաստան // «Հայաստանի Հանրապետություն», 25 հուլիս 2006, երեքշաբթի, թիվ 138(3994):

¹⁷⁵ Առանց վստահության մթնոլորտի ձևավորման, հակամարտությունների կարգավորումը հնարավոր չէ // «Հայաստանի Հանրապետություն», 18 մայիս 2006, հինգշաբթի, թիվ 90(3946):

¹⁷⁶ Տե՛ս Rahr A. EU im postsowjetischen Raum. Konturen einer neuen Ostpolitik, Herausgegeben vom Körber-Zentrum Russland / GUS zur Unterstützung des Petersburger Dialogs,

¹⁷⁷ Հատկանշական է, որ, հաշվի առնելով տարածաշրջանում Թուրքիայի ազդեցիկ դերակատարությունը, նպատակահարմար է համարվում այս երկրի անդամակցությունը ԵՄ-ին: Ըստ այդմ, ԵՄ-ի անդամ Թուրքիան կապահովի ԵՄ-ի անվտանգության շահերի իրագործումը Հարավային Կովկասում: Demirag Y., EU Policy towards South Caucasus and Turkey, Perceptions, Winter 2004 – 2005, p. 4.

յան տարածաշրջանից դեպի Եվրոպա չեն կարող արդյունավետ գործառնել:

Իրականում ԵՄ-ը տարածաշրջանային հակամարտություններին արձագանքել է շատ ավելի վաղ, քան դրանց կարգավորմանն ուղղված գործնական քայլերի իրականացումը: 1997թ.-ից սկսած ԵՄ-ը ֆինանսավորում էր Հարավային Օսիայի ու Աբխազիայի հետպատերազմական վերականգնման ու բարեփոխումների աշխատանքները: Ընդհանուր առմամբ, 1997-2005թթ. ԵՄ-ը մոտ 33 մլն. Եվրոյի օժանդակություն է ցուցաբերել:¹⁷⁸ 1999թ. Եվրոպական խորհրդարանն ընդունեց մի բանաձև, որով նա իր հավանությունն էր տալիս ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցով ԵԱՀԿ ՄԽ-ի խաղաղության պլանին: Միաժամանակ դրանում նպատակահարմար էր համարվում ԵՄ-ի կողմից Հայաստանի ու Ադրբեջանի հանրային սեկտորին ուղղված ֆինանսավորման ավելացումը՝ ուղղված հասարակությունների միջև երկխոսությունների կազմակերպմանը:¹⁷⁹ ԼՂ - հակամարտության կարգավորման հարցում մշտապես կարևորվել է նաև ԵՄ-ՌԴ և ԱՄՆ-ՌԴ դիրքորոշումների համաձայնեցումը, ինչը կարող է զգալի առավելություններ տալ հարավկովկասյան բոլոր հակամարտությունների լուծմանը:

Հատկանշական է, որ մինչև 2001թ. խոսք էր գնում հակամարտությունների կարգավորման հարցը ԳՀՀ մեջ ներառելու մասին: Այս շրջանում ակտիվորեն քննարկվում էր այսպես կոչված «Կովկասի կայունության պակտը»՝ որպես բազմակողմ դաշնային պայմանագիր: Առաջին անգամ դա բարձրաձայնվեց 1999թ. ԵԱՀԿ Ստամբուլի գագաթնաժողովում, իսկ նրա հնարավոր միջոցառումների ցանկը զարգացվեց Եվրոպական քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոնի կողմից: Այս նախագիծն իրենից ներկայացնում է ԵՄ-ին հարավկովկասյան երկրների հեռանկարային ինտեգրման ծավալում մի հետազոտություն, որը բովանդակում է նաև հակամարտությունների կանխարգելման, կարգավորման, ինտեգրման և տարածաշրջանային անվտանգության ապահովման մի

¹⁷⁸ Stéu Popescu N., The European Union and conflicts in the South Caucasus, OSI Research Fellow, Centre for European Policy Studies - http://www.caucas.com/home_eng/breve_contenu.php?id=291

¹⁷⁹ Stéu Резолюция Европейского парламента, Страсбург, 11 марта 1999 // Опубликовано в “Армянский вестник”, общественно-политический журнал, N 1-2, 1999.

շարք գաղափարներ:¹⁸⁰ Նախագծի իրագործման ճանապարհին հիմնական խոչընդոտներից մեկը տարածաշրջանում ռուսական ռազմաքաղաքների առկայությունն էր, որոնց պահպանումը հայկական կողմը դիտարկում էր որպես տարածաշրջանային անվտանգության հիմնական երաշխիք:¹⁸¹

2002թ. Երևանում ԵՄ Խորհրդի դանիական Նախագահության ներկայացուցիչը, ընդգծելով Ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ և շուտափույթ կարգավորման անհրաժեշտությունը, նշեց, որ դրա համատեքստում պահպանվող շրջափակումն անհեռանկար քաղաքականություն է, որը վնասում է բոլոր կողմերին, այդ թվում՝ ԵՄ-ին:¹⁸²

Հարավկովկասյան հակամարտությունները ԵԱՌ-ում և ԵՀՔ-ում ներառվելուց հետո տեղափոխվեցին ԸԱԱՔ օրակարգ: Այդուհետ սկսվեցին այդ «սառեցված հակամարտությունների» եվրոպականացման քննարկումները: 2003թ. ԵՄ-ը հարավկովկասյան գործընթացներին սկսեց ներգրավվել նաև որպես անվտանգության ոլորտի ակտոր: Առաջին քայլը դարձավ ԵԱՊՔ առաքելությունը Վրաստանում, ինչպես նաև Արագ արձագանքման մեխանիզմի կիրառումը հեղափոխությունից հետո ժողովրդավարական գործընթացների խրախուսման գործում:¹⁸³

2003թ. սեպտեմբերին Բոյուսելում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի արտգործնախարարները մասնակցեցին Հարավային Կովկասի երկրների հետ համագործակցության հարցերով ԵՄ Խորհրդի նստաշրջանին: Վրաստանն ու Ադրբեջանը կոչ էին անում ԵՄ-ին խաղաղ գլխավոր դերն Աբխազիայում, Հարավային Օսիայում և Լեռնային Ղարաբաղում հակամարտությունների կարգավորման հարցում: Հայաստանը ևս պաշտպանեց իր հարևանների դիրքորոշումն այն հարցում, որ ԵՄ-ը կարող է դրական նշան տալ՝ ԵՄ-ին այդ երկրների անդամակցության հեռանկարների վերաբերյալ: Եվրոպայում շատերն են կարծում, որ հարավկովկասյան երկրների ասոցիատիվ անդամակցությունը ԵՄ-ին հանդիսանում է հա-

¹⁸⁰ St' u Celac S., Emerson M., Tocci N., A Stability Pact For The Caucasus, A Consultative Document of the CEPS Task Force on the Caucasus, 2000

¹⁸¹ St' u Kamov G., EU's Role in the Conflict Resolution: the case of the Eastern Enlargement and neighbourhood policy areas, June 2006, p. 56-57

¹⁸² St' u Europäisches Parlament, Parlamentarischer Kooperationsausschuss EU-Armenien, Protokoll Viertes Treffen, 9.-10. September 2002, Jerewan

¹⁸³ St' u Conflict Resolution in the South Caucasus: EU's Role, Europe Report N 173- 20 March 2006

կամարտությունների լուծման և ներքին բարեփոխումների անցկացման ամենաարդյունավետ խթանը:¹⁸⁴

2003թ. ԵՄ-ը նշանակեց նաև Հարավային Կովկասում իր ՀՆ-ին (Հ. Թավլիթե, ում 2006թ. փոխարինեց Փ. Սեմնեբին): Սկզբնապես նրա մանդատը ներառում էր «հակամարտության լուծմանն օժանդակելը», որը, սակայն, հետագայում փոխարինվեց. «ներդրում ունենալ հակամարտությունների կարգավորման գործընթացում և ... դյուրացնել այդ կարգավորման իրականացումը ՄԱԿ ու ԵԱՀԿ հետ սերտ վերահսկողությամբ»:¹⁸⁵ Այդ մանդատը, փաստորեն, հնարավորություն է տալիս ԵՄՀՆ-ին «աջակցել» տարածաշրջանային հակամարտությունների կարգավորմանը ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի շրջանակներում: Ակնհայտ է, որ այդ պաշտոնի ներդրումը նպատակ ունի ապահովելու Հարավային Կովկասում ԵՄ-ի քաղաքականության հետևողականությունն ու արդյունավետությունը, աջակցելու տեղի երկրների քաղաքական և տնտեսական բարեփոխումներին, հակամարտությունների կարգավորմանը, փախստականների վերադարձին, ներտարածաշրջանային հարաբերությունների զարգացմանը: Նա պետք է աջակցի երկրների փոխգործակցությանը նաև անվտանգության, ահաբեկչության և կազմակերպված հանցագործության դեմ պայքարի, տարածաշրջանում խաղաղության վերականգնման հարցերի շրջանակներում:

Հատկանշական է, որ հարավկովկասյան հակամարտությունների կարգավորմանն առավել ակտիվորեն ներգրավված են ԵՄ-ի առանձին երկրներ, քան ԵՄ-ը: Աբխազիայի պարագայում ՄԱԿ-ի գլխավորած գործընթացներում ներգրավված էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու Գերմանիան, իսկ ԼՂ դեպքում՝ Ֆրանսիան ընդգրկված է ԵԱՀԿ ՄԽ-ի կազմում: 2004թ. Վրաստանում մեկ տարով մեկնարկեց նաև ԵՄ-ի «Օրենքի գերակայություն» առաքելությունը (EJUST Themis)՝ գործելով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հանրային ինստիտուտների, ընտրական բարեփոխումները և վստահության վերականգնումը նախկինում հակամարտող կողմերի միջև: 2006թ. տվյալներով ԵՄ-ը հանդիսանում էր Աբխազիայի ու Հարավային Օսիայի ամենամեծ դոնորը, սակայն նա հրաժար-

¹⁸⁴ St' u Vladimir Sokor, Евросоюз должен активизировать свою политику в Закавказье ("The Wall Street Journal", США) - <http://www.memo.ru/hr/hotpoints/caucas1/msg/2003/10/m7755.htm>.

¹⁸⁵ St' u Kamov G., EU's Role in the Conflict Resolution: the case of the Eastern Enlargement and neighbourhood policy areas, June 2006, p. 56-57

վեց ԵԱՀԿ շրջանակներից դուրս ՌԴ-ի հետ սահմանների երկայնքով դիտորդական առաքելություն իրականացնելու հրավերից:¹⁸⁶

ԵՄ-ի ներգրավման հաջորդ փուլն արդեն ԵՀՔ-ի մեջ հարավկովկասյան երկրների ներառումն էր և ԳԾ-երի շուրջ բանակցությունները, որոնք ևս պարունակում էին հակամարտությունների խաղաղ կարգավորման մասին դրույթներ: 2008թ. «Արևելյան գործընկերություն» ծրագրի ներկայացումը ևս վկայում է տարածաշրջանի նկատմամբ ԵՄ-ի հետաքրքրության աճի մասին: Ինչպես նշվում է փաստաթղթում, «ԵՄ անվտանգությունն ու կայունությունն ուղղակիորեն կրում են Արևելյան Եվրոպայի ու Հարավային Կովկասի իրադարձությունների ազդեցությունը: Ուստի, ԵՄ-ի անվտանգությունն ապահովելու համար մենք պետք է նախ և առաջ ապահովենք կայունություն ու անվտանգություն այդ տարածաշրջաններում»:¹⁸⁷

Այդուհանդերձ, մինչ 2008թ. ռուս-վրացական հակամարտությունը հարավկովկասյան իրադարձություններին ԵՄ-ը նախընտրում էր միջամտել միջնորդավորված՝ այլ միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի մեխանիզմների միջոցով: Այս «բարդույթի» համար պատճառ են հանդիսանում մի շարք գործոններ: Նախ, մինչև վերջերս ԵՄ-ի անդամներն ընդհանուր հայտարարի չէին եկել հարավկովկասյան հակամարտություններին ԵՄ-ի ակտիվ ներգրավման հարցում: Ակնկալում էին, որ այդ ակտիվությունը պետք է ցուցաբերվի հաշտության պայմանագրերի կնքումից հետո, և ԵՄ-ը կաջակցեր հետհակամարտային կարգավորմանն ու վստահության վերականգնմանը: Այսինքն, ԵՄ-ը դեռևս չի մշակել այդ հակամարտություններին իր միջամտության համապարփակ ռազմավարություն և այս հարցում առաջնայնությունը փոխանցել է ԵԱՀԿ-ին: Միայն ռուս-վրացական հակամարտության դեպքում նա օպերատիվ արձագանքեց նոր ստեղծված իրավիճակին և կարողացավ առաջարկել «սառեցման» իր ծրագիրը: Այս առումով, թերևս տեղին է ՄՃԽ-ի տված բնորոշումը, ըստ որի, ԵՄ-ը ոչ թե աշխատում է հակամարտությունների վրա, այլ դրանց շուրջ (“working around conflict” vs “working

¹⁸⁶ Stéu Emerson M., Popescu N., European Neighbourhood Policy Two Years on: Time indeed for an "ENP plus", Journal of Foreign Policy of Moldova, issue: 03 / 2007, p. 20

¹⁸⁷ Eastern Partnership, Commission of the European Communities, Brussels, 3.12.2008

on conflict”):¹⁸⁸ ԵՄ-ն իր ջանքերը կենտրոնացրել է հակամարտությունների կարգավորման տնտեսական չափման, վստահության վերականգնման և նման այլ թեմաների վրա: Բնականաբար, հակամարտությունների կարգավորման այս «փափուկ» մեթոդները բոլորովին էլ ավելորդ չեն, բայց և շատ հեռու են բավարար լինելուց:

Երկրորդ, ԵՄ-ի ակտիվությունը սահմանափակվում է նաև ռուսական գործոնով: Հայտնի է, որ ՌԴ-ը չի ողջունում ո՛չ ԵՀԲ-ի, ո՛չ էլ, առավելևս, «Արևելյան գործընկերության» ներդրումն իր սահմանների մերձավորությամբ՝ գտնելով, որ դրանք նպատակ ունեն «փափուկ» միջոցներով մասնակից հետխորհրդային երկրներին դուրս բերել ռուսական ազդեցության գոտուց: Այսինքն, հակամարտությունների կարգավորման հարցում ԵՄ-ը պետք է հաշվի նստի նաև ՌԴ-ի շահերի հետ՝ հիմք ընդունելով նրա ավանդական ազդեցությունը տարածաշրջանում: Սա անհրաժեշտ խնդիր է անգամ այն պայմաններում, երբ համեմատաբար թուլացած ՌԴ-ի կողքին համաշխարհային թատերաբեմում և տարածաշրջանում իրենց դիրքերն են ամրապնդում այլ դերակատարներ:

Երրորդ, թուրք-ադրբեջանական շրջափակման պատճառով Հայաստանը դուրս է մղվել տարածաշրջանային և միջտարածաշրջանային համագործակցության ծրագրերից, ինչն էապես խոչընդոտում է ԵՄ-ի կողմից տարածաշրջանային նախաձեռնությունների իրականացմանը: Բացի դրանից, հակամարտությունների արդյունավետ կարգավորման համար տեղի երկրներին պակասում է բավարար ինքնուրույնությունը, ինչը պատճառ է դարձել արտաքին դերակատարների միջամտության և նրանց ազդեցության ամրապնդման համար: Խնդիրը բարդանում է նաև այն պատճառով, որ հարավկովկասյան երկրները ԵՄ-ին անդամակցության թեկնածուներ չեն, ինչը լրացուցիչ հնարավորություններ կտար ԵՄ-ին ներազդել տարածաշրջանային գործընթացներին իր ամենաարդյունավետ արտաքին քաղաքական գործիքի՝ փոխպայմանավորման միջոցով:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ, թեև այժմ ԵՄ-ն ունի հակամարտությունների կանխարգելման ռազմավարություն և դրա իրագործման համար բավարար կարողություններ, սակայն Հարավային Կովկասում ԵՄ-ի ներգրավվածության ակտիվացումն այդ ուղղությամբ կարող է ավելի սրել հակասությունները և անբարենպաստ իրավիճակ ստեղծել հենց

¹⁸⁸ St'eu Conflict Resolution in the South Caucasus: The EU's Role, Europe Report 173, 20.3 2006

ԵՄ-ի համար: Այնուամենայնիվ, չպետք է բացառել նաև այն տարբերակը, որ, ինչպես ԵՄ-ի մի շարք անդամների թեկնածության շրջանում, այնպես էլ հարավկովկասյան երկրների դեպքում, ԵՄ-ի հետ առավել սերտ գործակցությունը նրան անդամակցելու հեռանկարով կարող է էապես խթանել տարածաշրջանում ոչ միայն ժողովրդավարական արժեքների տարածումը, այլև առկա տարածայնությունների եվրոպականացմանն ու վերջնական կարգավորմանը: Թեև ԵՄ-ին տեղի երկրների անդամակցությունը տեսանելի ապագայում անիրատեսական է, այդուհանդերձ, աստղացված անդամության գաղափարը ևս նշանակալի դեր կարող է խաղալ, քանզի եվրոպական հեռանկարի առկայությունը կարող է տալ հստակ որոշված ուղղություն դեպի հակամարտությունների վերջնական լուծումն ու հարավկովկասյան անվտանգության հայեցակարգի մշակումը:

Այս կապակցությամբ, որոշ հեղինակներ գտնում են, որ քանի դեռ եվրոպական ինտեգրումը պահպանում է իր շարժունությունն ու հետևողականությունը, ԵՄ-ը բաց մնում է այլ երկրների անդամակցության համար, եվրոպական ինտեգրումը կորոշի չճանաչված երկրների շուրջ տեղի ունեցող գործընթացների տեմպը, ռիթմը և բնույթը, իսկ այդ պետությունների ապագան կորոշվի միավորված Եվրոպայի գործառնությանը նրանց ներգրավմամբ և այդ ներգրավման բնույթով:¹⁸⁹ Այստեղ որոշակի խնդիրներ կարող է առաջացնել հենց չճանաչված երկրներում անխուսափելի ներքաղաքական և մշակութային փոխակերպումը հոգուտ եվրոպական կողմնորոշում ունեցող ուժերի: ԵՄ-ին ինտեգրվելու ձգտումը հանգեցնում է դրան, որ տեղի երկրները փորձում են եվրոպական կառույցներին ներքաշել իրենց ներքին խնդիրների կարգավորմանը: ԵՄ-ը չի կարող հրաժարվել իր ազդեցության տարածքում եվրոպական արժեքների և ԵՄ-ին բնորոշ քաղաքական մշակույթի տարածումից: Իսկ ԵՄ-ի ներգրավումը Հարավային Կովկասի հիմնախնդիրների կարգավորմանն անապաման կհանգեցնի տեղի երկրների և հակամարտող ուժերի եվրոպականացմանը:

Երկարաժամկետ հեռանկարում միջազգայնորեն չճանաչված երկրները հույս ունեն, որ ԵՄ-ը կարող է կարգավորել իրենց հարաբերությունները տարածաշրջանային այլ դերակատարների հետ, աստիճանաբար

¹⁸⁹ Ст'ю Шевцов Ю., Непризнанные государства и европейская интеграция – Агентство политических новостей - http://www.apn.ru/?chapter_id=134:

ուղի հարթել տարածաշրջանին նրանց տնտեսական և քաղաքական ինտեգրման համար՝ ճանապարհ բանալով նաև նրանց միջազգային ճանաչման համար: Իսկ հարավկովկասյան երեք երկրների դիտանկյունից ԵՄ-ին անդամակցությունն էականորեն կբարձրացնի նրանց կարևորությունը հարևանների, մասնավորապես, ՌԴ-ի և Թուրքիայի հետ հարաբերություններում: Եվ անգամ եթե ԵՄ-ին լիրաժեք ինտեգրումն առայժմ տեսանելի չէ, դա մնում է հեռանկարային երկարաժամկետ քաղաքական նպատակ հարավկովկասյան բոլոր երկրների համար, ինչն ամրապնդվում է նաև այն հանգամանքով, որ այդ երկրների բնակչության մեծ մասի կողմից կայունությունը, ազգային համախմբումը և տնտեսական բարեկեցությունն ուղղակիորեն կապվում են ԵՄ-ի հետ:

Թեև հարավկովկասյան բոլոր երկրներում ԵՄ-ը համարվում է վստահելի գործընկեր, այդուհանդերձ, նա չի դիտարկվում որպես ուժեղ, ազդեցիկ դերակատար, ինչպիսին են, օրինակ, ՌԴ-ը և ԱՄՆ-ը: Պատճառը թերևս նրանում է, որ, փաստորեն, ԵՄ-ի շահերին ուղղված հետևողական քաղաքականություն այս տարածաշրջանի նկատմամբ բացակայում է: Դրա փոխարեն, ինչպես կարծում են որոշ հեղինակներ, ԵՄ-ը տարածաշրջանի երկրներին կարող է առաջարկել խաղաղ համակեցության և բարգավաճման ձևանմուշ:¹⁹⁰ Այս իմաստով տեղի երկրների հասարակական կարծիքը ԵՄ-ի և նրա առանձին անդամ-երկրների նկատմամբ վերաբերմունքի հարցում չեն համընկնում, և ԵՄ-ը հաճախ ընկալվում է որպես խաղաղության, ապահովության և բարեկեցության կառուցակարգ:

Տարածաշրջանային հակամարտությունների կարգավորումը հնարավոր է միայն այստեղ ուժերի հավասարակշռության հիմնարար փոփոխության դեպքում, երբ փոփոխվեն երկրների դիրքորոշումները՝ թույլ տալով ընդունել հակամարտությունների կարգավորմանն ուղղված առավել լեգիտիմ որոշումներ: Միջազգայնորեն չճանաչված պետական կազմավորումների տեսանկյունից ՌԴ-ի շահագրգռվածությունը ստատուս-քվոյի պահպանման մեջ երաշխավորում է, որ նրանք իրենց կամքին հակառակ չեն ներքաշվի որևէ համաձայնության մեջ: Իսկ Ադրբեջանի և Վրաստանի տեսանկյունից՝ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի մեծ ներգրավվածությունը կարող է հանգեցնել ուժերի վերադասավորման իրենց օգտին: Այս համատեքստում ԵՄ-ին տրվում է ածանցված, երկրորդական դերակատարում՝

¹⁹⁰ St' u Tamm S., *Weakness as an opportunity: EU policy in the South Caucasus*, 2007, p. 6.

նրան չհամարելով ուժերի հավասարակշռությունը փոփոխելու ընդունակ գործոն: Որպես դրա հիմնավորում կարող են հանդիսանալ, նախ, այն, որ տարատեսակ միջնորդական առաքելություններում ԵՄ-ը խոսում է ոչ թե մեկ, այլ իր անդամների մի քանի ձայներով, երկրորդ, չկան ոչ մի էական շարժառիթներ, որպեսզի ուժերի տարածաշրջանային հարաբերակցությունը փոփոխելու համար ԵՄ-ը հակադրվի, օրինակ, ՌԴ-ին, քանզի դա չի բխում նրա կենսական շահերից, երրորդ, եվրոպական ինտեգրմանը Հարավային Կովկասի ապագա մասնակցությանը ԵՄ-ն առաջմ չի կարող հստակ չափանիշներ ու պահանջներ ներկայացնել:

Հատկանշական է, որ ԵՄ-ի ներգրավվածությունը ԼՂ հակամարտության կարգավորմանը անհամեմատելի է Աբխազիայի կամ Հարավային Օսիայի հետ: Այս դեպքում ԵՄ-ը չի ֆինանսավորել տնտեսական օժանդակության ծրագրեր, և նրա ակտիվությունը կապված է եղել ԵՄՀՆ-ի գործունեության ու ԵԱՀԿ ՄԽ-ին օժանդակության հետ: Հայաստանի ու Ադրբեջանի դիրքորոշումն էլ ԵՄ-ի մասնակցության հարցում տարբերվում է Վրաստանից: Հայաստանի համար ԵՄ-ն աստիճանաբար ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում, սակայն՝ որպես հարակից-երկրորդական դերակատար: Նա առավել շահագրգռված է պահպանել ու զարգացնել հարաբերությունները ՌԴ-ի, ԱՄՆ-ի և Իրանի հետ: Ադրբեջանի դեպքում առանցքային դերակատարներ համարվում են ՌԴ-ը և ԱՄՆ-ը:

Այդուհանդերձ, ԼՂ հիմնահարցը տեղ գտավ նաև ԵՀՔ ՊԾ-ի շուրջ բանակցություններում: Սակայն ԵՄ-ը համարժեք չարձագանքեց Հայաստանի կոչին՝ ակտիվորեն ներգրավվել ԼՂ հետհակամարտային վերականգնմանը: Բացի դրանից, Ադրբեջանը չէր էլ պնդում, որպեսզի ԼՂ դառնա ՊԾ առաջնայնություն, ինչը որոշ հեղինակներ պատճառաբանում են նրանով, որ ԵՄ-ը չի ցանկանա բացեիբաց հայտարարել, որ Հայաստանը բռնազավթել է Ադրբեջանի տարածքի մի մասը:¹⁹¹ Սակայն Փ. Սեմնեբին չի բացառում հիմնահարցի կարգավորման մեջ որոշակի արդյունքների ձեռքբերման դեպքում Հարավային Կովկասում ինքնուրույն կամ այլ միջազգային կառույցների հետ համատեղ ԵՄ-ի խաղաղապահ ուժերի տեղակայումը:¹⁹² Ավելին, չի բացառվում նաև ԵԱՀԿ ՄԽ-ի շրջանակներում ԵՄ-ին դի-

¹⁹¹ St'u Kamov G., EU's Role in the Conflict Resolution: the case of the Eastern Enlargement and neighbourhood policy areas, June 2006, p. 66

¹⁹² St'u Евросоюз не прочь разместить миротворческие силы на Южном Кавказе (18 Март 2006) - www.medialogue.org/rus/?page=issue&id=1163:

տորդի կարգավիճակով ընդգրկելու հնարավորությունը:¹⁹³ Որոշ հեղինակներ էլ գտնում են, որ ԵՄ-ն Ադրբեջանին, Հայաստանին և ԼՂ-ին պետք է առաջարկի նշանակալի աջակցություն՝ ուղղված հակամարտության կարգավորումը խթանելուն:¹⁹⁴ Ըստ որում, այդ աջակցությունը պետք է տրամադրվի փոխապայմանավորման տրամաբանությամբ՝ հակամարտության կարգավորման արդյունքը կապելով աջակցության տրամադրման հետ:

Հարավային Կովկասում ներպետական և տարածաշրջանային բարեփոխումների ցածր արդյունավետությունը ստվերում է տարածաշրջանի դրական նշանակությունը եվրոպական անվտանգության քաղաքականության համար: ԵՄ-ի Անվտանգության ուսումնասիրությունների ինստիտուտի վերլուծաբանների կարծիքով, Կասպյան ավազանի պաշարների դիմաց ԵՄ-ը պետք է աջակցի տեղի երկրների սոցիալ-տնտեսական զարգացմանը, նպաստի տարածաշրջանը կազմալուծող և հաղորդակցության նախագծերի իրագործումը խաթարող հակամարտությունների կարգավորմանը, այսինքն, անհամամասնական օգուտների փոխարեն ԵՄ-ը պետք է ստանձնի անհամամասնական պարտավորություններ, օրինակ, ռազմաքաղաքական և ֆինանսատնտեսական աջակցության հարցում:¹⁹⁵

Բայց ներգրավումը հակամարտող կողմերի և ԵՄ-ի որոշ անդամների կողմից միանշանակ դրականորեն չի ընդունվում: Հակամարտության գոտում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական ինստիտուտների զարգացման գործում ԵՄ-ի ներգրավվածությանը շահագրգիռ կողմերը կարող են և՛ դրականորեն արձագանքնել, և՛ որակել դա որպես վիճելի տարածքների միջազգային ճանաչմանն ուղղված քայլ: Որոշ վերլուծաբանների համոզմամբ, եթե այդ ներգրավվածությունը հակամարտող կողմերից որևէ մեկը դիտարկի որպես սեփական իշխանության լեգիտիմացում, ապա դա կփոքրացնի բանակցությունների ժամանակ փոխզիջումների ձեռքբերման հնարավորությունը:¹⁹⁶

¹⁹³ Տե՛ս Kamov G., Ibid, p. 66

¹⁹⁴ Lynch D. (ed.) The South Caucasus: a challenge for the EU, Chaillot Papers n°65, Institute for Security Studies, European Union, Paris, December 2003, p. 140.

¹⁹⁵ Տե՛ս նույն տեղում, p. 165-170:

¹⁹⁶ Diez T., “Roots” of Conflict, Conflict Transformation and EU Influence. Summary of Initial Comments, European Commission Workshop, Brussels, 14 February 2003 - <http://euborderconf.bham.ac.uk/publications/files/brussels20030214.pdf>:

Փ. Սեմնեբիի կարծիքով, տարածաշրջանային համագործակցության զարգացմանն ուղղված ջանքերը հարկ է գործադրել հակամարտությունների կարգավորմանը զուգահեռ, ըստ որում, համագործակցությունը չպետք է սահմանափակվի միայն հարավկովկասյան երկրներով:¹⁹⁷ Հետագայում նա մատնանշեց, որ չկարգավորված հակամարտության պատճառով Հայաստանն ահռելի վնասներ է կրել, ինչի վառ արտահայտությունը մեկուսացումն է: Նա նաև արձանագրեց Արդբեջանում կոշտ հռետորության աճը, ինչը մեծացնում է հավանականությունը, որ շփման գծում ցանկացած պատահար կողմերի միջև կարող է վերաճել լուրջ հակամարտության:¹⁹⁸

Այս առումով տեղին է Խ. Սոլանայի հայտարարությունն այն մասին, որ 2008թ. վրացական ճգնաժամից հետո էլ ավելի ակնհայտ դարձավ, որ ԼՂ հիմնախնդիրը չունի ռազմական լուծում: Նա վերահաստատեց ԵԱՀԿ ՄԽ-ին ԵՄ-ի աջակցությունը, ինչպես նաև հատուկ ուշադրությունն ընդհանրապես տարածաշրջանի խնդիրներին, իսկ որպես դրա վկայություն մատնաշեց «Արևելյան գործընկերություն» ծրագիրը: Տարածաշրջանային կայունության ապահովման հարցում նա ևս կարևորեց համագործակցության անհրաժեշտությունը տեղի երկրների, ՌԴ-ի, Թուրքիայի և ԱՄՆ-ի հետ, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորումը:¹⁹⁹

Այստեղ կարելի է խոսել նաև հակամարտող երկներում ժողովրդավարական զարգացումների հնարավոր դրական անդրադարձների մասին: Ակնհայտ է, որ ժողովրդավարական վերափոխումների խափանումը կարող է բացասաբար անդրադարձնալ բանակցությունների ընթացքի վրա, մինչդեռ ժողովրդավարության կայացման դեպքում մեծ ժողովրդականություն վայելող կառավարություններն առավել ազատորեն կարող են

¹⁹⁷ Տե՛ս «Моим основным приоритетом будет содействие урегулированию конфликтов», Эксклюзивное интервью специального представителя Европейского Союза на Южном Кавказе Питера Семнеби агентству Медиамакс, март 2006.

¹⁹⁸ Տե՛ս «Ни одна из сторон не заявляет о готовности принять принцип урегулирования», Эксклюзивное интервью специального представителя Европейского Союза на Южном Кавказе Питера Семнеби агентству Медиамакс, сентябрь 2006

¹⁹⁹ Տե՛ս Хавьер Солана: «Военного решения Нагорно-Карабахского конфликта не существует. Это должно быть особенно очевидно после грузинского кризиса...» - <http://www.day.az/news/politics/145987.html>, 02.02.09

գործել արտաքին հարաբերություններում՝ չվախենալով երկրի ներսում մեղադրվել դավաճանության մեջ:

Հենց այդ տրամաբանությամբ ՄՃԽ-ի փորձագետները ԵՄ-ին առաջարկում են մեծացնել ԵՄՀՆ-ի դերը, որը պետք է հետևի մինսկյան գործընթացին, կապ պահպանի հակամարտության բոլոր կողմերի, այդ թվում՝ ԼՂ իշխանությունների հետ: Բացի դրանից, ակնկալվում է նաև ԵՀՔ-ի մեխանիզմների օգտագործումը՝ հակամարտող երկրների միջև վստահության ամրապնդման, այնտեղ ժողովրդավարական բարեփոխումների աջակցության նպատակով:²⁰⁰

ԵՄ-ի ուշադրության աճը տարածաշրջանի խնդիրների նկատմամբ էլ ավելի ակնհայտ դարձավ վրաց-հարավօսական հակամարտության օրերին: Այս հակամարտության նկատմամբ ԵՄ-ը ցուցաբերեց քննադատական մոտեցում և, ի տարբերություն ԱՄՆ-ի, բավական օպերատիվ և կառուցողական արձագանքեց նոր ստեղծված իրավիճակին: Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզիին հաջողվեց ՌԴ-ի և Վրաստանի նախագահների հետ համաձայնեցնել հակամարտության «սառեցման» իր նախագիծը, որը բաղկացած էր 6 կետից.

1. հրաժարվել ուժի կիրառումից,
2. պատերազմական գործողությունների դադարեցում,
3. մարդասիրական միջանցքի տրամադրում,
4. վրացական զորքերը պետք է ետ քաշվեն իրենց սովորական տեղակայման վայրերը,
5. ռուսական զորքերը պետք է ետ քաշվեն պատասխան գործողությունները սկսելուց առաջ իրենց գտնվելու վայրերը: Մինչ հակամարտության գոտում խաղաղության միջազգային մեխանիզմի կիրառումը ռուսական խաղաղարար ուժերը կարող են ձեռնարկել անվտանգության լրացուցիչ միջոցներ,
6. միջազգային քննարկումներ սկսել Աբխազիայում և Հարավային Օսիայում անվտանգություն և կայունություն հաստատելու համար:²⁰¹

²⁰⁰ St'u Nagornyy Karabakh: riskuya voyной Доклад Крайсис Груп N°187 Европа, 14 ноября 2007 г., с. 5.

²⁰¹ Sarkozy under fire over 'foggy' Georgia peace plan, 29 August 2008 - <http://www.euractiv.com/en/enlargement/sarkozy-fire-foggy-georgia-peace-plan/article-174977>.

Վրաստանի քննադատությանն արժանացավ 5-րդ կետը, որի հիման վրա, իբր, ՌԴ-ը կարող էր «լրացուցիչ միջոցներ» կիրառել՝ հակամարտության գոտում իր դիրքերն ամրապնդելու համար:

Սեպտեմբերի 1-ին հրավիրվեց նաև Խորհրդի արտակարգ հանդիպում, որի արդյունքում ընդունված եզրակացության մեջ ԵՄ-ը կրկին քննադատեց ռազմական գործողությունները, ՌԴ-ի կողմից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումը՝ պնդելով, որ հակամարտությունը պետք է կարգավորվի Վրաստանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Այդուհանդերձ, հենց այս որոշմամբ ևս մի անգամ փաստվեց, որ ԵՄ-ՌԴ համագործակցությունը չունի այլընտրանք:²⁰²

Եզրակացության մեջ անհարժեշտ էր համարվում նաև միջոցներ ձեռնարկել ողջ տարածաշրջանի վրա հակամարտության բացասական հետևանքները վերացնելու, էներգակիր պաշարների մատակարարման անվտանգությունն ապահովելու և էներգիայի լրացուցիչ աղբյուրներ գտնելու նպատակով:

Երկու օր անց Խորհրդարանը 549 կողմ, 61 ձեռնպահ ձայներով ընդունեց բանաձև Վրաստանի վերաբերյալ, որը դատապարտեց ՌԴ-ի կողմից ոչ համարժեք ուժի կիրառումը²⁰³ և Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումը, կարևորեց «հանուն Հարավային Կովկասի խաղաղության» համաժողովի հրավիրման անհրաժեշտությունը տարածաշրջանի բոլոր երկրների մասնակցությամբ:²⁰⁴

Արդեն սեպտեմբերի 8-ին Մոսկվա ժամանեցին Ն. Սարկոզին, ԵՄ-ի Հանձնաժողովի նախագահ Ժ. Մ. Բարոզոն և ԵՄ ԸԱԱԲ հարցերով բարձրագույն ներկայացուցիչ Խ. Սոլանան՝ քննարկելու նախագծի կատարման ընթացքը: Հաջորդ քայլը դարձավ լրացուցիչ միջոցների ձեռնարկումը, որով ԵՄ-ը հանդես եկավ որպես Վրաստանի կողմից ուժի չկիրառման երաշխավոր, իսկ ՌԴ-ը պարտավորվեց դուրս բերել իր ուժերը Հա-

²⁰² St'eu Council of EU, Brussels, 1 sept., 2008, Conclusion of the extraordinary European Council meeting.

²⁰³ Հետաքրքիր է, որ Վրաստանի հարձակողական գործողությունների քննադատությամբ հանդես եկավ ՄԱԿ-ի ԳԱ նախագահ Մ. դ'Էսկոտո Բրոքմանը, հայտարարելով, որ, «ներխուժելով Հարավային Օսիա, Վրաստանն իրականացրեց ագրեսիա ... Այդկերպ Վրաստանը խախտեց ՄԱԿ-ի Կանոնադրությունը»: St'eu Грузия нарушила Устав ООН, напав на Южную Осетию - председатель Генассамблеи, Новости-Армения, 17 сентября.

²⁰⁴ St'eu European Parliament resolution of 3 September 2008 on the situation in Georgia, Wednesday, 3 September 2008 – Brussels

րավային Օսիային ու Աբխազիային հարող տարածքներից այնտեղ միջազգային դիտորդական առաքելության տեղակայումից հետո: Ռրա հիման վրա ԵՄ-ը ԸԱՊԲ-ի շարջանակներում տարածաշրջան ուղարկվեցին 200 դիտորդներ:

Հակամարտությունը նոր տարածայնությունների պատճառ դարձավ ինչպես ԵՄ-ի ներսում, այնպես էլ նրա ու ԱՄՆ-ի հարաբերություններում: Այդ հակամարտությունն ուղղակիորեն առնչվում էր ՌԴ-ի հետ Գերմանիայի «հատուկ հարաբերություններին» և ԵՄ-ում նրա զբաղեցրած «հատուկ» դիրքին: Ակնհայտ է, որ ԵՄ-ի շրջանակներում Գերմանիայի դիրքորոշումն ունի մեծ ազդեցություն, և հենց Ա. Մերկելին էր վերապահված օգոստոսի 26-ին հայտարարելու, որ վրաց-ռուսական հակամարտությունը ոչ մի կերպ չի անդրադառնա «Հյուսիսային հոսանք» գազատարի կառուցման վրա, որը Եվրոպայի համար ունի ռազմավարական նշանակություն:²⁰⁵ Գերմանիան ստիպված էր մանևրել պատմականորեն հակառուսական դիրքորոշում ունեցող բալթյան երկրների, սկանդինավյան երկրների և Մեծ Բրիտանիայի միջև, որոնք հանդես էին գալիս հոգուտ ՌԴ-ի դեմ կոշտ միջոցների կիրառման, հաշվի առնել Ֆրանսիայի շահերը, որը կողմ էր ՌԴ-ին խիստ «զգուշացնելուն», Իտալիայի դիրքորոշումը, ով կողմնակից էր ընդամենը «զգուշացնելուն», ինչպես նաև ՌԴ-ի կարծիքը, որը Գերմանիայի գլխավոր տնտեսական գործընկերն է Արևելյան Եվրոպայում և նրա «գազային» դաշնակիցը: Գերմանիայի դիրքորոշումը միանշանակ էր. շարունակել համագործակցությունը ՌԴ-ի հետ:

Ֆրանսիայի դիրքորոշումը հստակ արտահայտեց Ն. Սարկոզին՝ հայտարարելով, որ ՌԴ-ի հետ ռազմավարական գործընկերությունը ԵՄ-ի միակ ուղին է: Նրա համոզմամբ, Եվրոպայի բարգավաճումն ու կայունությունը կախված են Կովկասի բարգավաճումից և կայունությունից:²⁰⁶ Արդեն Կովկասի կայունության հարցերով ժնկյան առաջին փուլից հետո Ն. Սարկոզին հայտարարեց, որ ՌԴ-ի հետ հակադրության մեջ մտնելն անտրամաբանական է:

Իտալիայի վարչապետ Ս. Բերլուսկոնին ևս կտրականապես դեմ հանդես եկավ պատժամիջոցների գաղափարին: «ՌԴ-ը դեռևս հանդիսա-

²⁰⁵ Տե՛ս «Кавказский фронт» Ангелы Меркель, Новости-Армения, 26 августа 2008г.

²⁰⁶ Տե՛ս Саркози называет диалог с РФ в области безопасности единственным возможным выбором для ЕС, Новости-Армения, 9 сентября 2008г.

նում է ռազմական գերտերություն, ունի միջուկային ներուժ, որը կարող է տասն անգամ ոչնչացնել աշխարհի բնակչությունը, երկիր, որի տնտեսական աճը կազմում է տարեկան 7-8%, ունի նավթ և գազ, որոնց կարիքն ունի Եվրոպան»:²⁰⁷ Նրա կարծիքով, Արևմուտքի շահերից բխում է շարունակել և զարգացնել համագործակցությունը ՌԴ-ի հետ, այլ ոչ թե այնպես անել, որպեսզի նա վերակողմնորոշվի դեպի Արևելք, մասնավորապես, դեպի Չինաստան: Ի հավելում, Իտալիայի ԱԳ նախարար Ֆ. Ֆրատինին ՌԴ-ին համարեց Արևմուտքի անփոխարինելի գործընկեր Աֆղանստանից մինչև ահաբեկչության դեմ պայքարը: Եվ հենց Իտալիան որոշ եվրոպական գործընկերների, որոնք առաջարկում էին պատժամիջոցներ կիրառել ՌԴ-ի դեմ, «ընկերաբար ասեց, որ «սառը պատերազմն» այլևս չի կարող կրկնվել»²⁰⁸: Իր ռուս գործընկերոջ հետ հանդիպմանը նա նաև հավաստիացրեց Իտալիայի պատրաստակամության մեջ՝ աջակցելու արևմտաեվրոպական գործընկերների հետ երկխոսության պահպանմանն ու զարգացմանը:

Դեռ ավելին, նոյեմբերին Ս. Բերլուսկոնին ցանկություն հայտնեց, որպեսզի եվրոպացիներն իմանան ողջ ճշմարտությունը հարավօսական հակամարտության մասին, որպեսզի «հաղթահարվի միջազգային ապատեղեկատվությունը, որը եղել է, և իրականությունից հեռու է տարել հասարակական կարծիքը»²⁰⁹: Նրա խոսքերով, Իտալիայի ղեկավարությունն ստացել է այդ տեղեկատվությունը:

2008թ. սեպտեմբերին Սլովենիայի, Չեխիայի և Լատվիայի վարչապետերը հանդես եկան հոգուտ ԵՄ-ին հարավկովկասյան երկրների ինտեգրման, սակայն Սլովակիայի վարչապետ Յ. Յանշան դեմ արտահայտվեց ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելուն՝ նախընտրելով պաշտպանել Ֆրանսիայի նախագահի մոտեցումը: Նման դիրքորոշում որդեգրեց նաև Իսպանիայի վարչապետ Խ. Լ. Ռ. Սապատերոն:

ԱՄՆ Սենատը, չնայած հակամարտության շրջանում այդ երկրի որդեգրած չափազանց կոշտ դիրքորոշմանը, ևս քննադատեց «ՌԴ-ի կողմից անհամաչափ ուժի կիրառումը», սակայն ընդունեց, որ ԱՄՆ-ի և ՌԴ-ի ընդհանուր շահերը ժամանակի ընթացքում կարող են նպաստել նրանց

207 В интересах Запада продолжать сотрудничество с Россией – Берлускони. Новости-Армения. 1 сентября 2008г.

208 Глава МИД Италии считает Россию незаменимым партнером Запада, Новости-Армения, 3 сентября 2008г.

209 Мир должен узнать реальные факты о конфликте в Южной Осетии – Берлускони, Новости-Армения. 6 ноября 2008г.

միջև հարաբերությունների բարելավմանը: Նոյեմբերի 3-ին ԱՄՆ-ի նոր նախագահին իր ուղերձում ԵՄ-ը կոչ արեց հաշվի առնել ՌԴ-ի տնտեսական վերականգնումը և ակտիվացնել դիվանագիտական շփումները՝ հակամարտության ռիսկից խուսափելու համար:

ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցներ չընդունեց նաև ԵԽՆԿՎ-ը՝ 114 «կողմ», 20 «դեմ» և 10 «ձեռնպահ» ձայներով հաստատելով ռուսական պատվիրակության լիազորությունները:

Ակնհայտ է, որ ԵՄ-ի միջամտությունն այս հակամարտությանը մեծապես նպաստեց ռազմական գործողությունների հետագա ծավալման կանխարգելմանը: Այսօր ԵՄ-ը հակամարտության գոտում ունի իր առաքելությունն ու հատուկ ներկայացուցիչը: Եվ, չնայած ԵՄ-ը մեծ դեր խաղաց Վրաստանի տարածքից ռուսական զորքերի դուրսբերման հարցում, հատկանշական է նրա ընդգծված զգուշավորությունը ՌԴ-ի հանդեպ: Չնայած իր մի շարք անդամների և Վրաստանի կոչերին, ԵՄ-ը չդիմեց «կոշտ» միջոցների, որոնք կարող էին քիչ անց ռազմավարական կոպիտ սխալի վերածվել հենց ԵՄ-ի համար:

ԵՄ-ի կողմից կարևորվող տարածաշրջանային մյուս հակասությունը վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին: Խնդիրը նրանում է, որ, մի կողմից, թուրք-հայկական սահմանի բացումը և հարևան երկրների հետ բնականոն հարաբերությունների հաստատումը հանդիսանում են ԵՄ-ին թուրքիայի անդամակցության պայմաններ, իսկ, մյուս կողմից, Հայաստանի երկկողմ շրջափակումը թուրքիայի և Ադրբեջանի կողմից էապես խոչընդոտում է ԵՄ-ի տարածաշրջանային նախաձեռնությունների լիարժեք իրագործմանը, իսկ որոշ դեպքերում, ԼՂ հակամարտության առկայության հետևանքով, վտանգում է ներգետիկ և հաղորդակցային նախագծերի իրականացումը:

Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման որոշ հեռանկարներ բացեց Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի սկսած «ֆուտբոլային դիվանագիտությունը», որին ի պատասխան նրա թուրք գործընկերը ոչ միայն ժամանեց Հայաստան՝ դիտելու երկու երկրների ֆուտբոլային թիմերի խաղը, այլև նախաձեռնեց տարածաշրջանային համագործակցության նոր ծրագիր՝ Կովկասյան կայունության և անվտանգության հարթակը: Այս երկու նախաձեռնություններն արժանացան ԵՄ-ի և նրա առանձին անդամ-երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների դրական գնահատականին: Այդ արձագանքն առավել հստակ դարձավ 2009թ. ապրիլի 22-ին Շվեյցարիայի միջնորդությամբ հարաբերությունների կարգավորման

«Ճանապարհային քարտեզի» վերաբերյալ ձեռք բերված հայ-թուրքական համատեղ հայտարարությունից հետո: ԵՄ-ի ներկայացուցիչներն իրենց դրական վերաբերմունքն ու աջակցության պատրաստակամությունն են հայտնել ինչպես ՀՀ նախագահի, արտգործնախարարի ու այլ պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում, այնպես էլ տարատեսակ բազմակողմ քննարկումների ժամանակ: Այս առումով հատկանշական է նաև Հայաստան-ԵՄ խորհրդարանական հանձնաժողովի համանախագահ Մարի Անն Իզլեր Բեգենի հայտարարությունը հայ-թուրքական հարաբերությունների շուտափույթ կարգավորման մասին, թե «մենք ուզում ենք, որ դա ամեն գնով տեղի ունենա, նույնիսկ պատրաստվել էինք գնալ սահման եւ մեր գործընկերների հետ հանդիպել սահմանի մյուս կողմում, սակայն մեզ խորհուրդ տվեցին առավել զուսպ լինել, թողնել՝ հայ-թուրքական բանակցություններն իրենց հունով գնան, ապա այդպիսի քայլեր անել»:²¹⁰ Նրա խոսքերով, պետք է ուսումնասիրվեն նաև սահմանի բացման սոցիալական եւ տնտեսական հետեւանքները, որի արդյունքները հետագայում պետք է ներկայացվեն ԵՄ-ին: «Սահմանի բացումը պարտադիր է, որևէ հաշվարկ չի կարող հիմնավորել սահմանի փակ լինելը, սահմանն այսօր միակողմանի փակ է առանց տրամաբանական որևէ հիմքի»:²¹¹

Թուրքիային Հայաստանի հետ սահմանի բացման կոչ է արել նաև Հարավային Կովկասում ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչ Պ. Սեմմեբին, ում հանդգնամք, սահմանի վերաբացումը կհաշտեցնի երկու հարևան պետություններին ու կամրապնդի տարածաշրջանային կայունությունը:²¹² ԵՄ ԸԱԱՔ հարցերով Բարձրագույն ներկայացուցիչ Խ. Սոլանան, իր հերթին, կարծում է, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման միտումը հարկ է օգտագործել նաև արցախյան հիմնախնդրի կարգավոր-

²¹⁰ European Parliament Looking forward to normalization of Armenian-Turkish relations, <http://www.armtown.com/news/en/azg/20090409/2009040903/>

²¹¹ European Parliament Looking forward to normalization of Armenian-Turkish relations, <http://www.armtown.com/news/en/azg/20090409/2009040903/>

²¹² European Union calls on Turkey to normalize relations with Armenia, <http://www.panorama.am/en/politics/2009/04/15/em/>

ման համար:²¹³ Նույն համոզմանն է նաև Ֆրանսիայի արտգործնախարար Բ. Քուշները:²¹⁴

Ընդհանրապես, ԵՄ-ի պաշտոնական շրջանակները մշտապես հանդես են եկել տարածաշրջանային հակասությունների շուտափույթ և երակարածամկետ կարգավորման օգտին՝ նշելով, որ փակ սահմաններն ու հակամարտությունները ստվերում են Հարավային Կովկասի նշանակությունը ԵՄ-ի համար: Միաժամանակ, ինչպես մի առիթով նկատել է Պ. Սեմներին, այս հարցում ԵՄ-ը շեշտադրում է ՌԴ-ի հետ համագործակցության ամրապնդումն ու հարևանության զարգացումը, քանի որ «տարածաշրջանում ԵՄ-ը և ՌԴ-ն ունեն ընդհանուր շահեր, և, չնայած կողմերի միջև առկա դժվարություններին ու տարածայնություններին, կա Հարավային Կովկասում դիրքերի զարգացման մեծ ներուժ, ինչը շահավետ կլինի ԵՄ-ի, ՌԴ-ի և տարածաշրջանի բոլոր երկրների համար»:²¹⁵

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ Հարավային Կովկասի նկատմամբ ուժային կենտրոնների, այդ թվում նաև ԵՄ-ի ուշադրությունն աճում է հատկապես այն ժամանակ, երբ այս գոտում տեղի են ունենում նրանց ռազամավարական շահերին սպառնացող գործընթացներ: Հարավային Կովկասի ծայրամասային տեղադրությունը, մի կողմից, խուսանավելու որոշակի հնարավորություններ է տալիս տեղի երկրներին, մասնավորապես, տարածաշրջանային գործընթացների սուբյեկտների վերածվելու հարցում, իսկ մյուս կողմից, ստեղծում իրական վտանգ, որ Հարավային Կովկասը կվերածվի ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Թուրքիայի, Իրանի և արևմտաեվրոպական առաջատար երկրների ռազմավարական շահերի բախման թատերաբեմ՝ այդպես հարավկովկասյան երկրներին զրկելով խուսանավելու հնարավորությունից և նրանց տարանջատելով ըստ շահերի բևեռների:

Հարավային Կովկասում ԵՄ-ն ունի «ազնիվ միջնորդի» համբավ, ազդեցության տարբեր փափուկ և կոշտ լծակներ, ինչպես նաև Եվրոպային առավել խորն ինտեգրելու մեխանիզմներ: Բայց քանզի մոտ տարիներին

²¹³ Солана предлагает использовать армяно-турецкие отношения для решения карабахской проблемы, <http://www.armtoday.info/default.asp?Lang= Ru&NewsID=10585&SectionID=0&RegionID=0&Date=04/23/2009&PagePosition=3>

²¹⁴ Kouchner: Armenian-Turkish dialog vital for peace in Caucasus, <http://www.panarmenian.net/news/eng/?nid=30847>

²¹⁵ ЕС готов участвовать и содействовать в реализации турецкой «Платформы безопасности» на Кавказе – спецпредставитель ЕС, <http://www.armtown.com/news/ru/noa/20090516/42074943>

ԵՄ-ին հարավկովկասյան երկրների անդամակցությունն անհրապակ է, ԵՄ-ը պետք է գտնի նոր մոտեցումներ իր օժանդակության և այն որպես ազդեցության միջոց օգտագործելու հիմնավորման համար: Այդպիսի հնարավորություն տալիս է, օրինակ, ԵՀԲ-ը, որը թույլ է տալիս ամրապնդել ԵՄ-ի դերակատարությունը, հատկապես, եթե հակամարտությունների խաղաղ կարգավորումն ամրագրվի որպես պարտավորություն: Բայց ակնհայտ է, որ, ինչպես արդեն նշվեց վերևում, մինչ այժմ ԵՄ-ը պատրաստ չի եղել ստանձնել լուրջ պատասխանատվություն հարավկովկասյան տարածաշրջանում՝ փորձելով սահմանափակվել միայն «եվրոպական» չափանիշներին վերափոխումների համապատասխանության հսկողությամբ: Եթե ԵՄ-ը չկարողանա իրագործել անվտանգ հարևանության ռազմավարություն, ապա տարածաշրջանում նրա նկատմամբ վստահությունն ԱՄՆ-ի և ՌԴ-ի համեմատությամբ կթուլանա: Ավելին, եթե հարավկովկասյան հակամարտությունները շարունակեն խորանալ, ապա ԵՄ-ը կարող է անընդունակ գտնվել իր հարևանների միջև պատերազմները կանխելու գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականությունը ներառում և զուգորդում է նրա առաջին և երկրորդ հենասյուների մեխանիզմները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ԵԸ-ի կողմից իրականացվող ծրագրերը, իրենց տնտեսական և իրավական բնույթից զատ, ԵՄ-ի համար ունեն առանցքային աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական բովանդակություն: Դրա վառ օրինակը հանդիսանում են ԳՀՀ-երը, ՏԱՍԻՍ-ը, ԵՀԲ-ը, «Արևելյան գործընկերություն» նախաձեռնությունը, որոնց նպատակը մասնակից-երկրների տնտեսական և քաղաքական համակարգերի զարգացմանն աջակցությունն է, ինչպես նաև ՏՐԱՍԵԿԱ և ԻՆՕԳԵՅԹ միջտարածաշրջանային էներգետիկ-հաղորդակցային ծրագրերը: Դրանք բոլորը, լինելով ԵԸ-ի կողմից մեկնարկված և վերահսկվող ծրագրեր, խիստ մեծ կարևորություն են ստացել նաև ԵՄ-ի անվտանգության քաղաքականության ոլորտում, քանզի դրանց խնդիրը կասայան և կոնտրոնաասիական էներգապաշարները Եվրոպա տեղափոխելն է և, այդ տարանցման անվտանգության նպատակով, ԵՄ-ին հարևան տարանցիկ տարածաշրջաններում կայունության ապահովումը:

Ընդհանուր առմամբ, վերջին շրջանում ԵՄ ԸԱԱԲ-ի զարգացմանը զուգահեռ ավելի է ակտիվանում նաև ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականությունը: Հաշվի առնելով Կասայան ավազանի նավթային ու գազային պաշարների, ինչպես նաև Հարավային Կովկասի տարանցիկ հնարավորությունների նկատմամբ մոտ ապագայում Եվրոպայի հետաքրքրության անխուսափելի աճը, սկսում են ակտիվ հարավկովկասյան քաղաքականություն իրականացնել նաև ԵՄ-ի առաջատար պետությունները: Սակայն, ինչպես արդեն նշվել է, Հարավային Կովկասը ոչ մի ռազմավարության մեջ ինքնանպատակ չի եղել, և այստեղ պետք է խոսվի առավել մեծ՝ Սևծովյան-Կասայան տարածաշրջանը հսկելու մասին: Այսինքն, Հարավային Կովկասը ԵՄ-ի անվտանգության ռազմավարության շրջանակներում հանդես է գալիս որպես Սևծովյան-Կասայան էներգետիկ տարածաշրջանի միկրոտարածաշրջան, որը վերջին տարիներին գնալով աճող նշանակություն է ստացել էներգակիրների ներկրումից մեծապես կախված ԵՄ-ի համար: Պատմական «Մետաքսի ճանապարհի» վերակենդանացումը ևս ԵՄ-ի շահերից է բխում, քանզի դա կապահովի ուղղակի առևտրային կապ Ասիայի հետ: Այդ իսկ պատճառով, տարածաշրջանը

կարող է հանգուցային դեր խաղալ՝ որպես բնական կամուրջ Եվրոպայի և Ասիայի միջև:

Այս համատեքստում Հարավային Կովկասը վերածվում է Կենտրոնական Ասիա-Կասպից ծով-(Մերձավոր Արևելք)-Սև ծով-Եվրոպա մայրուղու ռազմավարական խաչմերուկի: Հարավային Կովկասի նշանակությունը ԵՄ-ի համար պայմանավորված է այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են աշխարհագրական անմիջական հարևանությունը, տարածաշրջանի էներգետիկ (Բաքու-Թբիլիսի-Սուփսա, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղերը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում, Իրան-Հայաստան և «Նաբուկո» գազատարերը) և տարանցիկ (Բաքու-Թբիլիսի-Ախալքալակ-Կարս, Իրան-Հայաստան) հնարավորությունները, հատկապես կասպյան, կենտրոնաասիական և մերձավորարևելյան տարածաշրջանների էներգետիկ պաշարների արդյունահանման և տեղափոխման համար: Բայց դա առայժմ պատճառ չի դարձել, որպեսզի ԵՄ-ը Հարավային Կովկասի նկատմամբ ընդունի հատուկ ռազմավարություն, ինչպիսիք կան Միջերկրծովյան տարածաշրջանի, Մերձավոր Արևելքի, անգամ՝ ՌԴ-ի և Ուկրաինայի նկատմամբ:

Տարածաշրջանի աշխարհատնտեսական նշանակությունը ԵՄ-ի համար ևս ակնհայտ է: Տարատեսակ ծրագրերի միջոցով ԵՄ-ը կարող է խթանել տարածաշրջանային և միջտարածաշրջանային համագործակցությունը Հարավային Կովկասում, ինչն էլ այն հրապուրիչ կդարձնի բիզնեսի և ներդրումների համար: ԵՄ-ի ակտիվ ներգրավվածությունը կարող է փոփոխել նաև տարածաշրջանային ուժային հավասարակշռությունը և փոքրացնել Հարավային Կովկասի անհամաչափ կախվածությունն արտաքին դերակատարներից, մասնավորապես, ՌԴ-ից:

Մյուս կողմից, տարածաշրջանի էներգետիկ և տարանցիկ հնարավորություններից լիարժեք և անխափան օգտվելու համար ԵՄ-ը պետք է շահագրգռված լինի տարածաշրջանային անվտանգության և կայունության ամրապնդման մեջ: Բայց ԵՄ-ի հարևանությամբ երկարաժամկետ կայունության և խաղաղության ապահովումը ենթադրում է և՛ ԵՄ-ի ակտիվ ներգրավումը տարածաշրջանային հակամարտությունների, ներպետական և միջպետական տարաձանությունների կարգավորմանը, և՛ աջակցությունը տարանցիկ երկրների տնտեսական զարգացմանը, քաղաքական համակարգերի ժողովրդավարացմանը (ժողովրդավարական խաղաղություն):

Դա, իր հերթին, ԵՄ-ի անվտանգության քաղաքականության առաջին պլանի վրա է մղում տարածաշրջանային կայունության ապահովման խնդիրը, քանզի հակամարտությունները և միջպետական հակասությունները կարող են էապես խոչընդոտել վերը նշված ծրագրերի իրականացմանը: Այս համատեքստում տարածաշրջանում «սառեցված հակամարտությունների» կարգավորումը վերածվում են ԵՄ-ի առաջնային խնդիրների, քանզի դրանց «վերակենդանացումը» կվտանգեն և՛ էներգետիկ ու հաղորդակցային նախագծերի իրականացումը, և՛ կդառնան դեպի Եվրոպա տեղի բնակչության մեծ արտահոսքի պատճառ: Բացի դրանից, տարածաշրջանի աշխարհագրական տեղադրությունը խիստ նպաստավոր է նաև զենքի և թմրանյութերի ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցագործության համար, որոնք պահանջում են ԵՄ-ի լրացուցիչ ուշադրությունը տարածաշրջանի խնդիրների նկատմամբ: Տարածաշրջանի կարևորությունն ընդգծվում է նաև այն առումով, որ ԵՄ-ը հավակնում է իր ԸԱԱՔ միջոցով առաջատար դեր ստանձնել համաշխարհային թատերաբեմում:

Հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման հարցում ԵՄ-ի շահագրգռվածությունը կարելի է ողջունել: Սակայն պետք է հաշվի առնել նաև այն խոչընդոտները, որոնց կբախվի ԵՄ-ն ակտիվ ներգրավվելու պատճառով: Տարածաշրջանի խնդիրները բավական բարդ ու դժվար լուծելի են, իսկ եթե ԵՄ-ը հրաժարվի զբաղվել նաև այդ խնդիրներով, ապա դա միանշանակ կազդի նրա նկատմամբ վստահության վրա: Տարածաշրջանային հակամարտությունների հետ առնչվող երկու կարևորագույն դերակատարներ են հանդիսանում ԱՄՆ-ը և ՌԴ-ը, սակայն բոլորովին էլ հիմնավոր չէ պնդել, որ Ղարաբաղյան հակամարտության շուտափույթ և արդարացի կարգավորումը գտնվում է նրանց հարավկովկասյան քաղաքականության օրակարգում: Այդուհանդերձ, ԵՄ-ի համար տարածաշրջանի նշանակության մեծացումն ախուսափելի է դարձնում ԵՄ-ի ուղղակի շահագրգռվածությունը հակամարտությունների կարգավորման հարցում:

Սա ենթադրում է, որ Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի շահերը պետք է ներառեն «սառեցված հակամարտությունների» վերջնական կարգավորումը, թմրանյութերի, զենքի անօրինական շրջանառության, մարդկանց թրաֆիքինգի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, անօրինական իմիգրացիան: Բացի դրանից, տարածաշրջանն աչքի է ընկնում տարատեսակ արտատարածաշրջանային դերակատարնե-

րի առկայությամբ: Մի կողմից, հարևան երկրների, մյուս կողմից, արտաքին ուժերի շահերի մրցակցությունն էապես դժվարացնում են տարածաշրջանում կայունության հաստատումը: Աշխարհագրական դիրքի շնորհիվ Հարավային Կովկասը վերածվել է ապրանքաշրջանառության և կասսայան էներգակիրների տարանցման բնական միջանցքի, իսկ դրա անկայունացումն ուղղակիորեն սպառնում է ԵՄ-ի անվտանգությանը: Միաժամանակ, ակնհայտ է, որ տարածաշրջանի կայունության գրավականներից մեկն էլ հենց տեղի երկրների համագործակցության զարգացումն է:

Այս գործոններն առաջիկայում ստիպելու են ԵՄ-ին ակտիվացնել իր քաղաքականությունը Սև ծով-Կովկաս-Կենտրոնական Ասիա ուղղությամբ և ձեռք բերել էներգակիրների այլընտրանքային աղբյուրներ ու դրանց տարանցման ուղիներ: Դա, իր հերթին, ստիպելու է ԵՄ-ին կոնկրետացնել իր ռազմավարական շահերը մեծ տարածաշրջանում և էներգիայի աղբյուրների նկատմամբ ռազմավարական հսկողություն հաստատելու համար պատրաստվել լուրջ մրցակցության ու համագործակցության մյուս ուժային կենտրոնների՝ ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իրանի հետ:

Այդուհանդերձ, հաշվի առնելով ՌԴ-ի ազդեցության լծակները կենտրոնաասիական և հարավկովկասյան երկրներում, կասսայան էներգապաշարների արդյունահանումը և դրանց տեղափոխումը Եվրոպա չեն կարող իրականացվել առանց ՌԴ-ի հետ համագործակցության, ինչպես նաև այդ գործում ռուսական ընկերությունների մասնակցության: Ասվածը վերաբերում է նաև Եվրոպա-Սև ծով-Կովկաս-Կենտրոնական Ասիա մայրուղով բեռնափոխադրումների իրականացմանը: Բացի դրանից, հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ այդ «այլընտրանքային» նախագծերն իրենց էներգատարողությամբ կարող են «մրցակցել» ռուսականի հետ միայն Իրանի, ապա, հետագայում, նաև մերձավորարևելյան էներգապաշարների ներառման դեպքում, ինչպես դա նախատեսվում է «Նաբուկո» նախագծով: ՌԴ-ի հետ ակտիվ երկխոսությունը, նույն պատճառաբանությամբ, կպահանջվի նաև հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման գործում:

ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության վրա էական ազդեցություն ունեցող գործոնների թվում հարկ է հիշատակել նաև նրա առանձին երկրների, ինչպես նաև տարածաշրջանային և արտատարածաշրջանային այլ դերակատարների շահերը: Հարավային Կովկասը հանդիսանում է համաշխարհային գրեթե բոլոր ուժային կենտրոնների՝ ԱՄՆ-, ՌԴ-ի և ԵՄ-ի, ինչպես նաև տարածաշրջանային ազդեցիկ տերությունների՝ Թուր-

քիայի և Իրանի շահերի համատեղման ու մրցկացության հանգուցակետ, և, շնորհիվ իր ռազմավարական տեղադրության, կարևոր տեղ է զբաղեցնում նրանց անվտանգության քաղաքականության մեջ: Սա, մի կողմից, պատճառ է դառնում տարածաշրջանային հիմնախնդիրների արտաքին գործիքայնացման, երբ ներտարածաշրջանային խնդիրներն արտաքին ուժերն օգտագործում են միմյանց և հարավկովկասյան երկրների հետ հարաբերություններում, մյուս կողմից, հնարավորությունների նոր դաշտ է ստեղծում հենց տեղի երկրների համար՝ իրենց աշխարհառազմավարական նշանակությունը սեփական շահերին համապատասխան օգտագործելու առումով: Սակայն վերջին հանգամանքն իրատեսական և արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, երբ տեղի երկրները հարաբերությունները միմյանց և արտաքին աշխարհի հետ կառուցեն ոչ թե առկա տարածայնությունների, այլ տարածաշրջանային ընդհանուր շահերի հիման վրա:

